Մի քիչ լուսաբանել մարդի համար դիւրին է տեսնելու թէ որչափ անուղղութեան ապացոյց է, որ տիտուէնեան խաւարի մէջ թաղված մի հայաբնակ քաղաքի մէջ գտնվին ուսում օտարաքաղաքացի հայ պաշտօնեաներ և սրանք ամենայն անսարքութեամբ և անզգայութեամբ դիտեն իրենց հանապազեայ այդ մնալը, տիւրը վիճակը։ Ձիշդ այդ վիճակի մէջ էր և Արտուին, որի ուսում հաստատչին պաշտօնեայք իրենց ազգային տգիտութեան մասին կամ ոչինչ չէին գործել և կամ շատ անկատար։ Նայց այս վերջին օրերս մի ընդհանուր ազգասիրութեամբ բորբոքել, գրքա ձեռնարկեցին տեղական հայ-լուսաւորչական ուսումնարանի բարեկարգման մեծ գործին։ Կարելի աւելորդ Գրիգորիս արքեպսկոպոսն ուղարկված դասատու արդէն յատնահատած վիճակի մէջ էին իրենց նեղբական և գաղտնական անսիրթեթ դրութեամբ, ժողովրդեան մեծ մասը բարձրաձայն արրատնչներ էր սկսել բառնալ, որով և գործին այնպիսի գոյն կատարին, որ մօտ ժամանակին, դասատու, կարգ, ուսումնարան, հոգաբարձու ամենայն ինչ յօդս պիտի ցնդէր։ Ահա ձիշդ այդ միջոցին օգնութեան հասատատն ձեռն կարկառեց ա. Կարապետ Կամսարական իր խմբովը։ Մեծ, արտաքոյ կարգի ժողով գումարեցաւ Սահակեան ուսումնարանի հիւրանոցը։ Ցնդհանս հայ-լուսաւորչականաց բոլոր ունևոր, հասկացող մասը ներկայ էին։ Ա. Կամսարական լսաղձալով գործն ի հիմանց մաքրել, դադրեցնել ուղեց նախ այն խրատութիւնը, որ երկու անհաշտ կուսակցութիւններ էր յառաջ բերել ժողովրդեան մէջ, և պատգամս ունենալով երկու քահանաներից իւրաքանչիւրը կը զրկէր հասարակութիւնը նոյն իսկ իր կրօնական պարտքը կատարելու։ 5 ժամեան շարունակեալ նստին մէջ կարողացաւ խաղաղացնել այդ աղտակործան պատակաութիւն, սիրալի հաշտութիւն ձգելով միմեանց մէջ։ Այս մեծ գործը յաջողացաւ կատարելէն ետև նոյնպիսի բազմաթիւմար մի ժողով գումարեց հետևեալ գիշերը։ Այս նստի մէջ ա. Կամսարեան և իր օգնական հայ պաշտօնեայք իրենց բոլոր ճարտարութիւնն ու ազգասիրական զգացումներ գործածեցին ուսումնարանի այդ անկարգ դրութենէն ազգի ներկայի և ապագայի մասին ծագելիք վտանգները բացատրելու նպատակով։ Այդ վտանգաւոր վիճակը չատ լաւ ըմբռնելով փոյթ դարմանելու համար։ Ցնդացի ժողովականք միաբերան չնորհակալութիւն յայտնեցին նոցա, որ իրենց ուսումնարանի ողբալի դրութեան բարեկարման աշխատութիւն յանձն կառնուն։ Յետոյ, ա. Կամսարական, մի կանոնաւոր նախապատրաստական ուսումնարանի համար վարչական և ուսումնական կարգերը մի առ մի իրենց յիշելով, նրանց հաստատութիւնն առնելէ, տարակոյսներ, պատճառները բացատրելէ ետք, գրի առնել տուաւ ախալցխայի ս. Աբրահամ խաղաղարդեանին։ Լնտրվեցան երեք հոգաբարձք, որոնց երկուսը տեղացի են, միւս երրորդը ալէքսանդրապօլցի, ա. Եղիա Թորոսեան։ Քարտուղար որոշվեցաւ վերոյիշեալ ա. Խաղաղարդեան։ Երեք հոգաբարձուների բացակայութեան, կամ հիւանդութեան կամ ո և է այլ միջոցին նրանց պաշտօնը առանձնելու համար օգնական հոգաբարձուներ ընտրվեցան հայազգի ծառայողներէն պ. պ. վահան Ամիրխանեան, Աւետիս Նազարեթեան և Սարգիս Անանիկեան։ Գործը մնացած էր միայն մի տեսչի ընտրութեան վրայ։ Ամենի աչքերը արդէն ուղղված էին պ. Կամսարականի վրա, որ ինչպէս ըսինք, այս զանազան բարեկարգութեանց գլխաւոր չարժառիթն և գործիչն էր։ Առանց մի փոքրիկ ժխտական ձայնի, Արտուինի Սահակեան ուսումնարանի տնօրէն ընտրվեցաւ պ. Կարապետ Կամսարական, որ չը ղացաւ նաև իր հաւանութիւնը հաստատել գոյդ։ Այդ ամեն կարգադրութիւններէն ետև միաձայն որոշվեցաւ մի նամակ գրել առաջնորդ Ագաթանգեղոս արքեպսկոպոսին, որ ուղարկէ զայն թեմական վերատեսուչ պ. Պետրոս Պետրոսեանի քննութեան և հաստատութեան։ Ուշ էր ժամանակը, երբ ցրվեցան Արտուինի Սահակեան ուսումնարանի բարեգործ աշխատաղքը։ Չեռնելով գիշերի նամաօրինակ նստի մէջ. Նորընծայ քարտուղարը ներկայացուց ժողովին, ուսումնարանի կանոնադրութեան, ուսմանց ծրագրի, դասատութեան ժամերու և առաջնորդ եպիսկոպոսի նամակի ապիտակ օրինակները, որոնց ստորագրեցին Թագաւոր խորհրդի նախագահ տէր Պետրոս քահանայ Նազիան, Նորա անդամք և հոգաբարձք։ Այդ, այդ կարգադրութիւնները բոլորը ուղարկված են այժմ Ագաթանգեղոս արքեպսկոպոսին ի հաստատութիւն Նորին արքեպսկոպոսութեան և թեմական տեսչին։ Ցոյս ունենք թէ արքեպս. Գրիգորիս և թէ պ. Պետրոսեանց չեն գանայ այդպիսի ուրախալի մի ձեռնարկին իրենց հզօր աջակցութիւնն։

Այժմիկ մենք գրեցինք, ուրախանալով ազգային մի ուսումնարանի կանոնաւորութիւն ստանալու և ապագայի յոյսի վրա, իբրև մի ճշմարիտ անգամ հայ ազգի, բայց իբրև կաթոլիկ, սաստիկ վշտակիր ենք, որ երբ 800 հոգիէ բաղկացեալ լուսաւորչական հասարակութիւնն կը ջանայ ունենալ իր կանոնաւոր ուսումնարան, 3000-էն աւելի կաթոլիկք, որոնք լուսոյն նախնական վիճակի մէջ են, դժնդակօրէն կը համարեն իրենց հին տիրացուական գպրոցները, փտած ոճերովն ու կարգադրութիւններովը. մանաւանդ նրանք, որոնց ձեռքն է ժողովրդի կառավարութեան սանձերն իրենց մի քանի աւելորդ և անկատար կարգադրութիւններուն տգէտ ժողովրդեան մէջ ընդունելութիւն գտած չը լինելուն վրա տրտնջելով, նոքա աշխատողներուն ալ վհատեցուցիչ կերպով կը յիշեցնեն թէ «աշխատեցէք, դուք ալ շատ կը ձանձրանաք», փոխանակ անոնց փրկաբեր ցանկութեան մասնակցելով միասին գործ գլուխ հանելու։ Ք. Կամսարական այնչափ ամուսնասիրտ անձ է, որ լուսաւորչականաց ուսումնարանը կատարի գնդէին յետոյ իր ուշադրութեան նեխք առած է մեր կաթոլիկաց անկարգ ուսումնարաններ, յայտնելով որոշակի անդրական եպիսկոպոս Զաքարեան գերապայծառին, որ ինքն և իր խումբը պատրաստ են մեծ սիրով և ուրախութեամբ չը խնայել ոչինչ ճիգ և աշխատութիւն մեր ուսումնարանաց բարեկարգութեան։ Ուստի, մենք յանկարծակի կը խնդրենք Արտուինի հայ-կաթոլիկ հասարակութենէն, որ բաւական համարի այսչափ յուսահատութիւնը և լրջօրէն ձեռք առնու իր ուսումնարանաց բարեկարգութեան խնդիրը։ Համոզված եմ, որ, երբ բոլոր հայ ազգը գրաղեալ է իր ուսումնարանները նոր ոճին, նոր կարգաց փոխելու և նրա ազգութիւն ամենեցնելու աղդին մէջ, Զաքարեան գերապայծառ անուշադիր չը թողուր հայ-լուսաւորչական պաշտօնէից խնդիրը և առաջարկութիւնը, ու մեր մօտ ժամանակներում, կունենանք նաև մեր կաթոլիկ ուսումնարանաց կանոնաւոր կանոնադրութիւն, ծրագիր և նրանց ճշգրիտ գործադրութիւն։

Հետաքրքիր կը թուսանամ հաղորդել ձեզ այս մասին լինելիք ի և իսկ կարգադրութիւն։

Արտաշէս Ջ. Սարուխանեանց

Fonds A.R.A.M

և ի հարկէ չը վեասել էլ այնպիսի հիմնարկութեան, որին չէք համակրում։

Ահա բոլորը ձեզ խորթ է երևում, որովհետև ձեր մէջ ոչինչ հասատատ և որոշ չը կայ, որովհետև դուք միմեանց մէջ կռւում էք, հաշտւում էք, նորից կռւում էք և նորից հաշտւում, այսօր միասին գործում էք, վաղը միմեանց դէմ ինտրիգաներ անում, այսօր մի բան առեղծում էք, վաղը նոյն առեղծածին վեասում էք, նրան կատարելապէս քանդում էք, կրքից, առեղծութիւնից, նախանձից, անձնասիրութիւնից, փառասիրութիւնից, անձնազոհութիւնից զրկուած, որովհետև դուք չունէք ոչինչ իդէալ, ոչինչ որոշ սրտագրաւ ձեր կեանքի մէջ, ոչինչ profession de foi, ոչինչ դրօշակ, որին ծառայէք, ոչինչ կատակցութիւն, որին պատկանիք։

Ձեր ուղեցոյց միայն մի բան է. առեղծութիւն դէպի ամէն նորը, առաջադէմը, ապառամիտը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Մօզդոկ, 21 յունվարի

Ցարդս խնդրադիր. խնդրեմ Մօզդոկի հայոց թատերասիրաց խմբի այս փոքրիկ հաշիւը հնարելի կարգէք ձեր պատուական լրագրի մէջ։

Մօզդոկի հայոց թատերասիրաց խումբը բարեգործական նպատակով անցեալ 1881 թ. դեկ. 30-ին և ներկայ 1882 թ. յունվարի 10-ին պ. Գաբրիէլ Գանջումեանցի տան առջև երկու ներկայացում էր ներկայացրել՝ «Պէհլա» կատակերգ երկը պարապատում. հեղ. պ. Գ. Սունդուկեանցի, «Չքնաղացոյցն», կատակերգութիւն մի արարուածով. հեղ. պ. Գ. Սունդուկեանցի, «Պիչերման ասորը խէր է», վոդեվիլ մի արարուածով, հեղ. պ. Գ. Սունդուկեանցի, «Պալալ Վադո» հեղ. հանդուցեալ փաշինեանցի և «Պեխերով կին», կատակերգութիւն մի արարուածով, հեղ. Մելքոնեանի։

Առաջին ներկայացման ծախքը եղել է 77 ր. 97 կ., արդիւնք 187 ր. 50 կ. ծախքը դուրս գալով մնացրից, առաջին ներկայացումից զուտ արդիւնք մնում է 109 ր. 53 կ.։ Երկրորդ ներկայացմանը ծախք եղել է 117 ր. 41 կ., արդիւնք 189 ր. 50 կ., ծախք մուտքից դուրս գալով մնում է զուտ արդիւնք երկրորդ ներկայացումից 72 ր. 9 կ.։ Առաջին ներկայացման 109 ր. 53 կ. զուտ արդիւնքը ևս աւելացնելով սրա վրա, երկու ներկայացման զուտ արդիւնքը կը լինի 181 ր. 62 կ.։ Սրա հետ զուգաբերով նաև նոյն խմբի նախկին ներկայացումներից մնացած 30 ր. զուտարդը, կը լինի 211 ր. 62 կ.։ Այս զուտարդը խումբը իր անդամներից մէկի անունով ձգելու է բանկը չտնեցողութեան մինչև պ. Գեորգ Գանջումեանցի ծախքով կատարուելիք օրիորդաց դպրոցի վերջանալը, որի դահլիճը յարմարցրած է լինելու թատերական ներկայացումների համար։ Խումբը գիտատրութիւն ունի այս մնացած զումարը, և կրկին տալիք ներկայացումներից գոյացած զուտարդը գործ դնել նոր դահլիճում մի յարմարաւոր ու մշտական բեմ կանդնեցնելու, որպէս զի խմբի համար տպա միշտ լինի այլ և այլ բարեգործական նպատակներով շատ շատ ներկայացումներ տալը։ Աւելորդ չենք համարում ասել, որ ներկայ ծախքերի մեծագոյն մասը արուած են բեմի չքեղութեան և հանդերձների համար, որոնք մնում են նոյն բեմի սեփականութիւն։

Մօզդոկի հայոց թատերասիրաց խումբը պարտք է համարում իր ի սրտէ շնորհակալութիւնը յայտնել պ. Գաբրիէլ և Շուշանիկ Գանջումեաններին, որոնք չը միջոցին իրանց դահլիճը ներկայացումների և կրկնութիւնների համար։ Ցարգելի սիմինաց՝ Ա. Յովհաննիսեանցին, Վ. Լիսիցեանցին, Գ. Գանջումեանցին և օր. Մ. Մահտեսեանցին, որոնք չը նայելով ժողովրդի առևտրատոհմութեանց համակրելուն բեմ դուրս գալ։ Լուսանկար պ. Մկ. Յովհաննիսեանցին, որը չքեղացրեց մեր բեմը մի հիանալի անուռաուցիկ տեսարանով։ Շնորհակալութիւն վերջապէս պ. Տ. Գալֆայեանին, որը մեր խնդիրքով Նկատելիօղլից եկաւ Մօզդոկ մեզ հետ ի միասին ներկայացում տալու։

Նախագահ թատերասիրաց խմբի Գ. Մելքոնեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ղզլար, 10 յունվարի

Ազգի մտաւոր կեանքի մէջ լրագրի տատնամեայ գոյութիւնը ունի մի խոշորագոյն նշանակութիւն. սա տպագրեալ է մտաւոր աճեցողութեան ժողովրդի։ Որովհետև թանգ է ազգի մտաւոր յառաջդիմութիւնը, եթե չեն կարող տեսարկներ լինել և մտաւորի յառաջդիմութեանը, որ է ներկայացուցիչ մտքի։ Հայոց հրատարակական ասպարիզի լրագրութեան մէջ, ճշմարտութիւնը խոստովանելով, պէտք է ասենք թէ «Մշակին» էր՝ որ առաջինը հրատարակութեանց իր խնդիրն նշանակութիւնը. այն «Մշակին» էր, որ եւրոպական կեանքից հայոց լրագրութիւնը. չը խոստովանել այդ կը նշանակէ ուրանալ ճշմարտութիւնը։ Բաւական է մի ակնարկ ղրկել «Մշակ»-ի տատնամեայ գոյութեան վրա, որ գանք այն անհերքելի եզրակացութեանը՝ թէ «Մշակին» էր զարթեցնողը այն բոլոր հարցերի, որոնցից կախուած ունի ազգի մտաւոր և բարոյական վերածնութիւնը։ Այդ մեծ գործի առաջին մշակը երջանկայիշատակ «Հիսանտասլեան» էր. «Մշակը» եղաւ նրա հարազատ և արժանի շարունակը։ Եթէ հետաքրքրասիրութիւնը նախախնամութիւնը մտօրինել է, որ հայոց ազգը հասնի միւս քաղաքակրթեալ ազգերի երջանիկ վիճակին, ապա անշուշտ արիւնքան «Մշակ»-ը պէտք է բռնել ազգի բարեփոխութեան մեծամեծ գործի մէջ իր արժանաւոր տեղը։ Տատնամեայ աշխատութիւնը. «Մշակի»-ն ազգային յառաջդիմութեան տուրք գրծին, պարտաւորեցնում է մեզ մատնել նրան և ապագայում երկար տարիներ և յաջողակ գործունէութիւն իր ազգօգուտ տապարովի վրա։ Շարունակեցէք պարոն, իրրև ամենից մշակ ազգի, ձեր մեծ գործը, չարտնակեցէք և յիշեցէք բանաստեղծի խրախուսիչ խօսքը՝ որ կասէ

Сѣйте доброе, вѣчное, разумное
Спасибо вамъ скажетъ народъ....

Սատրապեանին 14 անձինք։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Միջանից անկախ պատճառներով «Մշակի» երկկոյս, յունվարի 28-ի համարը, չը կարողացանք հրատարակել։

—

Առաջանք պ. Տէր-Գաբրիէլեանցից նրա հնդկաստան կատարած ուղեւորութեան լեզուով «Мои путевыя замѣтки» վերնագրով։ Դրքոյկը նկարագրում է Ադան-Թուման, Ախալցխա, Բօրժօմ, Ռուիթայիս և այլն։ Հեղինակը, ինչպէս երեում է, մեծ հակումն ունի դէպի կանանց սեռը և իր ուղեւորի մեծ մասը նուիրում է գեղեցկուհիների նկարագրութեանը և այն ազդեցութեանը որ նրանք, ամենուրեք ապրելով, ունէին շրջապատող հասարակութեան վրա։ Այդ պարմանալի «Հանճարարար հոգեկան հնարաւորութիւններ» արժէն 15 կոպէկ։

—

ՎԼԵՒՆ-ԱԴՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են։ «Այստեղ ամէն բան ապառիկ է. թատրոնի առմանէների վրայ ապառիկ է մնում ամբողջ սեզոն, այն էլ հարուստների վրա, ապառիկ է և ուսումնարանի պատուզուխը, ապառիկ է և աշակերտների թոշակը։ Կօշիկ, շոր են կարել տալիս,—և փողը ապառիկ է մնում։ Բազարից ինչ որ գնում են, ապառիկ է բոլորը։ Հապա, մնակ են բանեցնում,—նոյնպէս ապառիկ։ Անցնում են տարիներ և նա որ իր ապառիկը չէ վճարել, չէ զղջում ասել. «լաւ է, հնչտ է, կը տան։» Մինչ ամօթ չէ, մանաւանդ օրական աշխատանքով ապրողների վարձը այսպէս անտանելութեամբ յետաձգել։»

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել հետևեալը։ «Արդէն թարգմանած լինելով Հօֆմանի «Счастіе игрока» վերնագրով գրքոյկը, յայտնում եմ իմ փափաքիւն միայն թարգմանիչների, որպէս զի մի նոյն հեղինակութիւնը երկրորդ անգամ թարգմանելու աշխատանք չը լինիւ։»

—

Փետրվարի 1-ին լինելու է Ազգային թատրոնում մի կոնցէրտ յօգուտ ԹԻՖԼԻՍԻ երկրորդ կլասիկական գիմնազիայի աննուաճքաղ աշակերտների։ Կոնցէրտի պրօգրամն շատ լաւ է կազմված և նրա մէջ կը մասնակցեն ա. ա. Գոբելեան, Խանդամով, Գարագաշեան, պ. պ. Կօրգանով, Ախիանով, Կիպիանի, Գօրոդէնսկի, Մէնխինով, Ադամեան և Պէսօցկի։ Սկիզբը 8 ժամին։ Ակնկալում ենք համարում ասել որքան գովելի բան է նրանից օգնել հասարակութեան նոր սերունդին, հասարակութեան ուսում առնող չքաւոր զաւակներին։

—

Գանի մի օր է տպէն որ Թիֆլիսը ներկայացնում է կատարելագոյն հիւսիսային տեսարան. ձիերը ծածկում է թէ քաղաքի չքնաղները և թէ նոյն իսկ քաղաքս փողոցները և չէ հալում։

—

Մեզ գրում են ԿԱՐՍԻՑ հետևեալը։ «Մեր քաղաքը գոնէ է ամէն տեսակ օգտակար հասարակական գործունեութիւններից։ Միայն տեղիս ուսուցչական խումբը իր տեսակ. պ. Ա. Գազազեանի ատաջնորդութեամբ, տալիս է երբեմն ներկայացումներ, որից, պէտք է խոստովանիլ, հասարակութիւնը համակրում է։ Թատերական գործիքն էլ մշտ է լիուում։ Այդ տեսակ ներկայացումներից ամենահաջողը եղել է դեկտեմբերի 31-ին տուածը։ Այդ հայկական ընտանեկան երեկոյին մասնակցում էին մօտ 150 հոգի թէ կանայք և թէ ազամարդիկ։ Ամենից առաջ Ս. Շահազիզեանց գպրոցի աշակերտուհիները ներկայացրին «Պօլոխմախէրով» անուամբ մանկական պիէսան և խմբով երգեցին զանազան երգեր։ Ապա հետև սկսուեցան կենդանի պատկերներ, որոնք պատրաստել էին։ Մասքը նշանակված էր 1 ր. 50 կ., և այդ փողով ամէն մարդ ստացաւ շատ բաւականութիւն. բացի թատրոն և կենդանի պատկերներ տեսնելուց, հանդիսականները առաջարկվեցան՝ թէյ, մրգեր և վերջապէս գեղեցիկ ընթրիք։ Մի քանի պարոններ իրանց մէջ մի փոքրիկ հանդանակութիւն արին յօգուտ ատաղնատների։»

—

Առաջանք աշխատակցի պ. Պետրոս Քաշաեանցից մեզ հատ հայերէն գրքեր ամենատես հեղինակութիւններից, ինչպէս Լուսիաէլ Պատկանեանի բանաստեղծութիւնները, Րաֆֆիի «Խնամք» և այլն, որ պարտք խոստացած է մեզ հասցնել պ. Գրիգոր Նիկողոսեանին, կ. Պոլիս, որպէս զի մեր աշխատակիցը իր կարգին հասցնէ այդ գրքերը կ. Պոլսի մշակների ընթերցասէրին։ Թէև մեզ դժուար է կատարել այդ յանձնարարութիւնը, որովհետև մենք այդպէս էլ շատ գործ ունինք, բայց այս անգամ կը կատարենք նախրատաւ խնդիրքը։ Ուրիշ անգամ կը խնդրենք մեզ կրչված նպատակով գրքեր նախրագներից, որ գան մեր խմբագրատուն, կէս օրից յետոյ 1 ժամից մինչև 2 ժամ և մենք կը տանք նրանց պ. Նիկողոսեանի հասցէն, իսկ իրանք մեզ բարեհաճեն ազդարկել փոստայով իրանց նախրած գրքերը, այդպիսով թեթևացնելով մեզ մեր աշխատանքը։

—

Ամսոյ «Մշակը» ունի արդէն 1100 բաժանորդ առանց հաշուելու հատով ծախվող համարները։ Թէ թիֆլիսում հատով ծախվող համարները հազուագիտ մօտաւորապէս 90 հատ ամէն օր, այդպիսով կունենանք, ուրեմն, մօտ 1200 բաժանորդ։ Ինչպէս տպրիլները մենք բազմատիր էինք համարում մեզ երբ համարում էինք բաժանորդների այդ թիւն տպուելոյ վերջը, իսկ ներկայ տպրին հատանք նոյն թիւն գեռ վեսորյար տմիսը չը սկսած։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԻԱ

—

Եգիպտական հարցի վերաբերութեամբ «Polit. Corresp.» լրագրին գրում են կ. Պոլսից յունվարի 17-ից։ Եգիպտոս և Տունիս ահա այն երկիրները, որոնք գլխաւորապէս պատճառում են սուլթանին։ Պալատի մէջ հարց են տնում, թէ Ֆրանսիայի և Անգլիայի հետաձգութիւնը մի աստիճանի է հասնում։ Սուլթանին շրջապատողները յոյս ունեն, որ Անգլիան սիսամայ հետևից Ֆրանսիայի առաջարկութիւնը և երբէք չի գործադրի վճռական և հետևողական քաղաքականութիւն եգիպտոսի մէջ։ Այդ պատճառով վճռած է՝ մի շրջաբերականով պաշտպանել սուլթանի իրաւունքները և այնուհետև հանդիսա մնալ։ „Մեռած ձևանալ,“ ահա թիւրքաց կառավարութեան այժմեան նշանաբանը։ Ե. Գուրը առհասարակ այն կարծիքի է, որ ոչ թէ միայն կառավարել հոռաձգութիւն չէ սիրում Անգլիայի և Ֆրանսիայի մէջ, այլ ընդհակառակը այդ գործը պատճառով սաստիկ խանգարվել է եւրոպական հանձայնութիւնը, որ կայացել էր Բերլինի դաշնագիրը իրագործելու համար։ Ե. Գուրը այդ ենթադրութիւնը քաղաքական նուէներն էլ է վերաբերում։ Եթէ գնա մինչև Գալլիպոլի գործը թուլացաւ եւրոպական հանձայնութիւնը և դրա հետևանքը յունական խնդրի լուծման ժամանակ Բերլինի դաշնագրի պահպանելը փոքրացնելը եղաւ, ուրեմն այժմ Անգլիայի համար աւելի էլ դժուար կը լինի միացնել դործողութիւններ կատարել հայկական խնդրի վերաբերութեամբ։ Թէպէտ այսօրինակ չեն հաւատում, որ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ իսկական համաձայնութիւն է կայացել այնու ամենայնիւ պալատի պատճառները չափազանց վատ է։ Կառավարութեան հակառակ այնպիսի տարրեր կան, որոնց ևս չէ կարող յարմարել և որոնց չէ հաւատում։ Կասկածում են, որ պարտերը, այժմ զբաղված Բերլինի դաշնագիրը իրագործելու համար, մտածում են վերջը թիւրքերին պատճառել և ազատել նրանց լուծից։ Սղիպատոսի ազդային կառավարութիւնն էլ հաւատ չեն ընծայում և կասկածում են, որ թիւրքերը Զթլպիի Տունեսի և Ալժիրիայի մէջ կրակի հետ են խաղում։ Ամէնքը գոհ են, որ նրանց կառավարում են և նրանց վրա հսկում են, որ պատճառով եգիպտոսի մասին մտածելն ևս դադար երթիւղ է պատճառում թիւրքաց կառավարութեանը։ Սկզբից անգլօ-ֆրանսիական շրջաբերականը ապատեղծեց թիւրքաց կառավարութեանը։ Եալդիզկիոշկի պալատի մէջ խոհրդ կազմուեցաւ միմեանցների խորհուրդ, որի ժամանակ այդ շրջաբերականը մանրամասնօրէն քննեցաւ։ Խորհուրդը հաւատաց այն եզրակացութեան, որ այդ գրքի արել է Ֆրանսիան, որպէս զի վերջնական լինի Թիւրքիայից Ալի-Նիզամ-փաշային ղրկելու համար։ Ամէնքը անհամբերութեամբ նոր երեոյթների էին սպասում։ Ե. Գուրը հանդարտացաւ և վճռեց „մեռած ձևանալ“ միայն այն ժամանակ, երբ նկատեց, որ անգլիական մամուլը հանդարտ ֆրանսիական հետ աշխատում է փոքրացնել անգլօ-ֆրանսիական շրջաբերականի նշանակութիւնը։ Պատճառ չկայ միջի թիւրքաց կառավարութիւնը հանգիստ բողոքել անգլօ-ֆրանսիական շրջաբերականի դէմ։

ԻՏԱԼԻԱ

—

„Daily News“ լրագրի Հռոմից գրում են, հոկտեմբերի 22-ից։ Իտալական կառավարութիւնը ներկայումս առանձին ուշադրութիւն է դարձնում եգիպտական հարցի վրա։ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից վերջին ժամանակներում խոսքերը տրած յայտնութիւնները հոկտեմբերի քաղաքական շրջանների մէջ մեծ տպաւորութիւն գործեցին։ Իտալական դեսպանը կ. Պոլսի մէջ, ինչպէս կարող էր հանդիսանալ Անգլիայի և Ֆրանսիայի պահել Իտալիայի, Անգլիայի և Ֆրանսիայի միջև, առաջ պաշտպան էր հանդիսանում անգլօ-ֆրանսիական քաղաքականութեանը, բայց այժմ նա իր կառավարութենից որոշ եղանակ։ Իտալական կառավարութիւնը ասացաւ, որ պէտք է փոխել իր գործողութիւնը եգիպտոսում։ Իտալական կառավարութիւնը ուժեղ է, որ ներկայումս բոլորովին անկախ է գինուորված միջամտութիւն եգիպտական գործերի մէջ, իսկ եթէ հանգամանքը

Fonds A.R.A.M

ները այնպես կազմվին, որ այդ պետի մէջ մեծամասնութիւնը անհրաժեշտ լինի, այն ժամանակ այդ գործի կատարելը պէտք է յաջողել նաև այդ գործի կատարելը պէտք է յաջողել առաջնին, որ բարձր իրաւունքներ ունի Եգիպտոսի վրայ խալիֆան կառավարութեանը յայտնի է, որ Հիւսիսային Աֆրիկայի ազգաբնակութեան մէջ նա մեծ հեղինակութիւն ունի։ Ֆրանսիական քաղաքական նախագծի դէմ բողոքները կարող է ուժեղ էլ մեծացնել խալիֆայի ազդեցութիւնը արաբների վրայ, մինչդեռ Ֆրանսիան, մանաւանդ Տունիսի արշաւանքից յետոյ հետզհետէ կորցնում է իր հեղինակութիւնը արաբների մէջ։ Բայց այդ խալիֆան յոյս ունի, որ երեք մեծ պետութիւնները՝ Ռուսաստան, Գերմանիա և Աւստրօ-Ունգարիա կը պաշտպանեն նրա քաղաքականութիւնը։

Հռոմից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են. Մի քանի ժամանակ է, որ Իտալիայի մէջ առաջ է գալիս մեծ ուշադրութիւն են դարձնում դիւանագիտական գործերի վրայ, մանաւանդ երկրի պաշտպանողական ոյժերի զարգացման և կանոնաւորելու վրայ։ Իտալիան մանաւանդ ներկայացնում դասագրքեր է ուզում դիւանագիտական „գիւտերի“ մասին։ Ամենքը համոզված են, որ Իտալիան իր պատերազմական ոյժերը պէտք է կատարելագործութեան վերին աստիճանին հասցնել, որպէս զի նա կարողանայ պահպանել իր այժմեան դրութիւնը մեծ պետութիւնների շարքում և որպէս զի իր դաշնակցութիւնը բոլոր պետութիւնների համար ցանկալի դարձնէ։ Ամենը այն կարծիքի են, որ իտալական զօրքերի արագ կազմակերպութեան մասին չը պէտք է խնայել ամենամեծ զոհերութիւններ։ Ճշմարիտ է մի քանի ժամանակից ի վեր շատ բան է արված Իտալիայի պատերազմական ոյժերը կատարելագործելու համար և իտալական զօրքերի այժմեան կազմակերպութեան մասին գործ հետ ծանօթ օտարականներ շատ յաճախ կարծիքներ յայտնեցին, բայց այսօր ամենքը զգում են, որ պատերազմական ոյժերի զարգացնելու համար դեռ ևս չէ արված այն բոլորը, ինչ որ կարելի էր անել։ Այդ պատճառով ամենքը հաշտվել են այն մտքի հետ, թէ անհրաժեշտ է ֆինանսական մեծ զոհաբերութիւններ անել միւս պետութիւններից յետ չը մնալու համար։ Հասարակական կարծիքը պահանջում է, որ Իտալիայի պատերազմական ոյժերը կատարելագործվին, իսկ ազգաբնակութիւնը այդ նպատակի համար պատրաստ է ամեն տեսակ զոհաբերութիւններ անել։ Այդպիսով „կենսական հարցը“ մեծ կարևորութիւն է ստացել Իտալիայի մէջ և դա առաջնակարգ դեր է խաղում։

Իտալական պատգամաւորների ժողովը յունվարի 21-ի նիստին 217 ձայներով մեծամասնութեամբ 64-ի դէմ ընդունեց ընդարձակ վերանորոգութիւնը այն փոփոխութիւններով, որ մտցրեց այդ վերանորոգութեան նախագծի մէջ իտալական սենատը։ Թէպէտ այդ օրվայ նիստը չափազանց նշանաւոր էր, այնու ամենայնիւ պատգամաւորների կէսը ներկայ չէր նիստին։ Յունվարի 22-ին նոր օրէնքը հրատարակվեցաւ իտալական պաշտօնական լրագրների մէջ։ Ցաւակների համեմատ քուէարկութեան նախագիծը այդչէն պատրաստ է և շուտով կը ներկայացնվի իտալական պատգամաւորների ժողովին։ Սենատի մէջ յոյս ունեն, որ շուտով այդ նախագիծն էլ կը քննեն և ընդարձակ ամբողջ վերանորոգութիւնը կիրագործեն մինչև զատիկ։ Ամեաը պատգամաւորների ժողովի արձակելուց յետոյ ընդհանուր ընտրութիւնները կը կատարվին նոր օրէնքի հիման վրայ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են որ ազատական խազարն և խազունու կեանքի դէմ փորձ էր արած այս օրերս, երբ նրանք վերադառնում էին երկաթուղով Լիսաբոնից Մադրիդ։ Զարագործները երկաթուղու մի քանի բէլետները հանելին վիշեր ժամանակ սրակս դի գնացքը խորտակվի։

—«Daily News» լրագրին հաղորդում են Աֆղանից որ դադված է մի դաշտագրութիւն յունոց խազարի դէմ։ Սպանութեան փորձ պէտք է կատարվէր երկաթուղու գծի վրա Աֆղանի և Պիշկի մէջ։

—Գիտօ, որ արդէն դատապարտված է մահվան պատժին, յոյս ունի վճռաբեկ առնելին ներկայացնելով իր գործը, զարձնել արդարանալ։

—«Presse» լրագրին հաղորդում են որ 16 (28) յունվարին գերմանական բոյխատագի նիստերը կը փակվին։ Պետ ես յայտնի չէ արդեօք գարնանը կը գումարվի Բոյխատագը, թէ ոչ։

—«Temps» հաղորդում է որ Ֆրանսիական նոր միներալոգիական վերաբերմամբ դեպի իրանց նոր միներալոգիան կազմակերպութիւնը։

—«Presse» լրագրին Բերլինից հեռագրում են, յունվարի 15-ից, որ այնտեղի առաջնորդող շրջանները մեծ ուշադրութեամբ քննում էին Գամբետտայի ընկերները պատճառները։ Կարծում են որ Ֆրեյցինէ կը հրաժարվի իր պաշտօնից և որ Ս. Վինսերտրեյզում ապրիլ գիտցան կը նշանակվի։

—Դուբլինի լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը մի չատ վատնգաւոր և տարածված դատապարտութեան հետ է գործ ունենում Լիմերիկում և Կորկում։

—«Presse» լրագրին Ցիմիսիից, յունվարի 15-ից հաղորդում են, որ այսօր կոմիտասից վանահայրը Ջերուզաղէմի միտրոպոլիտ Իզրայէլը։

—«Wiener Tagbl.» լրագիրը յունվարի 13-ից հաղորդում է, որ Ցէտինիեում բնակութիւն հաստատց մէկ տիկին, ինչպես ասում են, անպիտան է, որ մեծ միջոցներ ունի։ Նա կամաւորների մէկ օրվայ դռնից կազմակերպվով է պատրաստած, հետևյալ ինչ ինչ ապրանքները գնելու համար և մանաւանդ յատկութիւններ ունի ազատասիրութեան առաջնորդների հետ։

—«Post» լրագիրը հաղորդում է, որ Վիլհելմ կայսրը իր չորեքշաբթիները յայտնեց Պրուսիայի կին յունվարի 12-ի (24) ճառի համար։ Ասում են, որ կանցլերը առանձին ընծայ կը տանայ։

—«Presse» լրագրին Բերլինից գրում են յունվարի 15-ից. Բէլգիայի այսօրվայ նիստում պետական քարտուղար Բէհրենդ յայտնեց, որ կառավարութիւնը 1885 թուին համաշխարհային հանդիսի կազմակերպութիւնը Բերլինում անժամանակ է համարում, և որ կառավարութիւնների մէջ բանակցութիւններ են լինում պատերազմական ձեռնարկութիւնների հետևանքների հետևանքների համար յայտնի հերթ նշանակելը։

—«Presse» լրագիրը հաստատում է, որ Կ. Պոլսում բոլշարական մի մեծ դատապարտութիւն է բացված, որ նպատակ ունէր յեղափոխութիւն գործել Ադրիանոպոլսում և Բոլշարիայում։ Պոլիցիայի ձեռքում նշանաւոր փաստաթղթեր են գտնվում, որոնք ապացուցանում են վերոյիշյալ ամբաստանութիւնները։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ընդհանուր հանդիսարանի բէկաւոր պ. Դրէյֆուսի պատերազմների ընկերութիւնն ժողովում առիթ կական մանրի մասին մի հետաքրքիր ճառ արտասանեց, որի բովանդակութիւնը հետևյալներս կը պատմենք։ «Ամերիկական լրագիրը, ասաց պրոֆէսորը, սոսկալի լաւ է ներկայացնում մեզ ամերիկական կեանքը և ժողովուրդը։ Ով որ կամենում է ճիշդ հասկացողութիւն կազմել ամերիկացիների մասին, նա պէտք է մանրամասնութեամբ ուսումնասիրի Նոր-Աշխարհի մասնաւոր։ Աւազրնութիւնը և ախտը, թաղաքականութիւնը և առևտուրը, հարկերութիւնը և խելքը, թուղթիները և ուժը, սոսկալի սովերը և բնաւորութիւնը, մի խօսքով ամերիկական ամբողջ քաղաքակրթութիւնը պարզապէս կը նկարվի պարբերական անթիւ հրատարակութիւնների մէջ։ Թէ ինչպես մեծ է այնտեղի մամուլի նշանակութիւնը, երևում է արդէն նրա գանազանակերպութիւնից և բազմաթիւնից։ Գրագիների մէկ անհատը զորք գործում է ժամանակագրութիւններ և յիշատակարաններ կազմելու առաջնէի վրա։ Խորագիրների, աչխատակիցների, բէլետրակօրների, թղթավաճառների, գրնդապանների, գանազան անուան խորհրդատուների, որոնք պատ են յայտնի վճռով, երկար ցուցակը պարունակում է իր մէջ անհամար չատ ապրանքատու և ընդունակ մարդիկ։ Ամերիկացին, եթէ ոչ մէկ լրագրում ոչինչ չի գրիլ, համարվում է մեծագոյ պատկառանք ամենատարբեր առարկաների վրա կանգնած։ Լրագիրների մշտական աչխատակիցների և աչխատակցուհիների թիւը Ամերիկայում 25.000-ից աւելի է։ Ոչ մի տեղ ամենօրեայ լրագրութիւնը չունի այն ազդեցութիւնը մարդկանց վրա, ինչպէս այստեղ։ Ամերիկացիները ապրում են, մտածում են և բան են չխոսում լրագիրների օգնութեամբ։ Լրագիրները միշտ և ամեն տեղ ուղեկցում են նրանց, գրաւում են առօրեայ կեանքի ամեն տեսակ մանր մունր իրողութիւններով, քննում են ամենայն նախագծեր և պլաններ, կազմում են հասարակական կարծիք, խօսացնում են, կամ պատուի և վատաբի պատճառ են ծառայում կեանքի ամեն երևոյթները և ամեն տեսակ մարդկանց։ Այդ պատճառով ոչ մի ամերիկացի անտես առնել չէ կարող լրագիրը։ Ժողովուրդը նայում է լրագրական գործի վրա, որպէս առաքելութեան վրա, որը բարեփոխում է և չարութիւնը պատժում։ Ամեն մարդիկ յարգում են լրագրութիւնը, ընդունելով նրան որպէս գործող հասարակական լծակ, իսկ անազնիւները քաշվում են նրանից, վախենալով արժանի արհամարհից։ Բոլորը ինչ որ կատարվում է նեղկայ րագիրում, արտահայտվում է լրագիրների էջերի վրա։ Բոլորը ինչ որ գործում է ժողովուրդը, ինչ որ ախտում է բարախել նրա սիրտը, գտնիեցնել յիշատակութիւնը, ստիպում է վախենալ, կամ յուսալ—բոլորը արձագանք է գտնում ամենօրեայ մամուլի յօդուածների մէջ։ Նա յայտնվում է որպէս ժողովրդի ձայն, մատուների ձայն։ Ամերիկական լրագիրները կրթում են երեսատարդութիւնը, լրագիրները—հասարակաց ժողովուրդ, սակայն ուսումնարանների մասին կարդացողներ չէր ունենայ, սակայն մասին ուսումնարանական կրթութիւնը իր պատերների կէսն անգամ չէր բերի։ Բացի դրանից, եթէ ամերիկացիները իրանց բոլոր ուսումնարանները ունենային, բայց մամուլ չունենային, նրանք երբէք լինելիքին ժողովուրդ չէին լինի։ Մինչև անգամ դպրոցը և դպրոցական-ները չեն կարող ժողովրդի հոգեկան կոմիը այնպէս զարգացնել, ինչպէս լրագիրները սակայն ժողովրդական ամենատես ընթերցարանները են կազմում, որովհետև ամենատես էնցիկլոպեդիա են ներկայացնում։ Ժողովրդական մասնակի համար լրագիրը միևնոյն անգամ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան թէ դիրքը, որովհետև լրագիրը խօսում է նրա պատգամներին մասին, քաղաքական կրքերի կռւի, ընտանեկան կենցաղավարութեան, վերջապէս հէնց իրա մասին։ Լրագիրը պատրաստում և բացատրում է նրա առօրեայ կեանքը, ամենօրեայ անցքերից խրատական եղրակացութիւններ հանելով։ Այդ ճանապարհով մարդիկ իրանց առանձնացած անկիւններից բարձրանում են վերև և պատկերացնում մանակցում են կեանքի մեծ դրամատիկ մէջ։ Լրագրի ազդեցութիւնը ընթերցողների խրատատիրի վրա չէ սահմանափակվում միայն և ոչ ոչ ոչ ոչ երբէք նեղ շրջանակով։ Լրագիրը մտնում է տները, սովիճանոցները և մագնում է ընթերցողին, այդպէս ասած, հանաչխարհային պարլամենտ։ Ընթերցողը լսում է Բիսմարկի կամ Գլադստոնի հայտարարները, հետևում է պարլամենտական կռւին Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ, թափանցում է հեռաւոր Ասիայի խորքերում—մի խօսքով—ամբողջ աչխարհի բնակիչ է դառնում, ապրելով մի և նոյն ժամանակ իր տան մէջ։ Պետ հետևում գնալը։ Հասարակական լրագիրը չէ մոռանում և մաքի առաջադիմութիւնը, նա տալիս է ընթերցողին պատրաստի վերջին հետևանքները գիտութեան և արուեստի մէջ և զրանով կարծես թէ ընդհանուր համալսարան է դառնում։ Նրա էջերում, ինչպէս և համալսարանում, դասախոսութիւններ են կարդացվում պետութեան և տեխնիկայի բոլոր բաժինների վերջին գիտութեան մասին։

* * *

Ամենամեծ հաչտարար դատարանների ժողովում, յունվարի 8-ին, վերջնականապէս վճռվեց կազմել համալսարանի պրոֆէսոր վ. Ինոզրադովի գործը, որ մեղադրվում էր օրիորդ Մ. Վ. Պավլովային գործքով վիրաբուժելու մէջ, երբ նա հրավիրված էր որպէս բժիշկ օրիորդին ինամելու համար։ Յունիսի առաջին օրերում տիտուլյարնի սովետնիկ Պավլովի աղջիկը սիփով հիւանդացաւ, այդ պատճառով նրա մօտ կանչվեցան Ելագին և Գրօս բժիշկները, բայց որովհետև հիւանդի դրութիւնը ինչպես գնում էր վատանում էր, բժիշկները վրճռեցին կոնսիլիումի կանչել պրոֆէսոր Ինոզրադովին, որը և հրաւիրվեցաւ գալ հիւանդի բնակարանը յուլիսի 9-ին, ցերեկվայ 12 ժամին։ Պ. Ինոզրադով երեկոյեան վեց ժամին միայն եկաւ, սաստիկ հարբած, բառական կօպեյկա կերպով վարվեց հիւանդի հետ։ Միևնոյն օրը պ. Ինոզրադով կրկին հրաւիրվեցաւ հիւանդի մօտ, առաւօտեան, բայց էլի երեկոյեան վեց ժամին եկաւ և կրկին քիչ հարբած։ Այդ ժամանակ հիւանդի մօտ գտնվում էին նրա մեծացուն, պրոֆեսոր-դօկտոր կոզնեցով, և տիկին Պրիլօվա։ Չը կամենալով բժիշկին խանգարել, պ. Կոզնեցով գնաց գնաց միւս սենեակը, և այն ժամանակ պ. Ինոզրադով քննեց հիւանդին, գնդատեսներ գրեց և կամենում էր գնալ, բայց այդ ժամանակ հիւանդը կամեցաւ մի բան հարցնել բժշկից։ Մօտենալով հիւանդին, պ. Ինոզրադով, վկաների և պրոֆեսորական հիւանդի ցուցմունքի համեմատ, ինչպէս երևում է այդ հաչտարար դատարանի պրոտոկոլից, չորեց հիւանդի առաջ, սկսեց համբուրել և գրկել նրան, անուանելով հոգեակս և սիրելիս, և մի ևնոյն ժամանակ երան թոյլ էր տալիս չաչափել հիւանդի մարմնի ծածկ մասերը։ Հիւանդի համար հետևանքները սարսափելի էին։ Մի և նոյն պրոտոկոլից երևում է, որ երբ հիւանդի մօտ մնան կոզնեցով և Պրիլօվա, նրան գտան սարսափելի դրութեան մէջ. հիւանդը սաստիկ սրտաւմում էր, և խոտ վրդովված լինելով Ինոզրադովի յանդգնութիւնից, նա պատմեց նրանց բոլոր եղելութիւնը։ Ցնդասան հաչտարար դատարանի նիստում, քննելով Պավլովայի գանգատը, լսելով վկաների ցուցմունքները և կողմերի բացատրութիւնները, պրոֆէսոր Ինոզրադովի մեղադրութեան ապացոյցներ չը գտաւ և վճռեց պրոֆէսոր Ինոզրադովին արդարացած համարել։ Այդ վճռի դէմ Պավլովայի փաստաբանը վճռաբեկ գանգատ տուեց, որի մէջ զարմանալով թէ էլի ինչ փաստերով կարող է ապացուցված լինել Ինոզրադովի մեղադրութիւնը, ժողովի ուշադրութիւնը գրգռից դատարանի անկախ վճռի վրա։ Հաչտարար դատարանների ժողովը, ինչպէս հաղորդում է «Պետերբուրգի Վեդոմոստի» լրագիրը, պրոֆէսոր լսվելուին երկու չաբաթվայ բանտարկութեան դատապարտեց։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՁԱՅՆԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Իշխան Վիկօլայի վրա հրացան արձակեցին։

ԽԱՐԿՈՎ, 26 յունվարի։ Խորհրդի մէջ քննվում է քաղաքական գործ։ Մեղադրվածները քիչ են, որոնցից չորսը անչափահասներ են։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 87 կ., երկրորդ 91 ր. 37 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 50 կ., հինգերորդ 91 ր., նեղքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 218 ր. 75 կ., երկրորդ 217 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 62½ կ., երկրորդ 90 ր. 37 կ., երրորդ 90 ր. 37 կ., ոսկի 8 ր. 2 կ.։ Ռուսաց 1 րուբլ նոտների վրա արժէ 24,75 պէնս, Ամստերդամի վրա 125 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ մարկ, Փարիզի վրա 259 ֆրանկ 87 սանտիմ։ Բօրսայի արտադրութիւնը ամուր է, վերջը հանգիստ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի։ „Голосъ“ լրագրին տուած է առաջին նախագուշակութիւն և արդէլված է նրա հաստատների հաստատ ծախելը „Сельскій Вѣстникъ“ լրագրի մասին յօդուածի պատճառով։ Թագաւորը կամեցաւ լսել իր բարձր հովանաւորութեան տակ գտնվող Գեռատու Ֆեոդորի հարկի նախագիծը վերադարձրեց Ֆինանսների մինիստրին վերաքննութեան համար։ Գահավանների դործը թեթևացնելու համար մանաւաժողովը վերջացրեց իր նախագիծը։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրկին հրաւիրում ենք մեր յարգելի հայուհիների ուշադրութիւնը մեր բացառիկ **ՁԵՒԻ ԵՒ ԿԱՐԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ** վրա, յայտնելով սովորելու պայմանները:

Ձեւակար սովորելու համար իւրաքանչիւր ցանկացող կը վճարի 60 ր:

Միայն ձեւ սովորելու համար 25 ր.

Ձեւերը առանձին կարելի է սովորել 30—40 դասի ընթացքում:

Ցանկացողները թող բարեհաճեն դիմել գանձակի փողոց կենսագ թիւրքերենցի տունը № 10 ձեւի և կարի ուսուցիչ Գ. և Շ. Ալեքսանցին, որոնց ընդունում են պատուէրներ:

1—3 (2)

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻՒԱՅ“

Ամենաեր և գործնական ձեւի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մնի մամուլի տակ. դիրքը կը բազկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. գրա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիճաբանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները թղթելաում կարող են գրուել „Կենսաթօնական“ և „Զաքարիայ Կրիգորեանցի գրամաճառանոցներում և Թադեոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բաթխկիչ մագազինում, ինձ մօտ և „Մարգ ընկ“ գրադարանում. դուռտական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին առաջարկութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր: Բաժանորդների անուանները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում:

Հրատարակիչ Աբել Գ. Ադրեեանց

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ

քան թէ ուրիշ տեղ. Թէյ, կակաո, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, սմաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սաւդօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու սմաններ, ԿՈՂՊԿՈՑՆԵՐ, ՋԵՆՏԱԿԱՒՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՈՒԶՆԵՐ, թուղթ, Ծրարներ, տետրակներ, մատիաններ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԼՎՕԼՎԵՐՆԵՐ, ՄԷՋքակապներ, կլէօնկա, ԹԱՄՔԵՐ, սանձեր, ուխտներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբրիշներ, խաշիներ, կանանց գուլպաներ, մարդկանց գուլպաներ, տուլաի սապօն, հոտուկա ջրեր, շիբրեա, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնեակ և 1,000 այլ առարկաներ: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՑՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուգիով 40, 46, 52, 58, ր., խակ փունտով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., խակ ամենաբարձր թէյը փունտը 2 ր. քաշը ԱՒԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէվոլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., չեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. գիւժիներ, ալբօմներ կիսագնով, Ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէվոլվերների թիֆիսում:

89—100

Въ Редакціи газеты „МШАКЪ“ Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

„ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ“

Այս ֆիլմայով բանալով արևանուն գրաքաղաքանոց՝ կցելով նորա հետ ուսումնական, բնականական, նկարչական և կազմարարական իրերի խանութ, յանձն եմ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից եւ նորա շրջակայ քաղաքների և գիւղերի դիւանատներին և ուսումնարաններին շատ ձեռնտու գներով և պայմաններով:

Ընդունում եմ ապագրել տալու բլանկներ, Ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցետոմսեր, բրօշիւրներ, նաև գրքեր, ամենագործան վարձով:

Ինձ մօտ է գտանվում իմ հրատարակած „Տնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի պահեստը:

Իմ հասցէն. г. Эривань. Н. Симеоняцу, магазинъ. „Другъ-Дѣтей“.

ԱՐԻՒՆ ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒՉԵՏԻՉԻ** „ДВѢ ЕЛКИ“ *մանկական* գրքուկի հայերէն թարգմանութիւնը **„ԵՐԿՈՒ ՏՈՆԱԾԱՌ“** անուամբ

Այս գրքոյկը ընդունել կր ապագրելու հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ ապագրելու: Ապագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով:

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ:

կարելի է առնել թէ՛ հետևողական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հեռևել հասցէով.

Тифлисъ—на Авлабарѣ Ивану Петровичу *Назаріанцъ*.

Վաճառվում են 15,000 սմաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրտատալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կոպեկներ 15 կ. հատը, 10,000 սանդ 8—40 կ. հարիւրը, 10,000 պինդալներ 5 կ., 5,000 շիշ պօր-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 գիւժին մատանի և դրչակոմներ 8 կ. գիւժինը, 2,000 փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. փունտը, 1000 փունտ լէպէօշկա 50 կ. փունտը, 600 անգլիական բէվօլվեր 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, գրաք, տրիկօ, ալբօմներ, ձեռվայ պալաոներ, գլխարկներ, վարտիկներ, հոգուստ կէս գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ. Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.

45—60

„ԱՐՁԱԳԱՆՔ“

Ներկայ 1882 թուականի փետրվարի 21-ից կառավարութեան թոյլտուութեամբ կը հրատարակվի դրական և քաղաքական չորեքշաբթիներ „ԱՐՁԱԳԱՆՔ“ անունով պ. Աբգար Յովհաննիսեանցի խմբագրութեամբ:

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ դուրս կը գայ կիւրակի օրերը երկու թերթի մեծութեամբ:

„ԱՐՁԱԳԱՆՔԻ“ ներկայ տարեայ բաժանորդագինը՝ տարեայ սկզբից չը հրատարակվելու պատճառով, Հ Ի Ն Գ րուբլի է:

„ՓՈՐՁԻ“ այն բաժանորդները, որոնք իրանց բաժանորդագինը վճարած ունեն անցած 1881 թուականի երկրորդ կիսի համար, 1882 թուականի ընթացքում „ՓՈՐՁԻ“ փոխանակ „ԱՐՁԱԳԱՆՔ“ կը ստանան, նրանց միայն բարեհաճեն կանխօրէն յայտնել խմբագրութեան իրանց ցանկութիւնը և հասցէները:

„ԱՐՁԱԳԱՆՔԸ“ կը հրատարակվի հետևեալ ստորագրութեամբ. —

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործողութիւնների և օրէնսդրական միջոցների մասին:
II. Առաջնորդող յօդուածներ ազգային և հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:
III. Թղթակցութիւններ հայաբնակ տեղերից. ընդհանուր տեսութիւն հայ և օտար լրագրների տեղեկութիւնների և կարծիքների:
IV. Տնտեսական և առևտրական հարցեր փոխադրայարաբերութեան մէջ:
V. Յօդուածներ ազգային կրթութեան վերաբերութեամբ:
VI. Ա ր ա ջ ի ն տ ե ս ո ւ թ ի ւ ն. յօդուածներ և տեղեկութիւններ արտաքին հարաբերական և քաղաքական նշանաւոր անցքերի մասին:
VII. Կրիտիկա և մատենախօսութիւն:
VIII. Ֆելիետօն:
IX. Խառն լուրեր:
X. Յայտարարութիւններ:

ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԻԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կառօլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՑԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

134—150

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ „ДОНСКАЯ ПЧЕЛА“

ГОДЪ СЕДЬМОЙ.

на 1882 годъ

Съ 1-го января 1882 года „Донская Пчела“ будетъ издаваться по той-же программѣ какъ издавалась въ предъидущіе шесть лѣтъ, два раза въ недѣлю.

Редакція, по мѣрѣ силъ и возможности выполняя обязанности провинціальной прессы, находитъ, что „Донская Пчела“ уже достаточно знакома публикѣ, почему и считаетъ всякія реклами положительно излишними.

ПОДПИСНАЯ ЦѢНА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ:

Съ доставкою въ Ростовѣ п/Д.		Съ пересылкою иногородныхъ	
На годъ	6 руб.	На годъ	7 руб.
» 1/2 года	3 „ 50 к.	» 1/2 года	4 „
» 3 мѣсяца	2 „	» 3 мѣсяца	2 „ 50 к.

За перемѣну адреса редакція взимаетъ 25 коп.

Подписка принимается въ конторѣ редакціи „Донской Пчелы“ въ Ростовѣ на-Дону, на Большой Садовой улицѣ, въ домѣ И. А. Теръ-Абраміанъ. Иногородные благоволятъ адресоваться: въ редакцію „Донской Пчелы“ въ Ростовъ на-Дону.

Редакція покорнѣйше проситъ и. иногородныхъ подписчиковъ присылать свои требованія заблаговременно, написавъ свои полные адресы четко и разборчиво.

Всѣмъ годовымъ подписчикамъ, приславшимъ до 25-го декабря сего 1881 года подписныя деньги за 1882 г., будетъ разосланъ БЕЗПЛАТНО, въ видѣ преміи, „ДОНСКІЙ-АЗОВСКІЙ русско-армянскій календарь на 1882-й годъ.

Редакторъ-издатель **И. А. Теръ-Абрамянъ**

4—5

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ԾԸԾՈՂՆԵՐ 1 ր., ծալվող սէթառներ 1 ր. 50 կ., ՓԱՑԵՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 րուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի սմանի քօրոցներ 50 կ., պատակա ծխողների համար 60 կ. փունտը, անգլիական վաններ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

10,000 զոյգ գուլպաներ 25 կ.—իյ զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼՊԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պատուհնա 40 կ.—1 ր., 300 հատ բէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբօմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 -ֆունտ թէյ ԹԷՑԱՄԱՆՈՎ 1 ր. 65 կ.-ից ի վեր -կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ.**

77—100

ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

կաւկիա, ս. Հախվերդեանի:

Հիւանդները ընդունում են ամենայն օր: Առաւօտեան 9—10 ժ. լ ո ւ ն կ ե վ ի ց Աչքի, վէնէրական և խերուրգիական հիւ— ր ո ւ զ կ օ վ ա կ ի—կանոցի և ներքին հիւ— 10½—12 ժ., շ ա հ ա գ ի զ ե ա ն ց—ներքին հիւ. կին-բժիշկ Ս ա մ ո յ լ օ վ ի ց—կանոցի հիւ. Երեկոյեան 5½—7 ժ. պ ա վ լ օ վ ա կ ի— հոգեկան, ջղային և ներքին հիւ., Ո ւ շ ա կ օ վ —երեխայոց և բգի հիւ.

Շաբաթ օրերը—առաւօտեան ծ ա գ կ ա ս տ ա ն ի ա ն—երեկոյեան կ ո ն ս ո ւ լ տ ա ց ի ա (ընդհանուր բժշկական խորհուրդ):

Գ ի շ ե ր օ ր ի կ հ ի ւ ա ն դ ն ե ր:

Զ ք ա ւ ո ր ն ե ր ի ն խորհուրդը որոշում է անվարձ:

Հիւանդանոցի դիրեկտոր պ ա վ լ օ վ ա կ ի

(հ. շ. երկշաբ.) 12—1

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Января 1882 года.

Типографія Главн. Управл. Намѣст. Кавказскаго, Лорисъ-Меликовская улица, каз. домъ.

Fonds A.R.A.M

№ 15 Յունվարի 30 (Փետրվարի 11) 1882 Յունվարի 30 (Փետրվարի 11) № 15

ՏԱՄՆԱՄՅԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարինը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով

Թիֆլիսում պրոում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունւում է առնն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանոցիր րուբլին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թուրքիա։ Ֆրանսիա։ Յունաստան։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։ — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ԲԱՆԱՒԻՐԱԿԱՆ։ Դասի բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 26 յունվարի

Հայերի մի զարմանալի առանձնութիւն էլ այն է, որ ամբողջ մի որ և է գործին շատ ջերմ կերպով կպչում են, աշխատում են կազմակերպված ընկերութիւններ առջև այդ գործը գլուխ տանելու համար, բայց երբ կազմւում է ընկերութիւնը, անդրնում է մի վերջ ժամանակ,—և յանկարծ մի աննկարելի սառնութիւն, անտարբերութիւն է տալիս գալիս։ Մեռ կողմից այս ևս անհերքելի իրողութիւն է, որ հայերը խմբովին գործել չը գիտեն, մեր ազգային գործունեության մէջ չը կայ համերաշխութիւն, չը կայ բարոյական կապ, ուժ և ընդհանուր ոգևորով գործելը, ընդհանուր գործին անկեղծութեամբ, անաչառութեամբ առնչուելը, հայերի մէջ հազուագիւտ գոյն է։ Գլխով բացատրվում է դուրս այն օտարոտի երևոյթը, որ մեր մէջ միայն այն գործերն են առաջ ընթանում, որոնք անհատական ոգևորի վրա են հիմնված։

Իրօք ապացոյց իմ առածին, ես կը խօսեմ այսանել «Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութեան» ընկերութեան գործունէութեան մասին։ Մեռ երկու տարի է, որ այդ ընկերութիւնը հիմնվել է և չը նայելով, որ սկզբում առնչուած յոյսեր էր առլիս, բայց չը կարողացաւ մինչև անգամ այնքան արդիւնաւէտ լինել, ինչքան եղել էր մի մանուկ ազգ, երբ ձեռնարկից հրատարակել մի քանի գրքեր։ Ամբողջ երկու տարվայ ընթացքում ընկերութիւնը իր կողմից միայն չորս գիրք է հրատարակել, այն է «Պատմ. Մոսէս Խորենացու» որը իսկապէս արտատպել է, «Ներքինդեղի պատ.», «Մօրիս Բէօկլի» ձեռնարկը և «Ուխտատրքը»։ Մնացեալ 8 հրատարակութիւնները եղել են մասնաւոր անձանց ձեռքով գիտ ընկերութեան դուրսից առաջ։ Ընկերութեան գործունէութիւնը միայն այն է ապացուցանում, որ չը պէտք է այդպիսի հաստատութեանց համար այնպիսի անձանց ղեկավար ընտրել, որոնք ունեն չատ ուրիշ զբաղմունքներ։ Ես ճշմարիտ, Թ. ընկ. Ն. գրաս. գործատարները այժմեան է անհնարին չափ զբաղված հասարակական գործերով։ Նա, կարծէք, հիմնված է նրա համար միայն, որ մի քանի պարտիներ, որոնք «Փորձի» մէջ մի քանի յօդուածներ գրելով կարծում են թէ ամբողջ հայ ազգը պարտաւորեցրել են, ընկերութեան հրատարակելի գրքերի սրբագրութեան պատրուակով հարիւրներ տանուն։ Ինչ մի տեսակ կարիք կար մեզ ծախսել և Մովսէս Խորենացու պատմութիւնը պարտաւորելով դրա համար պ. Պալասանեանցին, «Փորձ» տպագրի աշխատակցին 400 րուբլի տալ իբրև արդարութեան վարձ, քանի որ Մովսէս Խորենացու վէնեսկի տպագրութիւնը կայ։ Եւ դեռ արդարանում են մարդիկ տանելով թէ ընկերութիւնը չունի հնարաւոր միջոցներ։ Ընկերութիւնը միջոց է գտնում տալ տալ Մովսէս Խորենացու պատմութիւնը, «Ուխտատրքը», Մօրիս Բէօկի պէս մի ձեռնարկ բարոյական անհետաքրքրութեան, մինչդեռ ուսանող Հրաչեայի «Վերատակար միջառներ» բրոշիւրը վեր ընկած մնում է, մինչդեռ մեր դպրոցները զուրկ են պիտանաւոր դասագրքերից։

Մի ուրիշ, բայց աննշանագոյն պակասութիւնն այն է, որ ընկերութեան վարչութիւնը ինքն չէ հասկանում թէ ինչ պէտք է գործել։ Նա չունի գործունէութեան մի որոշ նպատակ, նա չէ հետապրքրվում իմանալ թէ որ տեսակ գրքեր ունի հարկաւոր և անհրաժեշտ են հայ ժողովրդեան։ Ուանի որ ընկերութիւնը չունի առաջ միջոցներ, նա պէտք է միայն մի ճիշդ ընտրէ իր համար և այն է, կամ դպրոցների համար գասագրքեր հրատարակել և կամ ժողովրդական գրքեր ի լոյս ընծայէ, այսինքն գիտութեան զանազան ճիւղերը ժողովրդականացնել ընթերցող հասարակութեան մէջ։

Օրինակ, ինչ հիանալի բան կը լինէր, եթէ առողջապահութեան վերաբերեալ մի քանի բրոշիւրներ հրատարակվէին և քաղաքներում ու գիւղերում ցրվէին։ Ընկերութիւնը, չնորհիւ և ֆանատական Լազարեանցի, մի երկու այդպիսի բրոշիւրների հրատարակութիւնը իր հաշիւն է առել, բայց նա կարծէք գիտումը այդ գրքերը չէ ցրվում, որպէս զի աւելի օգուտ չունենայ արտրտանալու և ապացուցանելու Բաթալեանին թէ չը պէտք է այդպիսի բրոշիւրներ հրատարակել։ Ես հաստատապէս գիտեմ, որ եթէ օրինակ, «Նեղ և խուսա բնակ.» բրոշիւրը ուղարկվէր Վլադիկաւկազի նեմը, այդտեղ առ նուազն 200 օրինակ կը տարածվէր։ Ընդունելով հրատարակութեան մի որոշ ճիշդ, ընկերութիւնը միայն տպում է այն գրքերը, որոնք պատահմամբ ուղարկում են իրեն, կամ որոնց համար առանձին միջնորդներ են յիշում, կամ թէ որոնց հեղինակները յարաբերութիւն են ունենում ընկերութեան անդամների հետ, ասած և այդպիսի պատահական հրատարակութիւնները շատ քիչ օգուտ կարող են արտադրել։

Ահա բոլոր պակասութիւններից յետոյ, որոնք առաջ են գալիս գիտակարների անընդունակութիւնից, մենք պէտք է հասարակութեան ուշադրութիւնը գարձնենք և այն հանգամանքի վրա, որ ընկերութիւնը հարկաւոր չէ համարում, ինչպէս երևում է, իր գործունէութեան հաշիւը հրատարակել։ Այդ ընթացքը պատիւ չէ բերում վարչութեան, որը դրանով խոյս է տալիս հասարակական կծռտրելից։ Միւս կողմից՝ այնպիսի գրքեր է հրատարակում, օրինակ Մօրիս Բէօկի քաղաքանաս. ձեռնարկը (թարգ. Պալասանեանի) որոնք ոչինչ օգուտ չեն կարող տալ հայ հասարակութեանը։ Ահա մեր կարծիքը մենք մի առանձին յօդուածով կպատճառաբանենք, երբ պատիւ կունենանք ընկերութեան գործունէութեան հաշիւը հրատարակած տեսնել։ Իսկ առ այժմ մենք կը յանկարծանք, որ գոնէ ապագայում ընկերութեան գործերի դեկավարները աւելի հնաոտ և ընդունակ անձեր ընտրեն մի իրական օգուտ տալ ազգային միտքի զարգացման և առհասարակ նպատակը ընթերցանութեան տարածման։ Մենք կը բարեմաղթենք նոյնպէս, որ վերջապէս հասնէր հայերի համար այն ժամը, երբ ինքնաճանաչութիւնը հազուագիւտ բան չը լինէր և մարդիկ միայն այն ժամանակ յանձն առնէին որ և իցէ մի գործի դեկավարութիւնը, երբ իրանց մէջ գոյութիւն կունենայ նախապէս և կարողութիւն բարեխղճօրէն և ազնուութեամբ այդ գործը առաջ տանելու։

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հինգշաբթի օր, յունվարի 28-ին, տիկին Հրաչեայի բէնեֆիսին, Թիֆլիսի հայոց Թատրոնական խումբը ներկայացրեց «Աֆինկա» պիէսան, հեղինակութիւն Օկտաւ Ֆեօլիէի, Թատրոնտրէն Ֆրանսերէնից օրիորդ Եղիսաբէթ Նազարբէկեանի։

—

Պարսկաստանից առացած մասնաւոր նամակներից տեղեկանում ենք որ այս տարի Թէհրանում Ամանորի տօները անցել են շատ ուրախ և զուարճալի կերպով։ Ամենքն էլ հաւաքվել էին իրանց ազգականների տունը, ուր ուրախ ժամանակ էին անցկացնում։ Ամենից աւելի ուրախութիւն էր տիրում Նասր-էդ-Դին շահի պալատում, ուր ամեն օր հաւաքվում էին մեծ պաշտօնեաները, ներկայանում էին դեսպանները և ուրիշ պատուաւոր անձինք։ Ամեն օր պալատում մեծ սեղան էր պատրաստվում, որի վրա ուտելիքներ էին մատուցանում ոչ միայն պարսկական, այլ և եւրոպական ոճով։ Ամեն օր ուրիշ ուրիշ զուարճութիւններ էին տեղի ունենում։ Մի անգամ ներկայացում էին տալիս, մի անգամ ձիարշաւ էին կազմակերպում, մի անգամ էլ ուրիշ մի բան։ Ամեն օր ուրիշ ուրիշ զուարճութիւններ էին տեղի ունենում։ Ամեն օր ուրիշ ուրիշ զուարճութիւններ էին տեղի ունենում։ Ամեն օր ուրիշ ուրիշ զուարճութիւններ էին տեղի ունենում։

ԴԱՒԻԹ ԲԷԿ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1722—1728)

—

Ի։

Օրհասական վիշտը անցաւ, կսկիծը, կատաղի վիշտը։ Վաղորդեան արեւակը իր ուրախ ճառագայթները տարածեց մռայլոտ դարձած բերդաքաղաքի աւերակների վրա։

Բերդից ոչ այնքան հեռու, հայոց բանակատեղում կանգնված էր մի առանձին վրան։ Այդ վրանը տարբեր ձև ունէր, հանրային մի և նոյն ձևը, որ մինչև այսօր էլ կարելի է տեսնել Սբ. Նշանայ աշխարհի խաչտարած ցեղերի մօտ։ Շրջապատը հիւսած էր եղէգներով, իսկ առաստաղը ծածկված էր թանձր թաղիքներով, որ տարածել էին բարակ, ճկուն ձողերի կառոյց կամարների վրա *)։

Վրանում նստած էր Ներսէս արքայազն, իսկ նրա հանդէպ չոքած էր իսանի ծերունի վիղիզը։

—Ես, արքայազն, խօսեց նա.—պիտակ եմ ձեզ ոչ իրրև վիղիզ և ոչ իրրև մի պաշտօնական անձն, այլ իրրև մի հասարակ մարդ սիրտը լի ցաւերով ու վշտերով։—Պիտակ եմ ձեզ, այն յուսով, որ հաստատված եմ, իմ ազաչանքները ունէն հնչեցնելու ձեր մօտ, որի պաշտօնն է քարոզել գիտութիւն, զգացմունքների և խիղճ, որի կոչումն է ներել և չնզոհանալ, որին ծանօթ չէ ոխը, առնելութիւնը, նախանձը։—Ես պիտակ եմ ձեզ որպէս Քրիստոսի աշակերտի և նրա վարդապետութիւնը ժողովրդին քարոզողի, նոյն Քրիստոս Փրկիչ-

*) Այդ տեսակ վրաններով կսչվում են ազգ. չուղ. թէ հայերի և թէ թիւրքերի մօտ մի և նոյն ձևն ունեն։

անդամ այնքան արդիւնաւէտ լինել, ինչքան եղել էր մի մանուկ ազգ, երբ ձեռնարկից հրատարակել մի քանի գրքեր։ Ամբողջ երկու տարվայ ընթացքում ընկերութիւնը իր կողմից միայն չորս գիրք է հրատարակել, այն է «Պատմ. Մոսէս Խորենացու» որը իսկապէս արտատպել է, «Ներքինդեղի պատ.», «Մօրիս Բէօկի» ձեռնարկը և «Ուխտատրքը»։ Մնացեալ 8 հրատարակութիւնները եղել են մասնաւոր անձանց ձեռքով դիտ ընկերութեան դուրսից առաջ։ Ընկերութեան գործունէութիւնը միայն այն է ապացուցանում, որ չը պէտք է այդպիսի հաստատութեանց համար այնպիսի անձանց ղեկավար ընտրել, որոնք ունեն չատ ուրիշ զբաղմունքներ։ Ես ճշմարիտ, Թ. ընկ. Ն. գրաս. գործատարները այժմեան է անհնարին չափ զբաղված հասարակական գործերով։ Նա, կարծէք, հիմնված է նրա համար միայն, որ մի քանի պարտիներ, որոնք «Փորձի» մէջ մի քանի յօդուածներ գրելով կարծում են թէ ամբողջ հայ ազգը պարտաւորեցրել են, ընկերութեան հրատարակելի գրքերի սրբագրութեան պատրուակով հարիւրներ տանուն։ Ինչ մի տեսակ կարիք կար մեզ ծախսել և Մովսէս Խորենացու պատմութիւնը պարտաւորելով դրա համար պ. Պալասանեանցին, «Փորձ» տպագրի աշխատակցին 400 րուբլի տալ իբրև արդարութեան վարձ, քանի որ Մովսէս Խորենացու վէնեսկի տպագրութիւնը կայ։ Եւ դեռ արդարանում են մարդիկ տանելով թէ ընկերութիւնը չունի նհնարաւոր միջոցներ։ Ընկերութիւնը միջոց է գտնում տալ տալ Մովսէս Խորենացու պատմութիւնը, «Ուխտատրքը», Մօրիս Բէօկի պէս մի ձեռնարկ բարոյական անհետաքրքրութեան, մինչդեռ ուսանող Հրաչեայի «Վերատակար միջառներ» բրոշիւրը վեր ընկած մնում է, մինչդեռ մեր դպրոցները զուրկ են պիտանաւոր դասագրքերից։

Մի ուրիշ, բայց աննշանագոյն պակասութիւնն այն է, որ ընկերութեան վարչութիւնը ինքն չէ հասկանում թէ ինչ պէտք է գործել։ Նա չունի գործունէութեան մի որոշ նպատակ, նա չէ հետապրքրվում իմանալ թէ որ տեսակ գրքեր ունի հարկաւոր և անհրաժեշտ են հայ ժողովրդեան։ Ուանի որ ընկերութիւնը չունի առաջ միջոցներ, նա պէտք է միայն մի ճիշդ ընտրէ իր համար և այն է, կամ դպրոցների համար գասագրքեր հրատարակել և կամ ժողովրդական գրքեր ի լոյս ընծայէ, այսինքն գիտութեան զանազան ճիւղերը ժողովրդականացնել ընթերցող հասարակութեան մէջ։

Օրինակ, ինչ հիանալի բան կը լինէր, եթէ առողջապահութեան վերաբերեալ մի քանի բրոշիւրներ հրատարակվէին և քաղաքներում ու գիւղերում ցրվէին։ Ընկերութիւնը, չնորհիւ և ֆանատական Լազարեանցի, մի երկու այդպիսի բրոշիւրների հրատարակութիւնը իր հաշիւն է առել, բայց նա կարծէք գիտումը այդ գրքերը չէ ցրվում, որպէս զի աւելի օգուտ չունենայ արտրտանալու և ապացուցանելու Բաթալեանին թէ չը պէտք է այդպիսի բրոշիւրներ հրատարակել։ Ես հաստատապէս գիտեմ, որ եթէ օրինակ, «Նեղ և խուսա բնակ.» բրոշիւրը ուղարկվէր Վլադիկաւկազի նեմը, այդտեղ առ նուազն 200 օրինակ կը տարածվէր։ Ընդունելով հրատարակութեան մի որոշ ճիշդ, ընկերութիւնը միայն տպում է այն գրքերը, որոնք պատահմամբ ուղարկում են իրեն, կամ որոնց համար առանձին միջնորդներ են յիշում, կամ թէ որոնց հեղինակները յարաբերութիւն են ունենում ընկերութեան անդամների հետ, ասած և այդպիսի պատահական հրատարակութիւնները շատ քիչ օգուտ կարող են արտադրել։

Ահա բոլոր պակասութիւններից յետոյ, որոնք առաջ են գալիս գիտակարների անընդունակութիւնից, մենք պէտք է հասարակութեան ուշադրութիւնը գարձնենք և այն հանգամանքի վրա, որ ընկերութիւնը հարկաւոր չէ համարում, ինչպէս երևում է, իր գործունէութեան հաշիւը հրատարակել։ Այդ ընթացքը պատիւ չէ բերում վարչութեան, որը դրանով խոյս է տալիս հասարակական կծռտրելից։ Միւս կողմից՝ այնպիսի գրքեր է հրատարակում, օրինակ Մօրիս Բէօկի քաղաքանաս. ձեռնարկը (թարգ. Պալասանեանի) որոնք ոչինչ օգուտ չեն կարող տալ հայ հասարակութեանը։ Ահա մեր կարծիքը մենք մի առանձին յօդուածով կպատճառաբանենք, երբ պատիւ կունենանք ընկերութեան գործունէութեան հաշիւը հրատարակած տեսնել։ Իսկ առ այժմ մենք կը յանկարծանք, որ գոնէ ապագայում ընկերութեան գործերի դեկավարները աւելի հնաոտ և ընդունակ անձեր ընտրեն մի իրական օգուտ տալ ազգային միտքի զարգացման և առհասարակ նպատակը ընթերցանութեան տարածման։ Մենք կը բարեմաղթենք նոյնպէս, որ վերջապէս հասնէր հայերի համար այն ժամը, երբ ինքնաճանաչութիւնը հազուագիւտ բան չը լինէր և մարդիկ միայն այն ժամանակ յանձն առնէին որ և իցէ մի գործի դեկավարութիւնը, երբ իրանց մէջ գոյութիւն կունենայ նախապէս և կարողութիւն բարեխղճօրէն և ազնուութեամբ այդ գործը առաջ տանելու։

Հ. Առաքելեան

Ինչ կընենք, ուր ենք. ևս թէ առաջ կերթանք: Պատրիարքի հրաժարականի խնդիրը նոյն վիճակին մէջն է, դէթ առ երեսին, ինչ որ էր քառասուն օր առաջ: Հրաժարականը մերժուած Ազգ. ժողովին, մերժուած Բ. Դուռնէն: Եւ պատրիարքը չէ կարող ևս առնել հրաժարականը առանց փոփոխութիւն եղած ըլլալը—իրաց վիճակին մէջ: Խնդիրն հոս է. պիտի ըլլայ այդ փոփոխութիւնը: Թրքաց հասատոյ հանդամանութեան մաս կը կազմէ այն համոզումը թէ բարեկարգութիւնք միշտ հոս մը ունին քրիստոնէութեան և եւրօպական քաղաքակրթութեան, մահաբեր խլամական պետութեան: Պատրիարքն ճնշում մը միայն կրնայ բարոյել պիրենք ընել ինչ որ հակառակ է իրենց համոզման: Հայկական խնդրոյ առթիւ պէտք չէ յուսանք այդ ճնշումը: Բարեկարգական հարցերը Թիւրքիոյ մէջ լուծելու կենսական պայման մը կայ որ կը պակսի մեզ: Վաթսուն տարիէ Թիւրքիոյ զանազան մասունքները նէթ անջատուելան իրմէն, կամ իրեն հետ միասին մարտակից կենալ մը կը վայելեն, իսկ Հայրն. Եւրօպիոյ հասարակաց կարծեաց չէ, որ թէպէտ անապին էր ի նպաստ իրենց: Պատրիարքին անողոքելի օրէնքներ անի: Թիւրք կառավարութեան ո և է ձանձրոյթ պատճառելու վիճակի մէջ չենք, որովհետև մեզ ոչինչ բարիք անոնցմէ:

Յարմէ հետէ պատրիարք չունինք, բնական է որ ազգային գործերը քիչ շատ տարտամ վիճակի մէջ ըլլան: Գործոց բոլոր հոլը միացած է պ. Տիգրան Եւսաւիեանի վրայ, զոր Ներսէս պրպտան ինքն ընտրած էր Ազգ. վարչութեան առենապետ: Պ. Եւսաւիեան առարկայ է զանազան յարձակմանց, սակայն հանդուրժած է թէ իր պարտականութիւնները խղճի մտօք կը կատարէ: Մենք ալ գիտենք որ պ. առենապետը ճարտար անձ մ'է և ազգային գործերը լաւ վարելու ոչ միայն փոխադ այլ և կարողութիւն ալ ունի:

Պ. Եւսաւիեան Բ. Դրան հետ բանակցելով կարգադրութիւնը որ, օգտակար է թէ Օսմ. իշխանութեան և թէ հայ ազգին որ շուտով վախճան դրուի այն ամեն դանգատանաց զոր պատրիարքը ներած է իր հրաժարականին մէջ: Գիտի յայտնի:—Ամենէն առաջի մտահոգութիւն պատճառողը Կիլիկիոյ կաթողիկոսին խնդիրն է: Այնպէս կերևի թէ այս հարցը մեր վախճած կիրպովը լուծուի: Մատնուած տեղեկութիւններ ստացած ևմ թէ նախարարները այժմ բաժանուիլ են այս խնդրոյն մէջ: Սակի բաշա հիմա կը հակի այն կարծեաց թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կ. Պոլսոյ պատրիարքութիւնէն պէտք չէ բաժնել քաղաքականապէս, և այս առթիւ պէտք չէ հայոց ազգին և Բ. Դրան մէջ հակառակութիւնը վառ պահել: Իսկ ճշմարիտ բաշա, արդարութեան գործոց նախարարը, հակառակը կը պնդէ:—Բ. Դրան և Անգղիոյ յարաբերութիւնները քանի որ այս վիճակին մէջն են Սախտ ալ իր կարծիքը չը փոխէր:—Այս խնդրոյն վրա առնչի մանրամասն տեղեկութիւններ ստացած ևմ, բայց առայժմ հաղորդել պատշաճ չէ: Սա համոզումը գոյացաւ յիս թէ պ. Եւսաւիեանի վարչութեան օրով Կիլիկիոյ կաթողիկոսական խնդիրը Մկրտիչ կաթողիկոսի փափագած կերպովը լուծուի: Մանաւանդ տեղեկութիւններ ստացած ևմ թէ նախարարները այժմ բաժանուիլ են այս խնդրոյն մէջ: Սակի բաշա հիմա կը հակի այն կարծեաց թէ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կ. Պոլսոյ պատրիարքութեն

բնել: Այդ հաստատները կոչած կը լինեին: Առանց վերաբերելու ակտ եղած անգլո-բուհենեներն ու նկատողութիւններն յաջորդ թղթատարով, ովքեր դիտողութիւնները չէին յաջողած է և թղթատարը առաւօտեան կանուխ կելլէ:

Ցօգտա Միացեալ ընկերութեանց մեծ պատրանք մը պիտի ըլլայ: Անգղիոյ դեսպանը ընդունած է այդ պարահանգիստի պաշտպանութիւնը: Ճանձնաժողով մը կազմուած է որոյ նախագահն է պ. Ֆօսթըր, Պանկ-Օֆ-Էնկլանտի անդամ, եւ որուն անդամներէն են պ. Ցովսէփ Ազարեան, եղբայր հռովմէական հայոց Ազարեան գնդ. պատրիարքի: Դէպ-նախագահ պ. Մէք. Փորթուգալեան, հակահաստատական մասէ, անհաւատքէ, նախագահ կ. Պօլսոյ մաքսատան բարձրագոյն ժողովոյ, և ազգային երեսէ պատմագիտ: Քարտուղար պ. Ազէքսանդր Միրիմ-Գուլի, յայտնի երիտասարդ վաստակաւոր, եղբայր պ. Ցար. Միրիմ-Գուլիի, առնուազն Ազգ. ժողովոյ ելմէ յանձնաժողովը, որ բաղկացած է 30-էն աւելի անձէ, աշխատի ինչպէս որ պէտք է, կրնայ 10,000 բոլորի մօտ պրամ հատարել, գումար մը ուր մնայուն կը կարօտի ընկերութիւն:

Վերոյիշեալ արժանի կէտ մը: Այսօր հայ և անգլիոյ եւրոպայի լրագիրները կը հրատարակեն յանձնաժողովոյ անդամոց անուններն: Անոնց մէջն են «Թայմզի» և «Թան» լրագիրներու կ. Պօլսոյ թղթակիցները, կ. Պօլսոյ «Սթանտըրտ» և «Լէվանթ Հէրալտ» թերթերու անօրէնները: Սակայն հայ թերթի մը խմբագրին կամ անօրինին անուն չը տեսանք: Ցիմ յիշեր ալ որ այսպէս արուած պարահանդէսներու յանձնաժողովներու մէջ հայ խմբագիր մը գտնուած ըլլայ, մինչ միշտ առաջ խմբագիրը կան: Ազգ. կրթական մարմնոյ օգտին համար աշխատելու կոչուած խումբին մէջ ինչու հայ խմբագրութիւնը ներկայացուցիչ մը չունենայ:

—Սակայն ինչն իրենց ալ կը հարցնեմ, արդեօք ձի է մեզատուրը, չընտրողը թէ չընտրուողը:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—կ. Պօլսոյ մեզ հաղորդուած են, որ այս օրերս լորդ Դաֆերինն կրկին անակնկալութիւն ունեցաւ սուլթանի հետ հայոց խնդրոյ վերաբերութեամբ: Սուլթանը խոստացաւ ամէն ջանք գործ դնել Հայաստանի վիճակագրութիւններուն խրնդրոյն իրագործումը կարգադրութեան չափ չառաջնեալու:

—կ. Պօլսոյ մեր թղթակիցներէն մէկը մեզ գրած է որ հայոց լրագիրներուն մէջ է տպուած, որ պարսից շահը կանչել է Լօնտոնէն հայազգի Մէլքում-խանին, որ Լօնտոնի պարսից դեսպան էր, և նշանակել է նորան Գարսկաստանի մեծ-վիզիր, այսինքն առաջին մինիստր, նոյնուամն վախճանուած մեծ-վիզիրի տեղ:

—Լօնտոնի «Daily News» լրագիրը հաղորդած է, որ անգլիական պատգամաւորներն ժողովի նիստուած, փետրուարի 9-ին, իրլանդական գործերն ու նիստր Ֆօրսթէր, կառավարչական քաղաքականութիւնը պաշտպանելով, արտայայտուած էր Պարնէլլի և պարլամենտի մի քանի իրլանդացի անդամներուն կալանաւորութիւնը հետևեալ խորհրդածութիւններով: «Դուրք դրուած էին ժողովրդին չը հնազանդիլ օրէնքներուն և աշխատած էին թագուհու իշխանութիւնը Իրլանդիայում փոխարինել իրանց անձնական հզօրութեամբ:» Ֆօրսթէրի ճառը երկու և կէս ժամ չարունակեցաւ, որից յետոյ մեզատ վիճաբանութիւններ սկսան տեղի ունեցած վիճաբանութիւնները մինչև մեռ նիստը յետաձգելնուն:

—«France» լրագիրը Եօխանէն պատգամաւորներն ժողովի փոխ-նախագահ ընտրելու առիթով առած է հետևեալը: Պատգամաւորներն ժողովը վերջնականապէս կտրեց Գամբետտայի հետ. նա իր իրաքանչիւր գործողութեամբ ապացուցանում է այդ: Այդպէս կարծում են բոլոր կողերը, միայն առաջին քայլն է դժուար, և որքան ատանկ պօրեղ էր սկզբը, այնքան խորն է և առելութիւնը: Այսօր մեծամասնութիւնը, որը այնքան երկար ժամանակ խոնարհում էր խորհրդի նախագահի կամքին, զգրխնեց այդ մոնոխական քինից: Բէրլիի պատգամաւորը առատիկ ձգեց լարը, և նա պատուեցաւ: Հանրապետականների ժողովը չատ լաւ է զգում իր պարտաւորութիւնը և չէ կարող որ և է տիրոջը հնազանդիլ: Եօխանէ Գամբետտայի անձնական հզօրութեան է, և նրա ընտրութիւնը խորին նշանակութիւն ունի:

—«Presse» լրագիրը յունվարի 28-ից հետաքրքիր մանրամասնութիւններ է պատմում մամուլի դրութեան մասին Բերլինում: Տրամադրութիւնը, ասում է այդ լրագրի թղթակիցը չատ հանդիստ և ախորժելի չէ: «Liberal Correspondenz» լրագրի աշխատակիցները պատմում են, որ անցեալ չորեքից ամեն օր խմբագրութիւն է գալիս պօլիցիական պաշտօնեան և պահանջում հարցումները նոր է անում: Այդ պատճառով խմբագիրը այլևս այն բոլոր թղթերը, որոնք կարող էին այդ պատրուակ հետապրդութիւնը չարժել: «Lib. Corr.» լրագիրը ազգային ազատասիրութեան օրգաններից ամենաչափաւորն է, այդ պատճառով պօլիցիական հսկողութիւնը ամէն օտարազգի և անբաղատելի է:

—Ֆրանսիական պարլամենտական յանձնաժողովը, փետրուարի 8-ին երկարատև նիստ ունէր: Ժողովը միաձայն ընդունեց սկզբունքով պատգամաւոր Նակէի առաջարկութիւնը ապահովելու մասին: Ներկայ ամենայնիւ այդ նախագիծը բուսական չատ փոփոխութիւնների կենթարկվի և թէև յանձնաժողովը սկզբունքով համաձայն է այդ առաջարկութեան հետ, բայց մանրամասնութիւնների մէջ բաժանվում է նրա կարծիքէ:

—Փարիզի «Constitutionnel» լրագրի խօսքերի համեմատ Փարիզի 20-րդ շրջանի (Բէլվիլի) բնակիչները վճռեցին, փետրուարի 10-ին, իրանց առաջին ժողովում, որ եթէ Գամբետտա չի գայ իր ընտրողների ժողովում հաշիւ տալու իր յանձնառած լիազօրութիւնների համար, այն ժամանակ ընտրողներից կազմված պատգամաւորութիւնը կառաջարկի նրան հրաժարվել պատգամաւորի կոչումից:

—«Polit. Corresp.» լրագիրն փետրուարի 7-ին կ. Պօլսոյ պրած են հետևեալը: «Գործերի դրութիւնը Աֆրիկայում անպատար միևիսարների խորհրդի առաջին է դառնում պալատում: Այդ խորհրդակցութիւններից վերաբերվում են և նիհիլի մէջ պատահած անցքերին, որոնց նշանակութիւնը անկասկածելի է, որովհետև յուզմունքը ինչքան դեռ է աճում է:»

—«Իէյտսերի ընկերութիւնը» փետրուարի 6-ից Թամբիկից հետապրում են հետևեալը: Մեչխեդից առացած նամակներից նայելով, Լիւբ-խանը պատկական կառավարութիւնից դեռ ևս վոզ չէ առացել, որ անհրաժեշտ է Թէհրան գնալու համար, բայց նրան խոստացված է, պարսից մայրաքաղաքը հասնելուն պէս, մօտ 4000 ֆունտ ստերլինգ տալ: Լիւբ-խանի ամիսան ցանկանում է Թէհրան ուղևորվել նրան, բայց պարսկական կառավարութիւնը գերապատում է, որ նա միայնակ լինի: Բայց վերջին տեղեկութիւններից նայելով, Լիւբ-խանը մտադրութիւն չունի չատով հետանալ Մեչխեդից: Գիտէ նա այնտեղ կէս տարով առն վարձից և խոթից բերել առնց իր բնտանիքը: Հաստատում են, որ իբր թէ Լիւբ-խանը յարաբերութիւններ ունի Թուրքմէնների հետ և դիտաւորութիւն ունի նրանց հետ միասին յարձակվել աֆղանական երկրի վրա: Ասում են, որ Լիւբ-խանը 1000 ձիաւոր մարդիկ ունէ: Արդուլահման-խանի դեսպան, Ահմէդ-ալի-խանը, անցեալ չորեքի Թէհրան հասաւ: Դեսպանութիւնն նպատակն է Թուլուսութիւն առնալ պարսից կառավարութիւնից վերադարձնել աֆղանական առնականների վրա այն 6000 ընտանիքները, որոնք անցեալ տարվայ անկարգութիւնների պատճառով Հէրատից, դուրս եկան Աֆղանիստանից և բնակվեցան Խոռասանում, իսկ այժմ ցանկանում են հայրենիք վերադառնալ:

—Լօնդոնի «Իէյտերի ընկերութիւնը» կ. Պօլսից հետապրում են, փետրուարի 9-ից, որ Ալի-Ֆուատ փաշան ժողովրդական լուսաւորութեան մինիստր նշանակվեցաւ: Նախկին մեծ վիզիր Մահմուդ-Նէդիմ փաշայի աղջականները, Իէուֆ-բէյ և Սամիբէյ, որոնք պետական յանցանքի մէջ մեղադրված լինելով, կալանաւորված էին, կրկին ազատվեցան:

—կ. Պօլսից մեզ հաղորդում են որ ամեն օր Զիլունեսիից, Սամաթիից և փոքր-Ասիայի չատ տրիչ տեղերից մեծ բազմութիւններ յոյները կ. Պօլսի վրայով գաղթում են դէպի Յունաստանին նոր միացած երկիրները: Ինչպէս լրագիրները հաղորդում են, այդ երկիրներում յոյները արդէն կազմում են 90 տոկոսնոց ամբողջ ազգաբնակութիւնից: Յոյների հայապատկերը, ասում է մեր թղթակիցը, կազմում են Թիւրքաց հայերը, որոնք, ընդհանրապէս, անդադար գաղթում են Հայաստանից և վերադառնալ կ. Պօլսում, այդտեղ ընդմիշտ բնակվելու համար:

—Վանից մեզ գրում են որ Սուլէյման մամուդ ժողովը այս տարի մեծ քանակութեամբ ոսիխան է ցանել տուել վանի վիլայէթում, որ և խոստ առատ է գալս եկել: Առաջիկայ գարնան այդ պատճառով մանուածոգովը սկսած է ոսիխան ցանել տալ և խարբերդի ու Բաղէշի կողմերում: Թիւրքաց կառավարութիւնը, ինչպէս հաստատում են, խոստացել է առաջին տարիները այդ բերքից տասանորդ չառնել:

—Գալատասարայից մեզ գրում են որ Թիւրքի կողմերում պատից սէյրսէֆիները սասիկ ամրացուած է և իր զօրքերի թիւը մեծացուած: Առաջիկայ գարնան գարձեալ զօրքերի մեծ չարժումն է գալիկում, մանաւանդ որ հաստատուած է այն լուրը թէ Շէյխ-Ուլգադիրը իրաւունք է տացել առաջինից վերադառնալ Հայաստան:

ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի անդամների չաբաթագրութիւնը Գամբետտայի հրաժարականին առիթով տանման չունէր և իրարանցիք քալլաքոմում արտայայտում էր ամենախոյտառակ կերպով: Մի նոյն օրը, երեկեան, պատգամաւորների այն ժողովից յետոյ, որ միևիսարութեան նախկին պետը հարկաւոր համարեց հրաժարական տալ, սրանցից մի քանի թերթերում ու շրջանակներում մի քանի յայտարարութիւններ տպվեցան, որոնց մէջ Գամբետտայի ծեռներէը հրապարակում էին վերջինի բացման հանդիսին: Իսկ պատկերատպող թերթերից մէկում ներկայացուած էր մէկ կառապետ, որի կառապանը Թօշֆօրն է, իսկ կառքի ետևը գնում է Լուիզա Միշէլ պարոնից, մէկ ձեռքում ունենալով չոմփակ, իսկ միւսում երկայն դրօշակ հետևեալ վերնագրով. «Մեծ միևիսարութեան Թագուհին:» «Grelôt» պատկերատպող թերթը իր ընթերցողներին հետևեալ պատկերը ընծայեց: Պատկերը ներկայացնում է Գէթեզմանեայ. Թօշֆօրը, Համլէտի չորեքով, ձեռքում բռնած ունի Գամբետտայի գանգը, և շրթպիրին նմանվելով բացականչում է Գանիայի պրինցի յայտնի խօսքերը «Poor Jorick» (Թեղա Եօրիկ):

* * *

Գերմանացի նշանաւոր պատմագրի Լէօպօլդ ֆոն-Բանկէ, փետրուարի 13-ին, ոտնից բերելիս դիտաւորութիւնների ակադեմիայի իր անդամակցութեան յոբելեանը: Նա կայսրից գաղանի խորհրդականի տիտղոս առացաւ: Այժմ Բանկէ 86 տարեկան է և չը նայելով իր զառամեալ հասակին, նա ոչ թէ միայն ֆիզիկապէս առոյգ է, այլ և պահպանել է իր մտաւոր ընդունակութիւնները: Դեռ 1867 թուին նա ոտնից իր յիսնամեայ գիտական յօբելեանը:

* * *

Թօժէր ամենահռչակաւոր քաղաքական հանգամանքների տարերութեան պատճառով ցանկացան ապահովագրել առանձին: Մարդը վաճառական է, որը 200,000 ֆրանկ կապիտալ ունի, իսկ կինը քաղաքականութեամբ է պարապում և մտերիմ յարաբերութիւններ ունի Լուիզա Միշէլի և Լուիզա Մինի հետ: Մինչև 1871 թիւը, նա, լաւ կրթված կին լինելով, հանիւս կերպով տպրում էր իր մարդու հետ: Բայց 1871 թուի տխուր օրերը նրան սոսկալիօրէն վիրաւորեցին: 1872 թուից իրարանցիք նաև կալէդոնիա ձանապարհ ընկնելու ժամանակ, պ. Թօժէր նկատում էր, որ իր մտքերից փոզր են պակասում: Սկզբից նա կարծում էր, որ գողերն են յափշտակում փոզերը, ապա հասկ, և յանկարծ յայտնվեցաւ, որ մտքերից փոզր գողացողը իր կինն է, որը գործնականապէս իրագործում էր կատիտալը հանապարհ բաժանելու թէօրիան: Պ. Թօժէր յիշեցրեց նրան օրէնքի այն յօդուածը, որի հիման վրա կինը պարտաւոր է հնազանդվել իր մարդուն, և հրաժարվում էր նրան փոզեր տալ: Տիկին Թօժէր ոսկերչին 3000 ֆրանկ արժողութիւն ունեցող ադամանդեայ կռճանիներ պատրաստեց, և իր ամուսնուց փոզերը վերցնելով, կօմանդիտներին տուեց: Պ. Թօժէր փոզերը երկրորդ անգամ վճարեց: Մի քանի ժամանակից յետոյ ոսկերչներին փոզ հարկաւորվեցաւ մէկ լրագիր հրատարակելու համար: Տիկին Թօժէր ոսկերչից հազար ֆրանկ արժողութեան չորեր կարել տուեց պարտքով, և պակասող ծախելով, տասնեակ փոզերը ոսկերչներին տուեց: Նա մտերիմ յարաբերութիւններ հաստատեց Լիտտրէի, Վարլէի և Վէրա Ջասուլիչի հետ: Մի գեղեցիկ օր, իր մարդու մտքերը կատարելով, նա 150,000 ֆրանկի արժէքներ հանեց և մարդուց բաժանված ապահով ապրել, ընդունելով իր մօտ ոսկերչականներին և հրէականներին: Պ. Թօժէրի համար անտանելի էր այդպիսի կնոջ հետ ապրելը և նա ցանկացաւ ապահարզան տանալ: Այս օրերս գատարանը երկու կողմերին ևս ապահարզանի իրաւունք տուեց:

* * *

«Gaulois» լրագիրը հետևեալ ծիծաղելի անեկդոտ է պատմում: Մարիկիզ Շ. վաճառանոցում չատ օրինաւոր և հարուստ ծերունին, նկատեց որ այն ծխփերը, որոնցով նա ներկում էր իր մազերը և մօրուքը, նէվրալգիական տագնիկ ցաւեր են պատճառում իրան: Նա վճռեց յանկարծակի ծերանալ: Նրա բարեկամները, տեսնելով նրան ձեռնի ու տոպրակած, զարմանում էին նրա վրա: «Ինչ արած բարեկամներ, ասեց նրանց խորամանկ ծերունին, ես ամարին փոզեր կոչրի «Union générale» բանկում: Պատ հանկարտում է ք իմ ցաւը. իմ մազերը և մօրուքը մեկ դիշերվայ մէջ ապրուակեցին»... Ահա ձեզ բաղդատուր միտք: Նրա վրա ցաւում են, աշխատում են միխիթարել և ոչ ոք պատրաստ փող չէ վերցնում նրանից:

* * *

Ժողովրդական վերջին միօգտագրութիւնից յայտնվեցաւ, որ Փարիզի բնակիչների թիւը 2,225,910 հոգուց է բաղկացած: 1876 թուին Փարիզում միայն 1,988,806 բնակիչներ կային. ուրեմն անցած հինգ տարիներում Փարիզի ազգաբնակութիւնը 235,104 մարդով աւելացաւ:

* * *

«Times» լրագրին Ֆիլադելֆիայից հետապրում են յունվարի 20-ից հետևեալը. «Պատմագրութիւնը յայտնում է, որ անցեալ տարի Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում եկել են 717,868 գաղթականներ: Գերմանիայից գաղթել են 248,323 մարդիկ, Անգլիայից և Վալլիսից—77,750, Իրլանդիայից—70,896, Շօտլանդիայից—16,441, Աւստրօ-Ունգարիայից—19,667, Նօրվեգիայից—26,824, Շվէդիայից—55,805, Զինաստանից—20,628 և կանադայից—94,159:»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱԶԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրուարի: «Правит. Вѣстн.» լրագիրը յայտնում է. մոգնվում է նորաձև հագուստ գինուորական-պաշտօնական անձանց և սպիտակ գինուորների համար, այն է ուսերից հագուստ՝ գլխարկները սպիտակ գարնամարթուց և բարձր կօշիկներ: Լրագիրները փետրուարի 11-ից հաղորդում են. իշխան Դոնդուկով-Կօրսակով ուղևորվում է Բոմբայ և Սև ծովի եղերքը, իսկ թիֆլիս կը հասնի մարտի 13-ին: Ներկայ կը հաւաքվին միևիսարութիւնների ներկայացուցիչները գրեթէ կառավարչի իրաւունքները քննելու համար: Ընդհատված է մայիսին ձնացած կովկասը այցելել: Նոր վարչութիւնն վերջնական նախագիծը կը քննվի պետական խորհրդի մէջ: Լիսպերտները աշխատիքից գադարեալ նեռաեր կունենան: Փետրուարի 21-ին միևիսարութիւնն եղբայակցութիւնը խմիչքների գործի մասին իմանալու կ՚ուզէ, կը պահեն գաղթականական հարցը քննել: Փետրուարին պետական խորհրդի մէջ կը քննվին պիւդջէների կրեդիտի և գործարանների մէջ աշխատողների ու արհեստաւորների երեխաների դրութեան բարելաւման հարցերը: Հերթագովինցիները այրերին Մեսոպիա խոնարհվիլին ուղեկ տալու համար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 փետրուարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 25½ կ., հինգերորդ 90 ր., նեղքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր. 75 կ., երկրորդ 216 ր. 75 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 87½ կ., երկրորդ 89 ր. 87 կ., երրորդ 89 ր. 87 կ., ոսկի 8 ր. 14 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 24,6 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ 25 պֆ., Փարիզի վրա 253 ֆրանկ 50 սանտիմ: Բօրսայի արտադրութիւնը թոյլ է:

ԼՕՆԴՕՆ, 11 փետրուարի: Անգլիական բանկը փոքրացրեց զիսկօնտ:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՁՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երևանեան հրապարակի վրա քաղաքային կալուածքի նորոգութեան պատճառով

ԹՂԹԻՎԱՃԱՌՈՒԱՏՈՒՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆԻ

տեղափոխում է ժամանակաւորապէս փետրվարի 13-ից մինչև 10-ն մարտի **Ի ԱԶՈՒԲԱԼՈՎԻ ՏԱՆԸ** *առևտրական բանկի տակ, իսկ մարտի 10-ից մշտական առևտուր կը տեղափոխվի Վօրցօվի փողոցի վրա Կ. Ե. Զուբալովի տան, Երևանեան հրապարակից 5-ը հանար։*

3—3 (1)

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ

քան իէ ուրիշ տեղ. Թէյ, կակաո, ՇՕԿՕԼԱԴ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրճօկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, հրես լուանալու ամաններ, ԿՈՂՊԻԿՆԵՐ, ՋԳՆՈՑԱԿԱՒՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԻՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կէօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուխտներ, ՄԱՀԱՃԱԿԱԼՆԵՐ, հրեսսրիչներ, թաշկինակներ, կանանց գուլպաներ, մարգկանց գուլպաներ, առուլաեմ սապօն, հոտաւէտ ջրեր, շիրբեա, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնեակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՑՆ ՏԵՂԸ** *վաճառականներին* **ՄԵԾ** *քանակութեամբ ծախվում է* **ԹԷՅ**. *պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։*

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՁՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէվօլվերներ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շինիլդի գանակներ 3 ր. 50 կ. պիժիոնը, պրօշեներ կիսագնով, ֆիլտրաներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և բէվօլվերների թիֆլիսում։

96—100

ԱՐԴԻՆ ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒՋԵՏԻՉԻ** *„ДВѢ ЕЛКИ“ մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը* **„ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ“** *անուանակ։*

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ։

Կարելի է ստանալ թէ՛ հեղինակից գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабаръ Ивану Петровичу *Назаріанцъ.*

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՁԱՏԻԿ *գլաբիներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւհներ 4 ր., բինջահներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., գրաստ, մահուդ, տրիկօ, սրբիչներ և ալբօմներ կէս գնով։ Ընդհական բրինձ 6 կ., սապօ և պերլօվայա կրեսպա 9 կ., պաներ շեաներ 70 կ., նշշասյ կօլմանի 18 կ. ֆունտը, լուծոզական ձեռի պիլուլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ.։* **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ *Մեղրամոմ և արծաթեղ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 րուբլուց։* **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։

11—36

„ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ“

Այս ֆիրմայով բանալով երևանումն դրա-վաճառանոց՝ կցելով նորա հետ ուսուցիչ-բանական, պիւանական, նկարչական և կազմարարական իրեղէնների խանութ, յանձն եմ առնում տալ միշտ յիշեալ տպարաքներից և-ևանի և նորա շրջակայ քաղաքների և գիւղերի գիւանատներին և ուսուցիչարաններին շատ ձեռնտու գներով և պայմաններով։

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցեատոմսեր, բրօշիւրներ, նաև գրքեր, ամենաարժան վարձով։

Ինձ մօտ է գտնվում իմ հրատարակած „Տնային բժշկական մատենադարան Թեան“ գրքոյկի պահեստը։

Իմ հասցէն. г. Эриванъ. Н. Симеонянцу, магазинъ. „Другъ-Дѣтей“.

ԱՆԱՀԻՏ

ՀԻՆ ԶՐՈՑԻ ԳՐԵՑ ԳԱԶԱՐ ԱԳԱՑԵԱՆՑ

Գինն է տոմսն ակզ ուզարկելով 50 կօպ.

10 օրինակից աւելի գնողներին 20% զեղջուկն կը լինի։

Պահեստը գտնվում է Թիֆլիզ մեր տպարանում։ Կարելի է ստանալ և Թիֆլիզի հայ գրավաճառներից։

Խնարհաբար կը խնդրեմ այն մեծ. օտարաքաղաքացի պարոններին, որոնց ուզարկված է վերոյիշեալ գրքերից վաճառելու համար, թող բարեհաճեն գումարը փութով մեզ ուզարկելու. նոյնպես եմէ կը գտնվին և ուրիշ քաղաքներից վաճառելու համար նեղութիւն յանձն առնող պարոններ, թող յայտնեն իրենց կամքը՝ մենք շնորհակալութեամբ կուղարկենք նոցա վերոյիշեալ գրքերից։ Հասցէն՝ մեր տպարանի անուանով։

Մովսէս Վարպետեանց 4—6

ԽԱՒԻԱՐ *առաջին տեսակի 70 կ. նոսր խաւիար առաջին տեսակի 1 ր. 20 կ., շորի համար շշէօտականեր 30 կ., բազկամեռամահճակալներ 10, 14 և 18 ր.։ Օրհնութեամբ կը ստացվի* **ՊԱՆԻՐ** *չեռաներ 60 կ., ֆունտը։* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** 7—10

Այս տեսակ ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ IV և V գրքոյկը. „երկու վէպիկ“ Անգիսենից. „Սոխակ“ և „Խոզաբած“, գին. 20 կ., առ այժմ դիմել՝ Тифлисъ. Ред. „Мегу“ Тиграну Назарьянцъ.

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կոպէքներ 15 կ. հատը, 10,000 սանկի 8—40 կ. հարիւրը, 10,000 պնակներ 5 կ., 5,000 շիշ պօրտվէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և դրչակոթներ 8 կ. դիւժինը, 2,000 Ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական բէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրաստ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային* **ԽՈՏ** *պուդը 2 ր. 50 կ.։*

54—60

ՇԵՐԱՄԱՊԱՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԽԻՈՒՄ

ETABLISSEMENT SERICICOLE DE NOUKA

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄԵՐ

Պետին բժշկների ՖՐԱՆՍԻԱՑԻՑ և ԻՏԱԼԻԱՑԻՑ արդիւնաբերված **ՊԱՍՏԵՈՐԻ** *սեռակիայով։*

Ներկում է արդիւնաբերող **ԼԻՐԻՍԻ** *մի գլօտանիկ 50 կօպէկ, մի ֆունտը 48 րուբլ։*

ԹԻՖԼԻՍՈՒՄ ծախվում է Պ. ԱԼԲԼՐՏԻ մագազինում, Գլօվինսկի պրօսպէկտի վրա, տուն կօտտանեանին Զուբալովի։

ՆՈՒԽԻՈՒՄ պ. ԼԻՐԻՍԼԻ հիմնարկութեան մէջ։

1—10

ՎԵՐԱԲԿՈՒՆԵՐ 4 ր., ԾԸԾՈՂՆԵՐ 1 ր., ծալվող սէմառներ 1 ր. 50 կ., ՓԱՑԵ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 րուբլ և աւելի, ԹԷյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քօրոցներ 50 կ., պատեպա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԵՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

10,000 զոյգ գուլպաներ 25 կ.—1 ր. զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼՊԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ 1 ր.—1 ր. 30 կ., պատուսինա 40 կ.—1 ր., 300 հատ բէվօլվեր 4 ր.—35 ր., 700 ալբօմ կիսագնով, 10,000 ֆունտ ԹԷՅ ԹԷՑԱՄԱՆՈՎ, 1 ր. 65 կ. եր-կաթէ զրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։** 85—100

ՄԱՄՈՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Գտնվում է Ախալքալաքում։

Հիւանդներին ընդունում են ամենայն օր։

Առտուառաւօտեան 9—10 ժ. կոնսիլիում։ Աչքի, վէներական և խիրուրգիական հիւանդութիւնների ընդունում կ՚ըլինի ամեն օր—կանոցի և ներքին հ.—10½—12 ժ., շահադիտական—ներքին հ. կին-բժիշկ առաւօտեան 9—12 ժ. կանոցի հ.

Երեկոյեան 5½—7 ժ. պաւլօվսկի—հոգեկան, ջղային և ներքին հ., ուշադրութիւն—երեխայոց և բգի հ.

Շաբաթ օրերը—առաւօտեան ծադկահատուածութիւն.—երեկոյեան կոնսուլտացիա (ընդհանուր բժշկական խորհուրդ)։

Գիշերօթիկ հիւանդներ։

Զբաղատրների համար խորհուրդը տրվում է անվճար։

Հիւանդատոցի դիրեկտոր **ՊԱՒԼՕՎՍԿԻ**

(Տ. Շ. Կր). 12—8

Վերականգնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ** *վերադարձնող։ Գինը 2 ր. հիշը,* **ՓՈՍՏԱՑՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կօպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*



Սև և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ ԻԻՂ**, *մազերը ամրացնելու համար, 1 ր. տանը և վրձին գլխացաւի գէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն։*

77—100

ՎԻՆՆԱՑԻ ՄԵԲԷԼ. *(սեղաններ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կատօլիկոց փողոցի անկիւնում ՄԻՔԱՑԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

139—150

Առաջիկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով քաղաքական-քաղաքական և ազգային ամսագիր

„ԳՕՐԾ“

„Գործ“ իւրաքանչիւր համարը բազկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և դուրս կը գայ իւրաքանչիւր ամսի վերջում։

Նախագիծ

ա. ժամանակագրութիւն. տեքստական կարգագրութիւններ։ Ռուսաց, արտաքսմանի և կովկասի կեանքի նորութիւնները։

բ. Գիտական յօդուածներ Հայերի և նոցա գրացի ազգերի ծառեական, բարոյական և մատերական դրութեան մասին։

գ. Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական։

դ. Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպես այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու կովկասեան կեանքին է առնուած։

ե. Քաղաքական տեսութիւն։

զ. Ներքին տեսութիւն։

Մանկավարժական ժամանակագրութիւն։

ը. Այլ և այլք։

թ. Իրրև յաւելուած եւրօպական և ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգմանութիւն։

Յայտարարութիւններ։

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամէն տեղ . . 8 րուբլի
Վեց ամսուանը . . . . . 5 րուբլի
Երեք ամսուանը . . . . . 3 րուբլի

Վճարը կանխիկ է.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Խմբագիր-Հրատարակիչ Սիմէօն Հախումեանց

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Февраля 1882 года.

Типографія Главн. Управл. Намѣст. Кавказ. Лорисъ-Меликовская улица, каз. домъ.

Fonds A.R.A.M

№ 25 Փետրվարի 16 (28) 1882 Փետրվարի 16 (28) № 25

ՏԱՄՆԱՄՅԱ ԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարւանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում պրկում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգագրեալք պիտում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ուրն օրերից)։

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարւում են հրատարակչի բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ֆրանսիա։ Վերմանիա։ Նամակ Թիւրքիայից։—ՀԵՒԱԳԻՐՆԵՐ։— ՑԱՆՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Դարի բէկ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՆՈՒԻՈՒՑ մեզ գրում են. «Շատ ժամանակ է որ մտադրութիւն կայ կազմել Նուխու գաւառից մի նոր նահանգ, Նուխին էլ նահանգական քաղաք գարձնելով։ Երեք անգամ այդ գիտաւորութիւնը իրագործվելուն մօտեցել էր, բայց գարձեալ Նուխեցիների թշուառութեան պատճառով, որ իրանք չուխտասեղնին այդ մասին, չիրագործվեցաւ։ Առաջին անգամ Թիֆլիսի և Բագուի նահանգների մի մասից կազմվելու էր նոր նահանգ և նահանգական քաղաք լինելու բոլոր վճռակվեցաւ Գանձակ քաղաքին, երկրորդ անգամ հանդուցեալ Շեվկօվնիկովի առաջարկութեամբ Ջաւախեթիայի, Սամուխի, Նուխու և Ախալի երիներից սկսած է կազմվել մի նոր նահանգ, որի գլխաւոր քաղաքը սկսած է լինել Նուխին։ Գանձակը վեր գարձնել այդ մտադրութիւնը չիրագործվելու։»

—

Թիֆլիսի Հայոց ամենից եկամուտները մեզ պատմում են, որ արդէն կայացել է համաձայնութիւն Թիֆլիսի և պարսից հետ ապրելու վաշխութիւնների մէջ հետ ապրելու գինը Հաքեարի վրայով անցկացնել դէպի Պարսկաստան, որպէս որ այժմ ն. Փոլիսը միացած կը լինի Հնդկաստանի հետ, Պարսկաստանի ճանապարհով։

—

Թիֆլիսի «Тифлисск. Объявл.» լրագիրը արտակելով մեր «Հայի եաը» վերնագրով առաջնորդող յօդուածի բովանդակութիւնը, իրանից աւելացնում է մի փոքրիկ նկատողութիւն, յայտնելով իր գարմանքը որ «Մշակը» բարեպաշտութեան դէմ է, այն ինչ, լրագրի խօսքերով, ամեն բարեպաշտութեան, ինչ որ լինի նա, օգուտ է հասակորել։ Մենք մեզ թոյլ կը տանք նկատել ուստ Թերթին, որ մենք երբէք որ և է բարեպաշտութեան դէմ չենք, բայց քանը գրանում է, որ եթէ բարեպաշտութեան պարոնն կասկած լուր առած է, մեծաւ մասամբ չ՚ էլ մի որ և է բարեպաշտական նպատակով է կասկում 100,000 րուբլ ամագին գումարը, այլ միայն իր հոգու փրկութեան համար։ Կարծում ենք որ երկու նպատակների մէջ մեծ տարբերութիւն կայ։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Մեր գաւառի բոլոր գիւղերի ձիմներին անցական պօլիցիան վիճակագրում է։ Գիւղացիները չիմանալով ինչ նպատակով է կատարվում այդ վիճակագրութիւնը, այլ և այլ մարգարէութիւններ ու գուշակութիւններ են անում. ոմանք ասում են՝ երևի պատերազմ կը լինի, միւսները թէ՝ ձիմներին վրա հարկ կը դրվի և այլն։»

—

Հին-Նախիջևանի գաւառում, ինչպէս մեզ գրում են, այս տարի անասնների ցրտեր է անում, անցեալ գեկտեմբեր ամսից սկսած։ «Այս մի քանի օր է, ասում է թղթակիցը, ջերմաչափը իջնում է մինչև 18 աստիճան գրօից ցած, որ չէ ասենական երևոյթ է մեր կողմերում։ Գիւղացիները չաս են ախտում իրանց ծառերը, որպէս չէին կարող, ի հարկէ, այդ ցրտերին դիմանալ։»

—

Հաւլաբարից մեզ հաղորդում են որ հասցէների պրօտեկտորի համար այս տարի հաւաքվող ողորմութիւնները մեծ դժուարութիւն են պատճառում մեր քաղաքի ապրողներին անպարագլա մասին։ Կան, ասում է թղթակիցը, մի երկու երիտասարդներ, որոնք օգնում են անպարագլաներին թէ մատուռների և թէ բանկների մէջ արձանագրել պահանջվող տեղեկութիւնները, բայց չա կը լինէր որ բոլոր պարագլա օրիորդները հետևէին այդ երկուսի օրինակին և օգնէին անպարագլաներին, որոնք չաս մեծ դժուարութիւններ են կրում։

—

Փետրվարի 5-ին, ինչպէս մեզ գրում են ՆՈՐԲԱՑԱԶԷՏԻՑ, այդ քաղաքի երկաթ գպրոցների ուսուցիչները և մի քանի այլ երիտասարդներ առնում են հայատար գասատուի դասընթաց, յօդուտ տեղիս գպրոցներում ուսում առնող չքաւոր աշակերտների, մի հայելին ներկայացում, որի արդիւնքը, ծախսը դուրս եկած, եղաւ 56 րուբլ։ Խաղացին երեք վոդեվիլներ։ Նոր-Բայազէտում, ինչպէս հասատացնում է թղթակիցը, առաջին անգամ է որ լինում է հայոց ներկայացում և այս անգամ ներկայացման աջողվելով քաղաքի հայ հասարակութիւնը պատրաստ է գլխաւորապէս սիրում և. Աթթուռեան և ս. Բզնունեանցի գործերին։

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ փետրվարի 1-ին ս. Աստուածածնի խումբը, ստանալով թոյլտուութիւն քաղաքագլուխ Թամերլիևանցից, տուեց այդ քաղաքում մի հայոց ներկայացում։ «Չը նայելով սիրելի Թամերլիևանի չնորհալի խաղին, ասում է մեր թղթակիցը, և այն հանգամանքին որ խաղացած պիէսները նոր էին, այն է, Օրօգօվնա «Հայր և Դուստր» խաղում. Ագաթանի և «Այդ իմ ապջիկն է» վոդեվիլը, խաղում. Փանոսեանէնց, այնու ամենայնիւ չատ քիչ ժողովուրդ կար խաղատեղում և խաղատուէները հազիւ կը ծածկին ներկայացման վրա իրանց ամած ծախսը։»

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ և հետևեալը։ «Յունվարի 27-ին ուս սիրողները մի ներկայացում առնելին այստեղի կլուբի դահլիճում։ Ներկայացմանը մասնակցում էին Բաքվեցիան երկու եղբայրները։ Դահլիճը կիսով չափ հայերով էր լցված։ Յանկալի է որ Բաքվեցիան եղբայրները մասնակցեին և հայոց ներկայացումներին, որոնք արդէն են բարեգործական նպատակով։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են։ «Մեծ-Ասիայի գլխաւոր Ակքաղաքապօլի գաւառի միջնակարգ գիւղերից մինն է և ունի 100 տուն բնակիչ։ Այս գիւղում դեռ 1853 թիւին Սիրոիչ քահանայ Անդրեասեանցը իր սեփական միջոցներով հիմնեց մի ծխական դպրոց երկու դասատուից բաղկացած։ Բայց քահանայի մահից յետոյ, ուսումնասիրաները մնալով գիւղի հասարակական սեփականութիւն, հետզհետէ սկսեց ընկնել, քանի որ գիւղացիները դեռ այն աստիճան ազգ. են, որ չեն հասկանում ուսման կարևորութիւնը։ Այժմ հանգուցեալ քահանայի որդին Պօղոսը միայնակ ուսուցչութիւն է անում դպրոցում, որին յաճախում են 30 տղաներ։ Ուսուցիչը ուսանում է Ակքաղաքապօլի ուսարանում։ Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և վերջանում է մայիսի 1-ին։ Ուսումնական առարկաներ են՝ Աստուածաբանութիւն, Քերականութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Երգեցողութիւն և Թուրքերէն։ Ուսումնական գործիքներ են՝ Սեղան, Աթոռ, Գրատախտակ, Գրիչ, Մելան, Գրքեր, Քարտէզներ և Գլոբուս։ Ուսումնական գրքերից կան՝ Ալֆաբէթ, Ընթերցարան, Քերականութիւն, Թուաբանութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Աստուածաբան


Fonds A.R.A.M

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՆՈՎԻ և ԿԱՑԱԼՈՎԻ պապիրոսների թղթի գլքոյկների գործատունը ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքում հարկաւոր է համարում ու պ. գործաճոյների և գնողների ուշադրութիւնը գրաւել Ֆրանսիական Abadie թղթի վրա մեր առտպրութեամբ, Abadie գլքոյկը, 300 թերթերով, արժէ 10 կ., իսկ 150 թերթերով արժէ 5 կոպէկ։ Գործաճոյները առանց որ և է դժուարութեան կը համոզվեն, որ սա հէնց այն թուղթն է, որը Ռօստե-ի առտպրութեամբ միշտ ծախվում էր և այժմ էլ ծախվում է շատ էժան, այն է 300 թերթանոց տետրակը ծախվում է 15 կոպ., իսկ 150 թերթանոցը—7 կոպէկով։ Բացի ուրիշ լաւ թղթերի մեր առտպրութեամբ ունենք և ամենալաւ ՄԱԼԻՍ (240 թերթը—5 կոպ.), որը կարելի է առանալ և բոլորական ծառատունի բոլոր ծխախոտավաճառների մագազիններում։ Մենք հակերով ենք ծախում (գոնէ, ոչ պակաս հինգ կօթօրկաներից)։

6—10

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլօվինսկի պրօսպեկտի վրա, տուն Ձաքարատրախտ Բէլօվ։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻՈՅ

Ամենամօտ և գործնական ձևի, բացատրական կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորցնել հաշուատպութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շատով կը մնայ մնալի սակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մարդը ուշագրութեամբ. գրաս հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիճակագրութիւն „Դոզ“ վերնագրով և „Իմ երդիկը“ յատկացուածով. ցանկացողները թեթևութեամբ կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրամատնաւաճառներում և թանգ. Տէր-Միքայէլեանցի մօտ. Բացու Բանակրիչ մագազինում, ինձ մօտ և „Մարդ ընկ“ գրադարանում։ դատաստանի քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթը բնդունել։

Երեսուն սրժէքն է միասին 2 ր. 50 կ. ստորագրութիւնից յետոյ 3 ր։ Բաժանորդների անուանները և ազգանունները կը տպագրուին գրքի վերջում։

Հրատարակիչ Աբէլ Պ. Ալպենցեանց

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ԿԻՐԱԿԻ 14 ՄԱՐՏԻ



ՎԵՐՋԻՆ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Պալատական արտիստ Նորին Մեծութեան Նասր-էդ-Դին պարսից Շահի

ՐՕԲԵՐՏ ԼԻՆԴ

աշակերտ և տպագրան ընդհանուր պետի, Մահօմետ Խմայիլ Բէյի պատիւ կունենայ

տալ իր վերջին փայլուն և մեծ կախարդական ներկայացումն, ՆՈՐ ՊՐՕԳՐԱՄԱՑՈՎ։ Սկիզբը 8½ ժամին։

1—2



Վերտէսանդինեցեան **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մագիրը ամրացնող և նրանից **ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ** վիրտուոզ գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկած 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ.

մի և նոյն անդը **ԽԻՆԱՑԻ ԻՒՂ**, մագիրը ամրացնելու համար, 1 ր. տանդը վրձին գլխատյամբ գէմ, **ՏՈՒԱԼԵՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

91—100

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԵԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ·

ՍԻՕՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՆԱՆՈՎԻ ՏԱՆԸ

Գնում և վաճառում է ամէն տեսակ **ՏՈԿՈՄԱԲԵՐ** թղթեր, ոսկի և արծաթ դրամ։

Փոխ է տալիս դրամ, տոկոսաբեր թղթերի **ԳՐԱՒԱԿԱՆՆԵՐՈՎ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ** է անում Մոսկվա, Օդեսա և Արտասահման։

ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է ներքին 5% փոխառութեան տոմսակներ 50 կոպէկով.

ԸՆԴՈՒՆՈՒՄ է դրամ լաւ պահանջման 5%

" " " ընթացիկ հաշուով 5%

" " " 6 ամիս ժամանակաւ 6%

" " " 12 " " 7%

Օտար քաղաքացւոց յանձնարարութիւնները կատարում են անմիջապէս և ճշդութեամբ։

7—10 (1)

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

Ա՛ւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵՐԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՒԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակիզամներ 1. 30—12 ր., ս ո ւ ր ճ պ ո ւ կ ն ե ր ձ ամադաններ 6—35 ր., մագաններ (погребцы) 6—25 ր., ս ա մ օ վ ա ր ն ե ր 60 կ.—1.25 ֆունտը., կոխաններ պղնձէ, ամաններ, գեղմանիայի երկաթէ էմալով ամաններ. ս ո ւ մ ի վ ա յ ն ի կ ն ե ր մ ր ա մ օ ր ն ի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռ ե վ ո լ վ է ր ն ե ր ա մ ե ն ա յ ն տ ե ս ա կ 3. 50—30 ր., պատրոններ. (դուլաններ) բէլգիումի, սիգար Ռենգարդի ֆաբրիկից. պապիրոս և խմամբաքար կուշտարօվի գիլզի պապիրոսից. 5,000 ՖՈՒՆՏ ԹԻՑ (չայ) ԵԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էմէմի. կօֆէ էմէմի և Միխէլսոնի. պեսերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պ ր ո բ կ ա յ գինեվաճառներին, հանքային և դարևջրի (для зельтерскихъ водъ и пива) գոլշտուկ (шухъ), պատուռներ սամովարի և չայու, գանակ չանդալ գանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. դրչակոճներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կոխաններ 1—40 մինչև 3—20 կ. պրիորց. մոմ կարելու մագինայ. Անգլիական ութեններ, բրիտանական չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, Ջազայներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրակմանալ կատրիկներ 18 կ., փարա ֆրանսիայի ժակէտ, թուղթ փաչոի, կանվիտաներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, դրչակոճ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանական գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., շուշինչեք 45 կ.—3 ր., շամպայաններ ամէն տեսակ 25 կ.—12 ր. ջուխա, պղտատպշկաններ վարչաձև, ՈՒՆՁԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամէն տեսակ, գալոշաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխա, շամպիներ, մարդկերանց գալոշիններ, գոնտիներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. տանպրեր շիրմայու ոսկով, գուտապերչայով և փայտէ, չուռկաններ գիխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թիվ (бумага) մատակի կօճի և շալվ (гарусъ) ֆէշէտակէչ մարդկերանց և կանանց, պորտմանետներ, քիսաներ, պապիրոսի սամաններ և մանր գոյատեսերկենի ապրանքներ, սապոն ամէն տեսակ 3 կ.,—30 կ., կոպ, հոտաւէտ ջրեր, պուդրա, գլխացաւին ջրի քացախ, հոտաւէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և դիջումով վերպիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՒՐԱՑԻՆ ՏԻՐ ՆԻԿՈՂՕՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կամոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

10—180

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ օ լ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Марта 1882 года. Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Меликовск. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 44 Մարտի 13 (25) 1882 Մարտի 13 (25) № 44

ՏԱՄՆԱՄՅԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:
Յառաջադրանքը դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւնն ընդունւում է ամէն չիզուով:
Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Իշխան Գօնդուկով կօրականի ընդունելութիւնը: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Թիւրքիա: Աւստրօ-Ունգարիա: Նամակ Թիւրքիայից: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՆՁՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ՖԵԼԻԵՏՕՆ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԳՕՆԴՈՒԿՕՎ-ԿՕՐԱԿՈՎԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

—

„Кавказъ“ լրագիրը հաղորդում է հետեւեալը: Իշխան Գօնդուկով-Կօրսակով շրջերը փոխելով վերայի զօրանոցների մէջ և հանգիստ ու համազգեստը հագած՝ բայ կառքի մէջ նստած իր ամուսնու՝ իշխանուհի Նադեժդա Անդրէեվնայի հետ, մտաւ քաղաքը: Մօտենալով քաղաքային պատգամաւորութիւնը, իշխանը դուրս եկաւ կառքից նրան ընդունելու համար Ա. Ս. Մանինով աղ և հաց առաջարկելով նորին պայծառափայլութիւնը, ողջունեց նրան հետեւեալ կարճ ճառով:

„Ձերդ պայծառափայլութիւն: Առաջին անգամ չէ, որ քաղաքը տեսնում է ձեզ իր պատերի մէջ: Բայց շատ բան փոխուեցաւ այդ ժամանակամիջոցի մէջ:

„Եթէ այն ժամանակ կովկասը անվերջանալի պատերազմների նշանաբան էր, այժմ ներկայանում է նա որպէս մեծ Հուսաստանի մէկ նահանգ, աւելի եւս ծաղկաւէտ խաղաղութեան, որը այնքան անհրաժեշտ է նրան քաղաքացիութեան ամէն ճիւղերի մէջ զարգանալու համար: Այդ գործը մեր Օդոստափառ Միապետը յանձնել է ձեր պայծառափայլութեանը, այդ պատճառով, քաղաքային ազգաբնակութեան կողմից աղ ու հացով ողջունելով ձեզ, ես ինձ թոյլ կը տամ ընդհանուրի ցանկութիւնը յայտնել և Թող յաջողութեամբ պսակվին ձեր պայծառափայլութեան բոլոր բարի ձեռնարկութիւնները յօգուտ երկրի և քաղաքի:“

Ողջունելով իշխանուհի Նադեժդա Անդրէեվնային, քաղաքագլուխը Թարմ ծաղիկների մէկ փունջ տուեց նրան: Նոյն ժամակ փունջ տուեց իշխանուհուն և վաճառականական ասպարէզից Ի. Ի. Մկրտչեվ:

Պատասխանելով քաղաքագլխին, իշխանը ասեց հետեւեալը:

„Ի սրտէ շնորհակալ եմ ձեղանից, պատուականներ, ձեր արտայայտած բարի ցանկութիւնների համար և մինչև սրտի խորքը զգացված եմ ձեր ինձ ցոյց տուած բացառիկ ընդունելութեան համար:

„Գալ, ի հարկէ, կը հաճախանաք այն յուշմունքը և այն զգացմունքները, որոնցով լցված է իմ սիրտը այն երկիրը և քաղաքը մտաւոք գործելու ժամանակ, որոնց հետ կապված են իմ երիտասարդութեան և ծառայողական գործունէութեան ամենալաւ և ամենաէական յիշողութիւնները:

„Ինքնակալի կամքով կովկասի գլխաւոր պիտ նշանակվելով նոր պայմանների ժամանակ և աչքի առաջ ունենալով ժամանակի պահանջած անհրաժեշտ վերանորոգութիւնները, ես ինձանից չեմ ծածկում այն բոլոր դժուարութիւնները, որոնք կապված են ինձ վիճակվող ասյն և, շատ կարելի է, իմ ուժից վեր խնդրի հետ: Մէկ բանի մէջ միայն կարող եմ հաւատացնել ձեզ իմ խօսքով, որին երբէք չեմ դաւաճանել, որ բոլոր իմ մնացած կեանքը, ուժը և ընդունակութիւնները ինձ համար մայրենի և Թանգագին կովկասի ծառայութիւնը կը նուիրեմ:

„Խորին յարգանքով յիշելով իւրաքանչիւր կովկասցու համար անմոռաց իշխան Վօրոնցօվի յիշատակը, սրբութեամբ յարգելով այն բարձր սկզբունքները, որ առաջնորդում էին նրա կառավարչութեանը, և յիշելով այն հայրական խնամքը, որով նա, իմ կեանքի սկիզբը տալն և հօր տարիների ընթացքում ուղղում էր իմ առաջին քայլերը ծառայողական ասպարէզի վրա,—ես այդ Թանգագին յիշողութիւնների մէջ կոպանեմ ուժ և յուսացին ինձ վիճակվող գործունէութեան համար:

„Մի և նոյն ժամանակ, պարոնները, ես չեմ մոռանում նայնպես, Թէ ինչ պետի և վարչութեան անձնական գործողութիւնները ոչըմն անզօր են առանց հասարակութեան օգնութեան և համակրութեան: Ոչ Թէ խօսքերով, այլ յոյս ունեմ գործով գրաւել ձեր հաւատարմութիւնը: Եւ այն ժամանակ, պարոնները, խնդրում եմ ձեղանից, չը մերժել ինձ ձեր համակրութիւնը և օգնութիւնը, որոնք անհրաժեշտ են մեր Օդոստափառ Ինքնակալի բարի մտադրութիւնների համար, ի բազդաւորութիւն և բարօրութիւն կովկասի, ի փառս Թագաւորի և յօգուտ մեր Թանգագին ընդհանուր Հայրենիքի—Ռուսաստանի:“ Թող սիրով, ազնուութեամբ և միաբանութեամբ դիմենք այդ բարձր նպատակներին. և Թող օգնէ մեզ այդ բանում ձեր Աստուածը, առանց որի օգնութեան անզօր են մարդկային ձեռքերի բոլոր գործողութիւնները:“

Դրանից յետոյ կրկին դիմելով քաղաքային ներկայացուցիչներին, արտասանեց հետեւեալ խօսքերը, որոնք հիացմամբ ընդունվեցան:

„Թիֆլիս գալու համար Պետերբուրգից դուրս գալուց առաջ, Նորին կայսերական Բարձրութիւն Կովկասեան Նախկին Փոխարքան յանձնեց ինձ յայտնել Թիֆլիս քաղաքին իր առ ի սրտէ ողջոյնը և ամենալաւ ցանկութիւնները: Ես չը պետք է Թերեմ ձեզ, պարոններ, Նորին Բարձրութեան առաջ և ուղի տալիս պատասուս գործունէութեան հետեւանքները. նրանք ձեղանից իւրաքանչիւրի համար ակնյայտնի են, և ձեզ բոլորիդ լաւ յայտնի է դէպի կովկասը ունեցած Նրա անկեղծ սէրը:

„Ակ պատճառով ես հաւատացած եմ, որ բոլոր այսաեղ ներկայ եղողների զգացմունքներին եմ պատասխանում, Թիֆլիս մնելուց առաջ, ի սրտէ, շնորհակալական „ուրա“ կանչելով ի պատիւ Մեծ Իշխան Նախկին Փոխարքային:“

„Ակ ճառից յետոյ, որը անվերջանալի ոգեւորութեամբ ընդունվեցաւ, նորին պայծառափայլութիւնը, ձիու վրա նստած, ամիսայի և ազնուականութեան ուղեկցութեամբ մտաւ քաղաքը և ամէն տեղ մեծ հիացմունքով ընդունվեցաւ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մարտի 11-ին Կովկասեան քաղաքական մասի նոր պետը կառավարիչ, իշխան Գօնդուկով կօրսակով մտաւ Թիֆլիս: Իշխանը ընդունվեցաւ քաղաքից դուրս Մցխեթի ճանապարհի վրա տեղական բարձր վարչութեան բոլոր անդամներից, քաղաքագլխից և քաղաքային վարչութեան ներկայացուցիչներից: Քաղաքագլուխը ներկայացրեց իշխան Գօնդուկով կօրսակովին աղ ու հաց և մի ճառ ասեց: Իշխանը պատասխանեց մի ճառով: Ամուսնական նոր կառավարիչը ձի նստեց և զրօսանքով զարդարված փողոցներով, ամբոխի ողջոյններով և ուրախներով ուղեկցած, գնաց Սիմոն մայր-եկեղեցին: Եկեղեցուց իշխանը վերադարձաւ պալատը կառքով: Գիշերը ամբողջ քաղաքը փառաւոր կերպով լուսաւորված էր:

—

Ինչպէս լսել է «Մեղու Հայաստանի» լրագիրը, Թիֆլիսի կանանց բարեգործական ընկերութեան նորընտիր վարչութիւնը իր միջից ընտրել է վարչութեան նախագահ տիկին Սրտուհի Երիցեանին, փոխ-նախագահ տիկին Մարիամ Խանախանեին և գանձապահ տիկին Լիդիա Թամամշեանին:

—

ՖԵԼԻԵՏՕՆ

Երևփոխանական Հանի մը համառօտութիւն:
Տնարք պատուարժանք!

Այսօր համայնքդ ձեր անձնական գրաղմունքները, ձեր առևտրական պարապմունքները Թողած, ձեր հեշտալիր ըրօանքները, ձեր Խոֆթորը, վերջապէս ձեր անձը մոռացած, խռնվռանաք և ապագրնեայց յայս սրբավայր եկած և գումարուած էք արևոր Մայր Հայաստանի արտաքոքները սրբելու և նորա ցաւերը բուժելու, առնվազ ալ ազգային փրկարար սահմանադրութեան հաստատիմ արքանեակներ, ազգութեան փառք և պարծանք էֆէնդիներ, աղաներ, և պարոններ, առնվազ ալ հոս հաւաքուեր էք մեր Թշուառ ազգին պարանոյկն քաշելու և Հանելու այն լուծը, այն նեղիչ և ճնշիչ լուծը, որուն ծանրութեանը միլիոնաւոր եզներ և գամշներ չեն կարող դիմանալ: Այո, տեսարք, տեսանելի է այդ լուծը. երանելի է այր որ պիտի յաջողի այդ լուծը խլելու, բայց ցաւագ սրտի կը յայտնեմ որ գա իմ գործս չէ: Միմիայն, տեսրք հայկազունք, մեր քաջազունք, առնական որդիք Հայաստանի էք, Թէպէտ և ոչ մէկերնիդ Հայաստանին քովն անգամ չէք անցեր, բայց և այնպէս հայ էք և ծանր է կրած լուծերնիդ, ապա ուրեմն կնցդէք զօրութիւնն և ոյժ կը բաժնեմ ձեր պարանոցներուն (Ջնորհ ծափահարութիւններ):

Այո, տեսարք, ազգային սահմանադրութիւն, եւրոպական ժողով, վարչութիւն, ընդհանուր ժողով, յանձնախումբ, մասնախումբ, արտաքոյ կարգի նիստ, դիւան, յանձնաժողով, մասնաժողով, խորհրդակցութիւն, բանակցութիւն, վճռաբանութիւն, կռիւ, պատերազմ, կայծակ, ժռինք, երկինք... ահ Աստուած իմ, քիչ մնաց պիտի խեղդուէի... միով բանիւ ահա բոլորը մեր գործիքներն և մեր զենքերն են, որոնցմով ազգը պիտի ատանենք ի Նահանջութեան փրկութիւն (կնցդէներ և աղաղակներ):

Ո՛ն, ինչ քաղաքակրթութիւն, ինչ զարմանքի և ասկալի մտածմունք, երբ կը յիշեմ որ, եթէ մենք եւրոպական չենք նայինք, որքան ազգերուն կը լինէր մեր Թշուառ ազգին վիճակը: Ինչպէս ազգային սահմանադրութեան անմահ երդը ազգին համար կրնայ հնար գտնի, նոր կեանք անոր պարգևեց՝ մենք ալ ազգին կեանք պարգևեցինք, ուրիշն բարեմտութենէնք նորին նախախնամութենէն որ նա ալ մեզ կեանք տայ, և զմեզ եւրոպական սիմոններու վրայ անսասան պահէ և ս. պատրիարքին նման զմեզ չը հրաժարեցնէ, վասն զի այն ժամանակ բաներնիս բուսած է (հաստատութեան նշաններ):

Տնարք պատուականք! ինչպէս քիչ մը առաջ յայտնեցի, մենք սովորական չենք, ազգին օգտին ծառայող դիւցազներ ենք, բայց մեր անձնական շահերը պէտք չէ մոռանանք: Տանէլերէն առաջ գիտէք, «պայ Թուման բարեմտարերին նպատակ» կըսէ, որ կը նշանակէ «մեղր բանողը մատները կը լզէ»: Ձիրաւի այս օրինակին փաթթաչան հետեւողներ ունեցանք, որոնք ոչ Թէ միայն մատները լզելով գոհացան, այլ և պատոյ, ցորենոյ, գինւոյ և ձիթոյ տպլին յիշատակին իրենց անունը, տակաւին վնաս չտանի, օտարը չը կերաւ, կրկին հայու դրպանը մնաւ: (Ջախակոդմանութեանէն ղժդոհութեան ցոյցեր):

Տնարք երևփոխանք! կուգայ կոր!!!! (երևփոխանաց մէջ իրարանցում, կարծելով Թէ ս. պատրիարքն է եկողը): Մի վախնաք, պարոնայք, պատրիարքի համար չըսի, նա այլ ևս չը գար, ատյատրեկը մերն է, ապահով եղէք, բայց ես կուգայ կոր ըսի, ով է եկողը, միթէ չը կրցաք գուշակել: Այո, կուգայ կոր այն երջանիկ օրը, կուգայ կոր այն փափագելի ժամը, կուգայ կոր վերջապէս այն երանելի վայրկեանը, յորում գինւոյ խմիչքները ձեռքերնիս պիտի ասենք Պոռֆօրի տիր՝ ազգային սահմանադրութեան քաոս երկրորդ տարեդարձը:

Այդչն կերակուրներուն տեսակները այժմէն ընտրուած են, առատ գինի և օղի պատրաստուած է, չոգենաւները այն հանդիսաւոր օրուան համար հիմակուընէ վարձուած են: Կարելի է մի ըսող ըլլայ Թէ հիւանդանոցի խղճալիները ուտելու հայ կամ հագնելու լաթ չունեն և այլն. այս ըսողն ալ անտարակոյս չար մկնիկ պիտի լինի. ինչ կուզէ Թող ըսէ, մենք այնպէս հիւանդանոց, յիմարանոցի նման տար բաներու համար չենք կրնար մեր Թանկագին ժամերը վատնել, մենք ազգին ծառայ, կարևոր և կեցուցա իւղիրներով պարապելու ենք: Ով ուրեմն! գնանք հոն! հոն է մեր տեղը, ասենք ասնմանադրութիւնը: Այո, ասենք, խմենք, զուարճանանք, երգենք, պատասխանենք ճառեր պատասխանենք, և լաւ մը կշտանալէն ետքը միաբերան ազաղակենք, կեցցէ փրկարար և անդադար ազգային սահմանադրութիւն! (անվերջ ծափահարութիւններ և կեցցէներ):

* * *

Ամենքին յայտնի է, որ արքեպոլութեան տագնապը վերին կատարելութեան հասցրած ազգը անդլիացին է, սրան ապացոյց՝ նրա մէկը չափից դուրս հարբելոյ, կատեր Թէ ա լանիլէ (անդլիացու նման) հարբել է: Այս մոլութիւնը բուժելու նպատակաւ Լոնդոնում կազմված անտիալկոհոլական ընկերութիւնների նախագահներից մէկը, վերջերումս պիւնեմոլութեան վրայ չարունակ երեք ժամ ազգաս մի ճառ է ասել. բայց ունկնդիր հանդիսականաց հառաչանք ամենքն ալ հարբած լինելով, ոչ ոք մի բան չէ հասկացել և չատերը քնել են: Այս նախատինքից նախագահը կատաղած և ծարավից բերանն էլ չորացած, ամբիոնից վար իջնելով ծարաւը յագեցնելու համար ազգային մօտակայ պիւնեատունը մտել և այնքան խմել է որ պիչերը ամառեղ է պատկել:

* * *

Գերմանիայի նախակրթական վարժարանաց ուսուցիչներից մէկը ձեռօք դասագրքով այնպիսի ուժգին հարուած է տուել 9 տարեկան մի աշակերտի գլխին, որ ուղեղը վնասվելով, խեղ

Fonds A.R.A.M

Երեսնում հրատարակվող «Առողջապահական թերթի» 3-րդ համարը սառցվեցաւ Թիֆլիսում։ Ուշադրութեան արժանի է այդ համարի մէջ առաջնորդող յօդուածը։

—

«Մշակի» երէկվայ համարում արտատպեցինք «Кавказъ» լրագրից պ. Վինոգրադովի յօդուածը, որ լի է պատմական սխալներով։ Մենք ապացոյցը այդ յօդուածը նոյնութեամբ, որպէս համակրական յօդուած ղէպի հայերը, մի և նոյն ժամանակ ուղենալով ցոյց տալ հայ ընթերցողին, որքան թերի, անկատար և սխալ տեղեկութիւններ ունեն եւրոպացիները Հայաստանի, հայոց ազգի և նրա պատմութեան մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պօլսից „Köln. Zeit.“ լրագրին հաղորդում են մարտի 3-ից։ Անցեալ օրը գերմանական արուեստոյ կարգի դեսպանութեանը հրաժեշտի տեսակցութիւն և ճաշ տուեցաւ։ Ճաշի ժամանակ թիւրք կայսերական տան իշխանները նստած էին իշխան Բադրիվիլի մօտ, որ նկատեց սուլթանին, թէ ինքը ամաչում է կրել թիւրքաց բարձր շքանշանը, որ դեռ ևս շնորհված չէ կայսերական իշխաններին։ Դրանից յետոյ սուլթանը շնորհեց իշխաններին (առաջ ասրեկան ազաներին) երրորդ կարգի Օսմանիէ շքանշանը և հրամերեց իշխան Բադրիվիլին յայտնել նրանց այդ լուրը։ Տեսակցութիւնը սովորական ձև ունէր, բայց նրա վերջանալու ժամանակ սուլթանը գգացված խօսեց իր բարեկամութեան մասին գերմանական կայսրի հետ և դովեց գերմանացի սպառիճանաւորներին, որոնք թիւրքաց ծառայութեան մէջ են։ Մարտի 4-ին դեսպանութեան անդամները պէտք է ուղևորուին Բրուսա, իսկ այն տեղից Բերլին, բայց սուլթանի ցանկութեան համեմատ դեսպանութիւնը մնաց Կ. Պօլսի մէջ։

Թէպէտ սուլթանը Յլդիզկիոշկի մէջ տաւած ձաշի ժամանակ ոչ մի խօսք չէ ասել իշխան Բադրիվիլին քաղաքականութեան մասին, միևնոյն ժամանակ Հիրշֆելդի հետ անդադար քաղաքականութեան մասին էր խօսում, թէպէտ իշխան Բադրիվիլ ներկայ էր սուլթանի և Հիրշֆելդի խօսակցութեանը ճաշից յետոյ, այնու ամենայնիւ յամառութեամբ պնդում են, որ դեսպանութիւնը քաղաքական յանձնարարութիւն ունի։ Թիւրքիան մի քանի շրջաններում մինչև անգամ հաւատացնում են, որ ենթադրված է դաշնակցութիւն կապել Գերմանիայի, Աւստրօ-Ունգարիայի և Թիւրքիայի մէջ։ Սուլթանը չափազանց պատուում է դեսպանութիւնը։ Մօտիթ-բէյ սուլթանի կողմից ասեց դեսպաններին. „Մենք ձեզ մեր բարեկամներ ենք համարում և ցոլին մեծութիւնը հրամայեց ինձ կատարել դեսպանութեան բոլոր ցանկութիւնները։ Գերմանացիները պատասխանեցին, որ նրանք ամէն կերպ պատուած են և որ աւելի ոչինչ չեն կարող պահանջել։ Գերմանիան այսօր առհասարակ հեռուում է այն քաղաքականութիւնից, որ գրեթէ ոչինչ չէ պահանջում և կարելութեան չափ աշխատում է չը պաշտպանել գերմանացի հպատակներին։ Երբ նորերումս այսպէս գերմանական մի ընկերութիւն հասաւ և լրագրները ըսկսեցին լուրեր տարածել, թէ այդ ընկերութիւնը ուզարկված է Բիսմարկից գերմանական շահերը Արևելքում մեծացնելու համար, Հիրշֆելդը ընդհակառակը համոզեց ընկերութեանը չը ճնել Թիւրքայի մէջ։ Նա ամէն անգամ այդպէս է վարվում, երբ մի գերմանացի նրանից խորհուրդ է հարցնում Թիւրքիայում բնակութիւն հաստատելու մասին։ Սուլթանը երկիւղ է կրում, որ եթէ շատ մեղմ վարվի, օտար պետութիւնները անդադար կը միջամտեն Թիւրքիայի գործերին։ Օրինակ նորերումս շոգենաւների երիս ընկերութիւններին թոյլ է տուած միանալ և ակցիաներ հրատարակել միայն այն պայմանով, որ այդ ակցիաները բացառապէս Թիւրքերի վրա ծախվեն։ Գերմանիացին յայտնի է սուլթանի այդպիսի տրամադրութիւնը և նա չէ հակառակվում նրա կամքին։ Այդ է պէտքը, որ Գերմանիան դիպլոմատիական մեծ ազդեցութիւն ունի Բ. Դրան վրա։ Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է պահպանել իր ծառայութեան մէջ գերմանացի սպառիճանաւորներին, նկատելով, որ Գերմանիան չէ ձգտում միջամտել Թիւրքիայի ներքին գործերին։

Աւստրօ-Ունգարիայի վերաբերութեամբ սուլթանի քաղաքականութիւնը նոյնպէս փոփոխած է։ Սուլթանը համոզված է, որ, եթէ Աւստրօ-Ունգարիան թուլանայ, համայն սլաւիանութիւնը ամենակատարեալ կը սկսի ոչնչացնել Թիւրքիայից։ Այդ հիման վրա ամենախիստ հրամաններ են տուած և կատարագրութիւններ են արված, որ ալբանցիները չը մասնակցեն Հերցեգովինայի ապստամբութեանը։ Գերվիշ-փաշա պատրաստվել էր հեռանալ Ալբանիայից, բայց նրան հրաման արվեցաւ մնալ այնտեղ և ամէն միջոցներ գործադրել, որ ալբանցիները չը մասնակցեն Հերցեգովինցիների ապստամբութեանը։ Այդպիսով Բ. Դուռը արդելքներ է գնում Հերցեգովինայի ապստամբութեանը և աշխատում է, որ նա ճնշվի։

—

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Վիէննայից „Голосъ“ լրագրին գրում են հետևեալը մարտի 7-ից։ Վիէննայի պաշտօնական „Abendpost“ լրագրի մէջ արտատպած համակրական յօդուածներից՝ Սերբիան թագաւորութիւն յայտնելու մասին, երևում է, որ աւստրիական կառավարութիւնը բաւական արագ վերաբերվեցաւ Բելգրադի մէջ կատարված անցքին։ Պաշտօնական լրագիրը իր յօդուածներով մասնացոյց է լինում այն քաղաքականութեան վրա, որին հետևել է Սերբիան վերջին ժամանակներում և այդ հանգամանքը բացատրում է Աւստրօ-Ունգարիայի համակրութիւնը դէպի սերբիական պետական փոփոխութիւնը։ Ինչպէս յայտնի է, Սերբիայի այդ քաղաքականութիւնը նպատակաւոր է եղած Աւստրօ-Ունգարիայի համար։

„Polit. Corresp.“ լրագիրը իր երէկվայ պաշտօնական հաղորդութեան մէջ Բելգրադից ուղղակի յայտնեց, որ սերբիական սկուպչինայի որոշումը անապատելի չէր և չը զարմացրեց եւրոպական պետութիւններին։ Դեռ երկու տարի առաջ, երբ իշխան Միլան այցելեց աւստրիական կայսրին Վիէննայի և Իշլի մէջ, Աւստրիայի համար դաշնի չէր, որ իշխան Միլան սաստիկ ցանկանում էր բարեկամական յարաբերութիւններ հաստատել Աւստրօ-Ունգարիայի հետ։ Բայց չը նայելով այդ ցանկութեանը, նա քաջութիւն չունեցաւ ձեռնարկել այդ գործին։ Ահ այն րոպէից, երբ Աւստրիային երկրորդ անգամ այցելելուց յետոյ իշխան Միլան օրը հազար անգամ սուտ տեղը երդում անեմ, մարդ խաբելով փող աշխատեմ և այդ անպիտանին տամ որ ուտէ։ Գեհենը մանէ այդպէս գաւակը։

Տեսիլ բ.

Հայրը և՝ որդին

Որդին. (աճապարանքով նկատ մանելով)

Հայրիկ, պիտի տաս հազար րուբլի թէ ոչ, պատասխան տուր։

Հայրը (բարկութեամբ)

Ոչ, ոչ, ոչ, չեմ տայ, հասկացար, հերիք է ինչքան տուի։

Որդին (գրպանից տրճանակ մը, դուրս հանելով)

Չես տայ, ուրեմն մնաս բարեաւ, (տրճանակը սրտին կպցնելիք և գետին կընկնի։

(Հայրը ապուշված)

Ահ! ինչ ըրիր զաւակս, ահ! զաւակս.. մի մնար, կը տամ հազար րուբլի, 2 հազար րուբլի, երեք հազար...

Որդին (ետևցած ձայնով)

Տար... հայր իմ... տար.. գոնէ հոգիս ազատեմ... սեղմելով... ձեռքումս... այն անիծեալ... հազար... րուբլին.. որ.. մահուանս պատճառ եղաւ։

Հայրը (չտեսնալ կատարից փողերը հանելով և տղուն տալով)

Ա՛ռ զաւակս. առ մի մտածիր, կարելի է հարստացը մահացու չէ։

Ո՛չ.. հայր իմ... տրտիս խփեցի.. մնաս բարեաւ, հայր իմ... չկրնայեմ... մնաս բարեաւ.... մեռնում...եմ։

Հայրը (յուսահատած)

Շուտ, բժիշկ կանչեցէք, շուտ... բժիշկ... ահ Աստուած իմ... զաւակս մեռնում է։

Տեսիլ գ.

Հայր, որդի և բժիշկ

Բժիշկը (վիրաւորեալը քննելով)

Մարմնին վրայ վերք չեմ տեսնում։

Հայրը (չտեսած)

Ինչպէս չես տեսնում, արտին մէջն է գընաւ։

Որդին (վեր կանգնելով)

Ներէ հայր իմ, տրճանակիս մէջ գետակ գնելու մատաղ էի։

***

(Բարոյական)

—Դու այսօր վարժատուն չես գնացել, տիկայ։

—Վարժատունն էի, հայրիկ, Աստուած վկայ վարժատունն էի. խաչը վկայ, Քրիստոս վկայ երկու աչքս կուրնայ, իմ արևը, քո արևը, մօտ արևը վարժատունն էի։

—Այ անիրաւ, տուա տեղը երդում էլ կանես։

—Հայրիկ, դու էլ կանաւրում սանին օր սուտ ես խօսում. երդում ես անում։

—Դա ջոկ բան է. փող աշխատելու համար պէտք է մարդ խաբել, հաստատելու համար երդում անել, եթէ չը գիտես սովորիր։

կրտս

Fonds A.R.A.M

Fonds A.R.A.M

Ս. ՊԱՏԱՐԱԳԱՄԱՍ, 11 մարտ։ Պատահած ահագին հրդեհից 1-ին ի սասն թաղին Ղազարոսի Ալիշանի 10-իդ։ «Արարատ» ինչպես կարդում ենք նրանից, հրդեհը սկսվել է ուրբաթ օրը, ժամը 2-ին կեսօրին։ Ամենից առաջ բռնկվել է Ղազարոս Ալիշանի տունը, ապա անցել հարևան տները և ամբողջ թաղը մոխրի վերածել։ Հրդեհի պատճառը մինչև հիմա հայտնի չէ։ Ասում են, թե Ղազարոս Ալիշանի տունը ամառանոց է եղել, ուստի ձմռանը այնտեղ ոչ ոք չի ապրել։ Ուրեմն հրդեհը չի կարող ներսից սկսված լինել։ Ենթադրում են, թե հրդեհը սկսվել է հարևան տներից մեկից, որտեղ ապրում էին աղքատ մարդիկ։ Ասում են, թե նրանք ձմռան ցրտերին տաքանալու համար վառել են մի տաշտ ածուխ, որ ծխնելույզի միջից անցել է Ղազարոս Ալիշանի տունը։ Ամառանոցում ոչ ոք չկար, ուստի ոչ ոք չի էլ նկատել, թե ինչպես է հրդեհը սկսվել։ Ուրբաթ օրը ժամը 2-ին կեսօրին հանկարծ տեսել են, որ տանիքի միջից ծուխ է դուրս գալիս։ Ծուխը հետզհետե ավելի է շատացել, մինչև որ ամբողջ տունը բռնկվել է։ Ղազարոս Ալիշանի տունը ամառանոց լինելով, ներսում ոչ մի թանկագին իր չի եղել։ Ամբողջ թաղը մոխրի վերածվելուց հետո հրդեհը հանգել է ինքնին։ Ասում են, թե Ղազարոս Ալիշանի տունը ապահովագրված է եղել 3000 ռուբլով։ Ինչ վերաբերում է հարևանների տներին, նրանք ապահովագրված չեն եղել։ Ուստի հրդեհից հետո նրանք ամբողջովին կորցրել են իրենց ունեցվածքը։ Ասում են, թե հրդեհից հետո Ղազարոս Ալիշանը ասել է, որ ինքը ոչ մի բանի համար չի ցավում, միայն ցավում է, որ հրդեհի ժամանակ կորել են իր ձեռագրերը։ Ինչպես հայտնի է, Ղազարոս Ալիշանը ձեռագրերի մեծ հավաքածու ուներ։ Ասում են, թե նրա ձեռագրերի մեջ կային շատ հին ձեռագրեր, որոնք ինքը հավաքել էր տարիների ընթացքում։ Ղազարոս Ալիշանի ձեռագրերի մեջ կային նաև շատ հին նամակներ, որոնք ինքը ստացել էր տարբեր մարդկանցից։ Ասում են, թե Ղազարոս Ալիշանի ձեռագրերի մեջ կային նաև Ռուբինյանցի նամակները։ Ռուբինյանցը Ղազարոս Ալիշանի ամենամտերիմ բարեկամներից մեկն էր։ Ռուբինյանցի նամակները Ղազարոս Ալիշանը ստացել է Ռուբինյանցի մահից հետո։ Ռուբինյանցի նամակները Ղազարոս Ալիշանը ստացել է Ռուբինյանցի մահից հետո։ Ռուբինյանցի նամակները Ղազարոս Ալիշանը ստացել է Ռուբինյանցի մահից հետո։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մարտ։ Ծանոթ լրագրագիր Վ. Ռ. Ռեզանովը իր «Ռուսական հին ժամանակներ» անունով հրատարակած գրքում տպագրել է մի նամակ, որ գրված է եղել Ռուսաստանի մեծ բանաստեղծ Պուշկինի կողմից։ Նամակը գրված է եղել 1826 թվականին, երբ Պուշկինը աքսորված է եղել Միխայլովսկոյե գյուղում։ Նամակը գրված է եղել Պուշկինի ընկերներից մեկին, որի անունը հայտնի չէ։ Նամակում Պուշկինը գրում է, որ ինքը շատ է տանջվում աքսորի մեջ գտնվելու համար, և որ ինքը շատ է ուզում վերադառնալ Պետերբուրգ։ Նամակում Պուշկինը գրում է նաև, որ ինքը շատ է կարոտում իր ընկերներին և ընտանիքին։ Նամակում Պուշկինը գրում է նաև, որ ինքը շատ է ուզում տեսնել իր ընկերներին և ընտանիքին։ Նամակում Պուշկինը գրում է նաև, որ ինքը շատ է ուզում տեսնել իր ընկերներին և ընտանիքին։

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամսոյս 14-ին, կիրակի, առաջ պատարագից յետոյ **ՋՐԿԻՆԵԱՆՑ** եկեղեցւոյ գաւթում գտնուած շէնութեան մէջ կ կատարուի **ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶԻ և ՏԱՐՐԱԿԱՆ** ծխական **ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ** բացման **ՀԱՆԴԷՍԸ**։ Այս մասին պատիւ ունեմ յայտնել դաստիարակութեան գործին համակրողներին։

Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց

2—2

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՈՎԻ և ընկերութեան պետական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ»), որի կանոնադրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատած է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին։ Ընկերութեան պահեստը գտնվում է թիֆլիսում տանը, թանդարանի դէմ։

2—7 (եր. և ուր.)

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑԻՒՄ լաւ ԾԽԱԽՈՑԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 րուբլուց մինչև 10 րուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 րուբլուց, մինչև 3 րուբլի։

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գայլէրէում, Դվորցովի փողոցի վրա, № 3։

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի սպիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

5—25

ՎԻՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՐՈՒԲԼ

եփ. Դատաւորականի դէպքում

3—20

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՉԱՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բլուզներ 4 ր., բլջաներ 8 ր. ամրողջ հագուստ 13—19 ր., գրաւատ, մանուշակ, արիկո, արրիշներ և ալբոմներ կէս գնով։ Ընդհանուր բլուզ 6 կ., սագո և պերլովայա կրուպա 9 կ., պաներ չեստեր 70 կ., նշշոտ կօլաների 18 կ. ֆունտը, լուծոզական ձեթի պիլուլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ.։ **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ Մեղրամոմ և արծաթեայ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 րուբլուց։ **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԹԱՆՈՒԹԻՒՆ**։

31—36

ԱՆԱՆՈՎԻ և ԿԱՑԱԼՈՎԻ պապիրոսների թղթի գործարանը ՐՕՍՏՕՎ (Դոնի վրա) քաղաքում հարկաւոր է համարում պ. պ. գործածողների և գնողների ուշադրութիւնը գարձնել Ֆիրանեական Abadie թղթի վրա մեր առորագրութեամբ, Abadie գլխոյկը, 300 թերթերով, արժէ 10 կ., իսկ 150 թերթերով արժէ 5 կոպէկ։ Գործածողները առանց որ և է կասկածութեան կը համոզվեն, որ սա հէնց այն թուղթն է, որ Кронъ-ի առորագրութեամբ միշտ ծախվում էր և այժմ էս ծախվում է շատ թանգ, այն է 300 թերթանոց տետրակը ծախվում է 15 կոպ., իսկ 150 թերթանոցը—7 կոպէկով։ Բացի ուրիշ լաւ թղթերի մեր առորագրութեամբ ունենք և ամենալաւ ՄԱԻՍ (240 թերթը—5 կոպ.), որը կարելի է առանձնապէս եւրոպական թուաբանների բոլոր ծխախոտավաճառների մագազիններում։ Մենք հակերով ենք ծախում (գոնէ ոչ պակաս հինգ կօրօբկաներից)։

7—10

ԾԱԽՎԱՒՄ Է վերին-Մօսկովսկայա փողոցի վրա ԵՐՑԱՐԿԱՆԻ ՏՈՒՆ № 13, 22 և 24 **ՊՐԻԿԱԶՉԻՆ**, 5,000 ր. պարտքով։ Տունը անկիւնի վրա է երկու փողոցների կողմը, յարմար է առևտրական հիմնարկութիւնների համար։ Գնի մասին կարելի է անդեկանալ նոյն տեղը ՏԱՆ ՏԻՐՈՋԻՑ։

1—4

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ ПАЛЯНТОВА

Адресъ магазина: Эриванская площадь, домъ Мелконова, № 144 (противъ Армянской церкви).

Здѣсь фабрикація папиросъ, гильзъ и всякаго рода табачныхъ издѣлій.

1—60

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆ

ԿԻՐԱԿԻ, 14 ՄԱՐՏԻ,

Պալատական սրախօս Նորին Մեծութեան Նասրէդ-Դին պարսից Շահի

ՐՕԲԵՐՏ ԼԷՆՑ

աշակերտ և ազգական Նորին Շանասւոր պարսիկ կախարդի, Մահօմեդ Իզմայիլ Բէյի պատիւ կունենայ



տալ իր վերջին վայրկեան և մեծ կախարդական ներկայացումն, ՆՈՐ ՐՕԳՐԱՄՄԱՅՈՎ։ Սկիզբը 8½ ժամին։

2—2

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԿՐԵԴԻՏԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ վարչութիւնը պատիւ ունի յայտնել ընկերութեան պ. պ. անդամներին, որ ներկայ մարտի 14-ին նշանակված ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը տեղի կունենայ թիֆլիսի ժողովարանում ժամ 10-ին առաւօտեան։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ

1) Քննութիւն և վաւերացում վարչութեան հաշուետուի 1881 թ. համար և նախահաշիւ 1882 թ. համար։

2) Զեկուցում վերահսկողական յանձնաժողովի 1881 թ. հաշուետուի քննութեան մասին։

3) Թարդմի զեկուցումը իր գործունէութեան մասին։

4) Վերաքննութիւն 1881 թ. ընդհանուր ժողովներում ընդունված փոփոխութիւնների և աւելուածների կանոնադրութեան §§ 12, 32, 33 և 42 և կանոնադրութեան մէջ մտցրած նոր պարագրաֆների պէնսիօնական դրամագլխի մասին ծառայողների համար։

5) Ընտրութիւն ընկերութեան խորհրդի դէպուտատի, փոխանակ հերթով դուրս եկող խորհրդի նախագահ, վ. Ի. կայգանովի։

6) Ընտրութիւն ընկերութեան գործերի կառավարչի, փոխանակ հերթով դուրս եկող Գ. Գ. Ադելխանովի։

7) Ընտրութիւն վերահսկողական յանձնաժողովի երեք անդամների և երեք կանդիդատների։

Վարչութիւնը խնդրում է ընկերութեան պ. պ. անդամներին, ներկայացնել ժողովի գահլիճը մանելով իրանց անդամական վկայականներից կտրած տրված հաշուետուները կարելի է ստանալ ընկերութեան վարչութեան մէջ, սկսած մարտ ամսի 8-ից։

3—3 (6, 10 և 13)

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ ո ղ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

Ա՛ւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրևավաթներ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակիլյաժներ 1. 30—12 ր., առնդուկներ ճանապարհի 6—35 ր., մարտներ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կոխածներ պղինձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուրիվալնիկներ մրամօրների 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատուններ. (գուլաններ) բէլոլվէրի, սիգար ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գլխի պապիրոսի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բխոկվիա. (սուխար չայու և կաֆէի) էմնէմի. կօֆէ էմնէմի և մէլենկաձնի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղոչխուկ (пухъ), պաշտոններ սամովարի և չայու, դանակ չանգալ գանագան ֆաբրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. պլշակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., պանակ հայի 20 կ.—1 ր., հասը, կուխոնկներ 1—40 մինչև 3—20 կ. պրեսը. մի կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Թիմանակի չայնիկներ, կաֆէնիներ ամենայն տեսակ, Չադոցներ կաֆէի համար, ֆիլտեր—չուր մաքրելու, կրահմալ կաթօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փշոտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, դրիչ երկաթէ, դրչակոթ, քարեաախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիններ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշամի և բրիտանակի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չումիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխա, պոլսասպշկաններ վարշաւու, ՌԵՁԻՆԵ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գալոշներ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխա, շապկիներ, մարդկերանց գալուսուկներ, պենսիներ 35 կ.—1—50 կ., հատ, անձրևի և շոքլ. սանդրեր շիմայու ակոթէ, գուտապերչոյի և փայտէ, չչոտկաններ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճղի և շալէ (гарусъ) ֆկշատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, ասպան ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կաոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Դիցերբին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և պիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՔԱՑԻԼ ՏԻՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Ծանապարհորդները կարող են պիմել հեռաձայ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

11—180

Մ ի ջ ի փ ո ղ ո ց, կ ա թ ո ղ ի չ ե ս կ ա յ ա փ ո ղ ո ց ի ա ն կ ի ւ ն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Марта 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Меликовск. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 45 Մարտի 16 (28) 1882 Մարտի 16 (28) № 45

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Առաքելաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսում առնող երիտասարդութիւն։—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Ս. Պետերբուրգից։ Նամակ Աղուախից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՈՒՍՈՒՄ ԱՌՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

—

Եթէ այն լուրը, որ մենք „Մշակի“ ներկայ համարում հաղորդում ենք, ստոյգվի, թէ Թիֆլիսի բարեգործական ընկերութիւնը վճռել է մի յայտնի գումար գործ դնել իր հաշւով հայ երիտասարդներից մի քանի մշտական ստիպենդիաներ պահել մեր քաղաքի դիմնազիաներում,—դա շատ ուրախալի կը լինի։ Բարեգործական ընկերութեան կողմից դա շատ նպատակայարմար գործ կը լինի։

„Մշակը“ անպատճառ յայտնել է այն միտքը, թէ հարկաւոր է որ կազմվի մեզանում մի որ և է բարեգործական ընկերութիւն, որ նպատակ ունենար օգնել մեր չքաւոր ուսում առնող հայ երիտասարդութեանը։ Օտարները, առհասարակ, այն համոզմունքը են կազմել, որ հայերը շատ հարուստ ժողովուրդ են, բայց մեզ շատ լաւ յայտնի է թէ ինչ սարսափելի չքաւորութիւն է տիրում մեր ուսում առնող հայ երիտասարդութեան մի մասի մէջ։ Չքաւորութեան հետևանքը լինում է թէ ֆիզիկական ախտերը և թէ բարոյական ճնշված, ապլանդակ բնաւորութիւնը, անկրթութիւնը, քանի որ աղքատ ուսում առնողը միջոց չունի դուրս գալ անկիրթ, կօպիտ, անբարոյական շրջանից։ Մենք օրինակ կինք բերում թէ ինչ տեսակ տեղերում մեր աղքատ, գաւառացի երիտասարդները ստիպված են լինում ապրել, ինչ տեղերում և ինչ հասարակութեան մէջ ստիպված են լինում ճաշել ամէն օր, և այլն։

Դուրս բերել մեր չքաւոր երիտասարդներին աղքատ, ճնշված, ապականված, անկիրթ շրջանից, տալ նրանց միջոց աւելի լաւ ապրելու, աւելի լաւ ուսելու և հագնվելու, տալ նրանց միջոց յաճախելու աւելի հետևելիզէնտ շրջանը, մեանաւորապէս զարգանալ, կարդալ և այլն,—դա մի կազմակերպված բարեգործական ընկերութեան գործ է, լինի նա արդէն հիմնված ընկերութիւն, կամ նոր հիմնվելիք։

Մենք կը սպասենք մեզ հաղորդած լուրի ստուգութեանը, իսկ ստ. ժամանակ, կարող ենք ասել որ եթէ թիֆլիսի ընկերութիւնը ճշմարիտ դիտաւորութիւն ունի իրագործել մի քանի աղքատ հայ գիմնազիստներին որպէս իր մշտական ստիպենդիաներ պահելու դիտաւորութիւնը, դա շատ գովելի, օգտաւէտ և նպատակայարմար գործ կը լինի։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Մարտի 10-ին

Ցրտերը դեռ չարունակվում են այստեղ։ Ցոյս չը կայ ապրիլ ամսից առաջ ցանքս անելու։ Այսօր մեր գաւառապետի պաշտօնակատար պ. Վ. Շաչխաթունեանց ուղեւորվեցաւ Երևան անձամբ խօսելու պ. Նահանգապետի հետ մեր քաղաքում հիմնելի մի քանի կարևոր հիմնարկութեանց վերաբերմամբ, որոնք դարձել են մեր յարգելի պաշտօնակատարի ջերմ հոգատարութեան ձեռնարկներ։ Յանկանում ենք իրաւէ այդպիսի մտադրված գործի յանկութեանը։

Թէև մեր գործունեայ թաղապետները փետրվարի 21-ին տարապրելին «Մասնաւորաբար ընթերցարանի» խնդիրը, բայց, որպէս տեղեկանում ենք հաստատ աղբիւրներից, դեռ ևս չեն յանձնել կառավարութեանը այդ խնդիրը, որովհետև կանոնագրութիւնք դեռ ևս պատրաստ չէ. դեռ չեն ստացվել, գուցէ դեռ էլի մի քանի բառեր կան, որոնց տեղ պէտք է դրվին ուրիշ բառեր։ Ըէ լինի թէ, ստացվելու պատրաստակաս մի ուրբ ամիս էլ նորից յետաձգվի խնդրի և կանոնագրութեան ներկայացնելը տեղական վարչութեան։ Այսպիսի գործունեայ թաղապետներից մենք ամէն բան սպասելու տեղիք ունենք։

«Մշակի» հարուածողական ուղղութիւնը միշտ էլ դուր չէ եկել այսոհետև «խաւարասէրների» խմբին։ Նրա յառաջդիմական ընթացքը պատճառել է նրանց, միշտ էլ, հոգս և մտատանջութիւն։ Նրա էջերում պեռեզված արդարակորով քննադատութիւնները պատճառում են վրդովմունք այսոհետև գործող շրջանների անդամներին։ Մենք է եղել միշտ նրանց համար կարդալ իրանց հասարակական գործունէութեանց ճշմարիտ նկարագիրը «Մշակի» էջերում։ Ճիշտ մի այսպիսի ազդեցութիւն գործեց մեր հասարակական գործողութիւնների չտեսերի վրա այս տարվայ «Մշակի» 34-րդ համարում երևեցած «Ցեղացի» տորոտագրութեամբ յօդուածը։ Այս յօդուածի պատճառած տպաւորութիւնը ազդու էր։ Մեր քաղաքում կատարվող անմխիթար իրողութեանց նկատմամբ այնտեղ յայտնված իրաւացի նկատողութիւնները վրդովեց մեր հասարակական գործող դասակարգի շրջանները։ Ամենատարակ մի խակ յատկութիւն ունեն մեր հասարակական գործողները։ Երբ որ այս կամ այն լրագրի էջերում երևում է նրանց գործունէութեան նկարագիրը, խոցոն վրդովվում են նրանք, իրանց գործունէութեան թոյլ և պակասաւոր կողմերը մերկացնող ճշմարտութիւններից։ Լաւ կը վնասէր, որ գործող պարոնները վոխանակ անտեղի կերպով վրդովվելու իրանց վերաբերութեամբ արած արդարացի նկատողութիւններից, ուսանէին ու ղգային իրանց հասարակական գործունէութեան պակասաւոր կողմերը և ուղղէին այդ թերութիւնները։ Եւ ոչ թէ մի ազգային սրտնեղութեամբ բացականչէին՝ «այդ ով է գրել, վայ ես դրա գլուխ..... ախ ես մի իմանայի դրա խնդական անունը, ես մի տեսնէի դրան.....» և այլ այսպիսի հաղար ու մի անտեղի բարկանալմունքներ.... Լրագրութեան, այդ հասարակական կարծիքի առաքնորդի նուիրական պարտքն է անաչառապէս հարուածել մեր ժամանակակից, անթիւ հասարակական զեղծումները։ Բողոքել այդ առողջամիտ ուղղութեան դէմ, նշանակում է՝ բողոքել մի կրթող, մաքրող և բարոյականացնող գործութեան դէմ....

Ա. Ա.

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Մարտի 1-ին

Մեզանում սովորութիւն է դարձած, մեր «ցիւլինդրաւոր համալսարանականներին» մարակոչել կրթուած, անձնական շահերից զրկված, ինչասիրի և այլ այսպիսի թշուառ խօսքեր յատկացնել առանց գործի էութիւնը քննելու։ Վերցնենք ուսանողութեան կեանքից մի կէտ և տեսնենք ինչքան թոյլ են այն յարձակումները, որոնց ենթարկվում են մեր համալսարանականները։

Ընթերցող հասարակութիւնը գիտէ, որ ամէն տարի մայրաքաղաքներում տրվում են ներկայացումներ, որոնք, պէտք է ասած, բաւական աստղիմաբար են տալիս. պատահում է 600—800—1000 րուբլի է ժողովվում։ Յայտնի է, որ այդ ներկայացումների տալը տօնորութիւն է դարձած վաճառական թաղականիներից, ուրեմն մօտ 20 տարի է։ Ո՞վ են դնացել այդ գումարները, որոնք միայն այժմ կը կազմէին 10—12 հազար րուբլի, եթէ վերջնենք ներկայացման նկատմամբ միջնորմամբ 500—600 ր., չը հաշված տոկոսը, որ այդ գումարը կարող էր բերել։ Ցայտնի է նաև՝ որ այդ գումարները բաժանվում են ուսանողներին կամ իբրև պարտք, կամ իբրև թոշակ։ Իբրև պարտք վերցնում են հարուստ ուսանողները, իսկ իբրև թոշակ—չքաւորները։ Առաջինները վերցնում են «կը տամ, կը վերադարձնեմ» ասելով, իսկ երկրորդները վերցնում են բոլորովին ազատ խիղճով, չը մտածելով, թէ սա ազգային փող է և սեպհականացնելը նոյն է թէ գողանալ։ Բայց ինչ եմ ասում, արդ համարձակվիր նկատել այդ ներկայ ուսանողներից մէկին, կամ համարձակվիր այդ անել ներկայ համալսարանականներին նրանց ուսանող ժամանակը, և «բարոյականութիւն», «ընկերութիւն», «ազատմտութիւն». «խղճի» և այլ սրանց նման ուռուցիկ խօսքերը կարկուտի նման պլխիդ կը թափվեն և մինչև անգամ էլ կը կարմրացնեն։ Այդ թոշակ կամ պարտք վերցնելիս անցնում են տարիքը և մեր թոշակառուները ու պարտառները ստանում են դիպլոմներ, գնում են ամէնքը մի գործի, սկսում են փող դիզել, տներ առնել։ Չը կարծես, ընթերցող, որ այդ միջոցին այդ պատուելի պարոնները մոռանում են յիշեցնել ուռուցիկ խօսքերը, ոչ. նրանք նոյն հազար խօսքեր, շարունակում են ամեն յարմար դէպքում դղրտալ բարոյականութիւն, ընկերութիւն և այլն և այլն։ Բայց տեսէք, գոնէ մէկը մտածել է իրեն վերցրած պարտքը կամ թոշակը վերադարձնել. «Աստած մի արասցէ»։ Հաղարներով ռռնիկ է ստանում ու փորը կուշտ է, էլ ինչ կարիք կայ ուսանողութեան վրա մտածել, իր խեղճ չքաւոր անցեալը մտաբերելը։ Լաւ է, որ փողը տալիս նրանից վէրսէլ չեն վերցրել և իրաւունք չունեն պատասխանը քաշել. էհ, ուրեմն ազատ է։ Բայց տեսէք ինչպիսի բոպէներ են պատահում ներկայ ուսանողների կեանքում (անկասկած դրանք կրկնվել են և մեր նախորդների ժամանակ). ուսանողական «բարեգործական» արկղում կոպէկ չը կայ... 5—6 չքաւոր ուսանող կայ. ինչպէս են ապրում... ահռելի է նկարագրել. այն է այդ դրութեան հետևանքը, որ վատ կերակուրից, խոնաւ, ցուրտ սենեակից մէկը բէվմատիզմ ունի, միւսը զանազան տեսակ կատար ունի, երրորդը մրսից, հիւանդացաւ և միջոց չունենալով այս սարսափելի կլիմայում պահել իրեն ինչպէս հարկն է, մնում է և այլն և այլն։ Այդ նախկին ուսանող, այժմեան առելի հասասոխոր բուրժուան արդեօք կը տեսնէ, կը մտածէ, կը հասկանայ այս ամենը կը ճանաչէ իր մեղքը. փատերը ցոյց են տալի, որ նրանք այնքան հասոմ, անզարգացած, «բարոյականութիւն» բառը բերանում՝ անբարոյական են եղել, որ այժմ պատահում են ուսանողական կեանքում յիշելու դժուար և ցաւալի բոպէները։

Բայց դա համեմատաբար դեռ ոչինչ է, երբ այժմ, մեր աչքերի առաջին աւելի զգունին, աւելի սարսափելին ենք տեսնում։ Երկու տարի սրանից առաջ Թիֆլիսում տալիս են մէկ ներկայացում յօգուտ Ս. Պետերբուրգի չքաւոր հայ ուսանողների և գոյացած նկատառը յանձնում են մէկ ունևոր ուսանողի, որ հասցնի նպատակին։ Ինչ էք կարծում. մինչև այսօր պարտը, որ դեռ ևս ուսանող է, այդ փողերը չէ յանձնում ուսանողներ. Ինչ է արել.... բարոյականութեան, ուսանողական պատուի վրա սկսա խօսել, բերանդ կը պատռի։ «Կը տամ». «Ինչպէս կը տաք». «Ամսական հինգ րուբլի». «Չէն ինամ, եթէ գոնէ այդ տալիս ևս.» բայց մինչև այժմ գործը նոյնա է։ Այդ առակ լուսրուբ։ Անցեալ տարի տրվել է այսոհետև մէկ ներկայացում և գումարը մինչև այսօր..... «Ամսական 15 րուբլի կը տամ.» «Չէն ինամ, եթէ գոնէ այդպէս անես»։

Եվ ինչ իրաւունքով կարող է ուսանողը ազատութիւն պահանջել հասարակութիւնից. ուր է ուսանողական պատիւը. բանական է. պատմական փորձերը չատ խրատուող են. նախկին ուսանողները, եթէ խիղճ ունեն, թող վերապարծնեն իրենց պարտքերը և թոշակները, իսկ ներկայ ուսանողները, թող խելքի գան և առանց վէքսիլի մի կոպէկի չը տան ոչ ոքի։

Ն. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ԱՂՆԱԻՒՑ

—

Մարտի 11-ին

Փետրվարի 12-ին տարապրելի քամի վերկացաւ, այնպէս որ ամբողջ երկու օր անդադար փչում էր և ձնաք չը վերցրեց, մինչև քաղաքին մեծաս չը տվեց, այն է մի քանի անների պատշգամներ և տանիքներ քանդեց։ Վերջապէս նոյն ամսի 14-ից մինչև մարտի 1-ը մենք գարնանային գեղեցիկ օրեր էինք վայելում և այս ժամանակամիջոցում խաները կանաչեցին, ծառերը պատրաստվեցան ծաղկելու... Բայց մեր կողմերի բրնձակիչների ուրախութիւնը ժամանակաւոր էր և ամսի 1-ից կրկին սկսվեցան ամպրոպական քամիներ, որոնց հետևանքը գարձեալ անվնաս չէր. մօտիկ կարգանաս գիւղում այրվեցան 50 տուն ից աւելի, բայց մարդիկ անվնաս ազատվեցան. քամիներին հետևեց ձիւն, որ եկաւ այսօր ամսի 11-ին փաքր քանակութեամբ։ Այսպէս այս տարի ձմեռը շատ փոփոխական էր. երբեմն խոտ և երբեմն մեղմ, բայց բարեբաղդաբար ոչ մի հիւանդութիւն չը կայ այստեղ։ Առաջին հարկաւորութեան կենսական միջոցների գները հետևեալներն են այսօր. ալիւրի պուդը 1 ր. 20 կ., բրինձի պուդը 1 ր. 40 կ., մսի ֆունտը 14 կ., իւղի ֆունտը 50 կ., գարու ֆունտը 25 կ., ձէթի ֆունտը 23 կ. և այլն։

Մօտ օրերումս անցիս հայոց երկաթ. ուսումնարանների նոր ընտրված հոգաբարձուներ—Նիկիչէ քահ. Տէր-Աստուածատրեանց, պ. Յոհ. Գազրեանց և պ. Կոստ. Տէր-Մարթիկոսեանց հաստատվեցան իրանց պաշտօնի մէջ։ Շնորհաւորում ենք սրանց այս նոր և արդարև պաշտօնը և խնդրում ենք որ խղճմտանքով կատարեն այս պաշտօնը, առաջ տանեն ուսումնարանները, որ մեծ պատիւ կը բերի սրանց. սիրով լինեն ուսուցիչների հետ, որովհետև ուսումնարանական գործի առաջ գնալն խիստ նպաստում է ուսուցիչների և հոգաբարձուների մէջ եղած սէրը. մի խօսքով իրանց գործունէութեամբ գերազանցեն նախկին հոգաբարձուներին։ Կը ցանկայինք, որ ինչպէս առաջվայ խառնակութիւնից յետոյ ահա չորս տարի ուսումնարանը հանդարտ դրութեան մէջ է և գործն էլ լաւ է գնում, այնպէս էլ միայն և նոր հոգաբարձուների ժամանակ։ Նոր հոգաբարձուներից կը խնդրենք երկու բան, որոնցից կախված է ուսումնարանի գոյութիւնը, այն է՝ նոր աղբիւրներ գտնեն (նիւթական միջոցներ ասելացնեն) և եղածները լաւ պահպանեն։ Ա. այժմ բանական եմ համարում այսքան ասելը նոր հոգաբարձուների վրա, գուցէ միւս անգամ առիթ ունենամ խօսել աւելի մանրամասն։

Ամսիս 10-ին տեղացի Մ. Մ. սպանվում է հրացանով իր կնոջից. սպանութեան պատճառը համարում են վերջինի խելագարութիւնը, որին բանտարկելին և կրկին ազատելին։ Բայց կնոջից հանգուցեալը ունի և մի խելացար որդի։ Թեզ հանգուցեալը նախատեսելով իր մահը՝ մի քանի անգամ դիմել է ատիկանութեան ուղարկել Թիֆլիսի հիւանդանոց իր կնոջն ու որդուն, բայց ատիկանութիւնը անուշադիր է եղել։

Մ.

Fonds A.R.A.M

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍԻ հայ կանանց բարեգործական ընկերութեան վարչութենից տարացանք հետեւեալ նամակը։ «Թիֆլիսի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է ձեզ ընդունել իր խորին շնորհակալութիւնը ձեր ցոյց տուած համակրութեան համար դէպի ընկերութիւնը և ձեր թերթի մէջ ընկերութեան ժողովների մասին մի քանի անգամ յայտարարելու համար։ Կը բարեհաճէիք, արդեօք, ձեզ մօտ տարարերութիւն ընդունել, թէ Թիֆլիսում և թէ օտար քաղաքներում բնակվող յարգելի տիկնանց հատարակութեան այն անձինքներից, որոնք ընկերութեանը անդամակցել են ցանկանում։ Ձեր յիշած կանոնադրութեան թուում, մուտքել էիք յիշել տիկին կատարինէ Բէհբութեանցին. մեզ անչափ կը պարտաւորէք եթէ ուղղէք այդ փոքրիկ զանցառութիւնը։» Ցանելով սկսք է պատասխանենք յարգելի տիկիններին, որ ինչքան էլ սրտով համակրէինք նրանց նորատոյց ընկերութեանը, այնու ամենայնիւ ժամանակի պակասութեան պատճառով մեզ անհնարին է «Մշակի» էջերում տարարերութիւն բանալ այդ ընկերութեան օգտակար վճարները ընդունելու համար։ Խնդրում ենք մեր յարգելի տիկիններին ներողամիտ գտնվել դէպի մեր ակամայ մերժումը։ Մեր տարած նամակը տարարերել էին աւետնոցի տ. Աբրահամ քհնյ Երիցեան և աւետնոցի տ. Մարիամ խոյրովեան։

—

ՆՈՒԽՈՒԻՑ մեզ գրում են որ այդտեղի մի հայ երիտասարդ փայտեայ մուրճով իր կնոջ գլխին մի անգամ խփելով, սպանել է նրան։

—

Մեզ գրում են վարդաշէնից որ պ. Գ. Խոջամիրեանց վերջացրել է Ֆօն-Վիզինի «Недоросль» (Անչափահաս) գրուածքի թարգմանութիւնը և շուտով կը վերջացնի և Ֆրանց Հօֆմանի «Պատմուճան մանուկների համար, հինգ տարեկան հասակից մինչև ութ տարեկան հասակը։»

—

Տարեվերջում Աստրախանցից մի ընդարձակ յօդուած, որով պարոնը պատասխանում է «Արձագանք» շաբաթաթերի մէջ իր դէմ գրված «Մի ճշտակաց միջատ» յօդուածին։ Մենք երբէք չենք խուսափում այնպիսի բանակռիւներից, որոնց գլխաւոր նպատակն է մի պրինցիպ, մի սկզբունք բացատրելու և պարզելու, բայց մեր տաս տարվայ գործունէութեան ընթացքում միշտ խուսափել ենք այնպիսի բանակռիւներից, որոնք հինք ունենալով ոչ թէ սկզբունք, պրինցիպ, գաղափար, այլ անհատական անասնէտ այս կամ այն մանուսր հանգամանքի վրա, միշտ անվերջանալի և ապարդիւն են լինում։ Այդ պատճառով ներողութիւն ենք խնդրում մեր բարեկամ պ. Աստրեևանցից, եթէ նրա յօդուածը չենք կարող ապագրել։

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ բարեգործական ընկերութիւնը վճռել է մի յայտնի գումար գործ գնել իր հաշուով հայ երիտասարդներից մի քանի մշտական ասիստենտներ պահել տեղիս գիմնազիաներում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են որ պ. Ներսիսեան, որ Ամերիկայից է եկել ներկայացումներ տալու համար և ցոյց տալու ամերիկական այլ և այլ նորագիւտ գործիքներ, Բաթում եղած ժամանակին էլ մի քանի ներկայացումներ տուել, որոնցից մինը տպիս հայոց գպրոցի օգտին։ Այդ ներկայացումից գոյացաւ 70 րուբլի չափ, որ և յանձնվեցաւ գպրոցի հոգաբարձութեանը։

—

Պ. Ներսիսեան չուտով տալու է մի ներկայացում Թիֆլիսում, Արծրունու Թատրոնում։

—

ՄԵՆ-ԳԱՐԱԳԼԻՍԻՑ մեզ գրում են հետեւեալը։ «Ձեր լրագրի № 30 մէջ գծի տակ գետեղված պ. Աստուածատրեանի յօդուածը այնքան դեղեցիկ և անաչառ էր գրված, այնքան լաւ էր նկարագրում մեր գիւղացիների կեանքը, գիւղական գաւառների և իշխանաւորների գործունէութիւնը, որ արժէ հասարել ժողովուրդը և կարդալ նրա առաջ այդ յօդուածը։ Մի և նոյն բաներ, որոնք նկարագրված էին յիշեալ յօդուածում, առանց բացառութեան, ամեն օր, ամեն րոպէ կրկնվում են և մեր կողմերում։ Ժողովուրդը, երկրագործ դասը, աղքատ ամբոխը կատարեալ գերի է իր իր առաջնորդներին, երբ արտաքին գործերի միջնորդի օգնական Զարլզ Դիլկ յայտնեց, որ Վիկտորիա թագուհու գեսպաններին երբեմն աջողվում է մասնաւոր յարաբերութիւնների օգնութեամբ օտար կառավարութիւնների հետ հասնել բարեյաջող հետեւանքների, երբ հարցը ամբողջ մարդկութեան ընդհանուր բարօրութեան մասին է, մինչդեռ այդպիսի հարցերը անչափ է դիւանագիտական պաշտօնական բանակցութիւնների առարկայ դարձնել։

Որովհետեւ Բրիգլօ նորից ընտրվեցաւ Նօրդդեվոնի ներկայացուցիչ, համայնքների ժողովը առիթված էր մարտի 6-ին նորից գրազվել նրա անձնաւորութեամբ։ Սասֆիօրդ Նօրդհօտ դարձեալ առաջարկեց թոյլ չը տալ Բրեդլօին պարլամենտական երդում տալ Աւդ առիթով համայնքների ժողովի անդամներից մէկը առաջարկեց պարլամենտական կանոնադրութիւնը այնպէս փոփոխել որ ապագայում ժողովի իւրաքանչիւր անդամ իրաւունք ունենայ երդվել կամ միայն պատուաւոր խօսք տալ։ Այս առաջարկութիւնը պաշտպանեցին բոլոր ազատամիտները, միայն մի քանի բացառութեամբ։ Բացի այդ պարլամենտի անդամներից մի քանիսը կարծիք յայտնեցին, որ անցել են այն ժամանակները, երբ քննում էին պարլամենտի անդամների կրօնական համոզմունքները։ Երևի այդպիսի համոզմունքի կը լինի պարլամենտի մեծամասնութիւնը եթէ ոչ այժմ, գոնեա մի քանի ժամանակից յետոյ։

Պարլամենտական ներկայ շրջանի օրէնսդրական գործունէութիւնը բաւական շատ ձեռնտեց Գլադստոնի առաջարկութիւնը լօրդերի ժողովի գործունէութեանը պահպանելու յայտնելու մասին։ Այդ առաջարկութիւնը քննվեցաւ մի քանի նիստերի ժամանակ, որոնց կարելի էր աւելի օգտաւէտ հարցերի նուիրել և ընդունվեցաւ ընդամենը 68 ձայների մեծամասնութեամբ։ Միւս կողմից լօրդերի ժողովի նշանակած մասնաժողովը արդէն սկսել է քննութիւն կատարել իրլանդական կալուածական օրէնքի գործադրութեան մասին։ Հասկանալի է, որ կառավարութիւնը ոչ մի կերպ չէ օգնում այդ մասնաժողովին։ Իրլանդական գործերի միևնոյն ֆօրատեր անցեալ շաբաթ այցելեց իրլանդական ամենահանգիստ գաւառները, որտեղ խառնվելով ամբոխի մէջ, նա հասարակի և հասկանալի խօսքերով բացատրում էր ժողովրդին կառավարութեան խնդիրն նպատակները և ցանկութիւնները։ Այդ ճանապարհորդութիւնը շատ լաւ արդիւնք գործեց։ Գլադստոն և Բրայտ մարտի 6-ին Ուլվերհեմպտոնի մէջ ներկայացան Վիկտորիա թագուհուն և բացատրեցին նրան այն միտքը, որ կարող է հասցնել լօրդերի ժողովի նշանակած մասնաժողովը իրլանդական կալուածական օրէնքի գործադրութեանը։

Ասում են, որ առաջիկայ կառավարութիւնը հանդվել է, թէ անհրաժեշտ է ոչնչացնել կարելի է շուտ վերջացնել հերցեզովինցիների ապստամբութիւնը և որ այդ պատճառով աւստրիական զօրքերը այսուհետև եռանդով կը գործեն։ Գիտեն Սկօբելեվի ճառերը Անգլիայի մէջ մեծ տպաւորութիւն գործեցին։ Թէ անգլիական քաղաքական շրջանները և թէ նրանք, որոնք անձամբ ճանաչում են Սկօբելեվին իրրև քաջ գիտերալի, համոզված են, որ նա չէր կարող այդպէս համարձակ խօսել իր հայրենիքի պաշտօնական քաղաքականութեան դէմ, եթէ յոյս չունենար հզօր պաշտպանութեան վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

„Голосъ“ լրագրի Թղթակիցը գրում է Լօնդոնից մարտի 10-ից հետեւեալը։ Անցեալ շաբաթվայ պարլամենտական վիճաբանութիւնները բաւական հետաքրքիր էին։ Ջը Նայէլով համայնքների ժողովի հրէայ անդամների խորհուրդներին, բարօն Ռօթսն առաջարկեց ժողովին ցանկութիւն յայտնել, որ անգլիական կառավարութիւնը միջնորդէ ռուսաց կառավարութեան առաջ ռուսահպատակ հրէաների համար։ Գլադստօնն, այդ առաջարկութիւնը անտեղի և անիրատգործելի համարելով, յայտնեց, որ հակահրէական շարժման ժամանակ Ռուսաստանի մէջ այնպիսի անգութ գործքեր են կատարված, որոնք ամօթալի են ոչ թէ միայն Ռուսաստանին, այլ և ամբողջ մարդկութեան պատմութեան համար, մանաւանդ որ այդ գործքերը կատարված են քրիստոնեաներից։ Այնու ամենայնիւ Գլադստօն չէ կասկածում, որ Ռուսաց կայսրը և նրա կառավարութիւնը այդ չարագործութիւններին այնպէս են վերաբերվում, ինչպէս ամբողջ Անգլիան։ Առաջին մինիստրը ասեց, որ անգլիական կառավարութիւնը մանրամասն տեղեկութիւններ չունի Ռուսաստանի մէջ կատարված հակահրէական հալածանքների մասին և միջազգային իրաւունքի հիման վրա առիթ չունի յանձնել իր գործակատարներին, որ նրանք այդ առարկային վերաբերեալ փաստեր հաւաքեն և նրանց ըստուգեն։ Գլադստօն համաձայնեց, որ միջազգային իրաւունքը բաւական շատ պատկառութիւն ունի և խոստովանեց մանրի օգտակար ազդեցութիւնը այդ գործի վրա։ Նրա կարծիքով մանրը արտայայտում է հասարակական կարծիքը և մի և նոյն ժամանակ պաշտօնական պատասխանատուութեան չէ ենթարկված։ Այս դէպքում անգլիական մանրի դրութիւնը աւելի լաւ էր, քան թէ անգլիական կառավարութեան և նրա հետ սերտ կապերի դրութիւնը։ Մանրը կարող էր հետաքրքիր լինել, որ նրա առաջարկութիւնների վրա առանց կասկածի կը նայէին։ Համայնքների ժողովի անդամներից մի քանիսի ակնարկութիւններին, որ Գլադստօն միջնորդից յիսանելոյ թուականների վերջը յօդուտ իռլանդական ազգասէրների, նա պատասխանեց, որ այդ միջնորդութիւնները անօգուտ անցան։ Գլադստօն աւելացրեց, որ այն ժամանակվայ միջնորդութիւնը պարլամենտական վճռի ձև չունէր։ Վերջը Գլադստօն յայտ յայտնեց, որ ռուսաց կառավարութիւնը գործ կը գնէ իրանից կախված բոլոր միջոցները ապացուցանելու այդպիսի ցաւալի անցքերի առաջն առնելու համար։ Բարօն Ռօթսն յետ առաւ իր առաջարկութիւնը, երբ արտաքին գործոց մինիստրի օգնական Զարլզ Դիլկ յայտնեց, որ կառավարութիւնը ձեռնարկել է ուղիղ միջոցների։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՑԻՑ

—

Կ. Պօլիս, 3 մարտի 1882

Գարձեալ սովելոց հուշակաւոր մանուածոցովին վրայ պէտք է խօսեմ այսօր, վասն զի ամեն կողմ տարածուած դրոյցներն այնքան գայթակղական են զան կազմող անձանց վարմունքին վրայ՝ որ պէտք է վերջապէս ճշմարտութիւնը երեան եկնէ և զան այդ պատմութիւնը փաստերով, թուանշաններով ապացուցանուն առաջի հասարակութեան որ ամբողջ մէկ ազգ, բարեմաքիս օտարազգիք, խաղաղ և առատաց մարդոց չեն հասատացեր իրենց փողերը։

Այս տեղի լրագրաց ընդհանուր լռութիւնը այդ հաշիւներու մասին, վստահացուցիչ նշան մը չէ։ Ոմանց բարեհամարար առած խրատներուն անլսելի բլլալը, «Մշակի» քանիցս րրած մեղմ հրաւէրները, կարող չեղան համոզել Ընչքեան, Կիւրէղեան և ընկերք, որ իրենց վրայ պատած անհանգելի լուրերը պէտք է փարատան ժխտելէ։ Անհատարիմ պաշտօնեայ մը միայն կաշխատի մատուցանել առ իրեն յանձնուած գումարներուն հանդրատուութիւնը։ Գանի որ այդ պատմութիւնը լուռ կը մնան, քնաւ պատճառ մը չկայ որ մենք ալ չի հատատանք պատմուած պնդումներուն ընդմարտութեանը։

«Մշակի» յատաջագոյն րրած հրատարակներն երկի դայրայրի են պատճառած այս մանուածոցովի անդամներուն, գլխաւորապէս արհատագրատուութիւն ձեռնարկող Թրքահօս Ընչքեանի, որ կը գնայ ամեն կողմ ատելով թէ «մանուածոցովը հաշիւ չունի տալու ուրեք ոչ թէ մարդոց և թէ միայն երկու իշխանութիւնք կան որ իրաւունք ունին իրենցմէ հաշիւ պահանջելու»։ Այդ իշխանութիւնները են եղեր կ. Պօլսոյ Ազգային ժողովը և Էջմիածնայ կաթողիկոսը։ Ազգային ժողով չկայ, ըլլայ անգամ, անցած գարուն րրած բանը խնդիր չըներ, իսկ Էջմիածնայ կաթողիկոսին շատ հասանական է որ մեծ մասնաժողովի մէջ չէ այս մասին. ըսել է, պ. Ընչքեանի յայտ րրած սկզբունքին նայելով, մենք հաշիւ տուողներ չունինք մինչև կատարած աշխատին։

Մինչ այդ կամանպիլ ընկերութիւնը ազգային գործ մը կոչուած է անօրինելու, թէ մեծապէս ըրած ազգին մեծագործ նուէրները ըստ քմայ գործածել։ Եթէ մասնաժողով մ՚է ազգէն կարգուած, ինչ լրութիւն է այնքան երկար տանի պահել իրեն հաշիւները։ Եթէ մեծապէս մ՚է, թող խոստովանին բացարձակ, որպէս զի մենք ալ գիտնանք թէ յիմարի պէս մեր փողերը չորթել ենք տուել և սխալմունք։ Ուրիշ անգամի համար գոնէ խրատուած կրլլանք։

Մասնաժողովին անդամները կերթան տա ու առ խոսելու թէ, տակաւին հաշիւ չեն կարող տալ վասն զի Հայաստանի մէջ իրենց գործառնութիւնը դեռ չէ աւարտած, և իրր թէ խորամանկ ազգասէրներ, ատոր ա անար ախանջէն չեռ գիտեր ինչ շինծու և խաբերայ վկաներ կը փափաքան խորհրդաժողովութիւն խնդրելով։ Մասնաժողովը ատվելոց համար հատատուած է 18 ամիս է որ գաղափած է այդ ատիր. Թող նախ այդ հաշիւը ատան մեզի, յետոյ կը տեսնենք թէ յատկացած փոդերուր հարկ է ուրիշ բարեգործական ձեռնարկութիւններով պարապիլ, և թէ այդ պարտները գործելու յարմար կը գտանենք այսպիսի պաշտօնեներ վարելու համար։

Ըսին կը տարածեն որ Հայաստանի մէջ հանատեր և այծեր կը յոգարկեն միշտ։ Ինչ քանակութեամբ և ինչ թուով, այդ ոչ ոքի յայտնի է, իրենք են միայն այդ բանը գիտցողը և իրենք միայն կարող են գիտնալ, վասն զի ատոնք է այդ, գոնէ ձրիապէս յոգարկուելնին բաւական քանակութեամբ։ Սակի ժամանակ անգամ վանայ և ուրիշ գլխաւոր կեդրոններուն տեղական մասնաժողովներուն անգամ հանատատացներ, սակայնեան ուտելուն վրայ speculation կընեն և կենսաբանական մասնաժողովը շատ լաւ տեղեակ էր այդ բանին։ Ինչու ատ գործը ձանձրեց եթէ ինքն ալ անոնց մեղսակից չէր։ Ով կերաշխատի մեզ ուրեմն, որ գլխաւորապէս Ընչքեան և Գիւրղեանան, որը փորը Աստուած հետ մասնատնդ առատատ կընեն, մարդասիրական գործ մը իրենց պատրատակ չեն բան հեռաց, և իրենց մասնատար հաշուոյն և չահուն համար չեն գործածեր ձեռքերնին պանատած գրամները։

Եթէ սակին վերջանալէն յետոյ, անոր կրկին գործը արգելելու համար կաշխատեն, ինչպէս կը պարծենան չորեքատներուն մէջ, ով տատ իրենց այդ պատճառութիւնը և ինչպէս գիտնալու է որ այդ

Fonds A.R.A.M

նպատակին հասնելու համար՝ լաւագոյն միջոցներն են ձեռք առած և իզուր չեն մտիկ այժմ ինչ որ այն ժամանակ զրկեր են քաղել մեռնողներուն: Մենք ամբողջ գիրեր գիտենք վասնզ մասին որ մեզ կօգնէ չեն տասցեր այդ խնդրոյ առթիւ բանակցութեանց պարագային:

Հաստատութենէն ոմանք կասկածան այս տող գնալ հաշիւները քննել: Գիտէք ինչ պատասխանեցին: Հրաւիրեցին զանոնք գնալ կիրակի օր մը պ. Ընջեանի տունը և ակտը եղած քննութիւնը բննել: Ոչդն է բսել հաշիւ չտեսնիք ցոյց տալու վասն զի չիկայ մէկը որ հաստատուց գործին համար գիջանի պ. Ընջեանի պէս parvenu մէկու մը ապտակները գնալ, ուր ինչ տեսակ ընդունելութիւն գտնէն ալ տարակուսելի էր: Ամիսներ անցան և հիմայ կիմանանք որ կանոնաւոր հաշուետուփար անգամ չտեսնին եղեր, ինչպէս չտեսնցած են երբէք գրասենեակ մը մանաւանդ այս գործին յատկացեալ: Սկիզբէն մինչև հիմայ կօտրտոլ անգամ չեն ըրած թէ գաւառական մանաժողովները ինչպէս կը գործածէին հաւաքուած դրամները, ամեն կողմէ եկած դանգատները, աղէտները նկատողութեան անգամ չէին առներ, ինչպէս այժմ չեղնալ կը հանդիսին այսուհետև մանաւանդ անձանց իրաւացի սոխպատմր և «Մշակի» ըրած քաղաքավար հրատէրները որ հաշիւ տան վերջապէս: Իւ սակայն կարծեմ ամենէն աւելի «Մշակն» պէտք է հետապրրբուի այդ մասին և ուզենայ տեսնել թէ ինչպէս գործածեր են միայն իր ձեռքով յատկացած 45,000 լուսպլի դրամները: Երբ փողերը կը հաւաքէին, «Մշակի» խմբագրէն մեծ մասդ չի կար աշխարքում Ընջեանի համար, հիմայ որ նա հաշիւ կը պահանջէ, հաշիւ չեն տալ, պատճառ բերելով թէ Գրիգոր Ալթըռնէն ոչ երեսփոխանական ժողովն է և ոչ ալ Էջմիածնայ կաթողիկոսը:

Շատ մեծ է ուրեմն այդ պարոններուն երկիւղը որ խնդիր լուսաբերէն մը կուզեն պահել իրենց հաստատութեան մասին, որ խոյս կը տան հրապարակա խօսելէ, որ քաղաքին օգտակիրներն գիտեն լուսնցնել, որ տեսակ տեսակ խաբէական լուսեր կը տարածեն ամեն կողմ, որ ի տախիլ հարկին խորհրդարք կը ձեռնարկեն և պրժանապատութիւններն վերագրած կը հանարեն հաշիւ տալու պիջանելով:

Այդ մանաժողովի պարագներուն վրայ տեսար տարաձայնութիւններն ալեան բազմապատկիլ, անհատապէս զեղծումներ կը պատմուին մէն մի անդամներու մասին: Մենք տակաւին չենք ուզեր մէջ բերել մեր լսածներն, որոց անտեղի ըլլալն ապացուցանելը այնքան դիւրին բան է մանաժողովին համար: Թող իր հաշուեցուցակը հրատարակէ, եթէ երբէք ունեցած է այսպիսի մի տետրակ:

Մինչև այն օրն, մենք ձեռքերնիս վասա մը չունենալով, ոչինչ կրնանք պատասխանել այն ամեն անձանց որք սակաւ քմծիծաղով մը կըսեն մեզի թէ «Ամենէն աւելի սովալուծները կերեր այդ մանաժողովի անդամներն են եղեր»:

Մ. Վ.

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վան, 9/21 փետրուար 1882

Նախորդ նամակով պատմած եմ ձեզ ինչ որ պատահեցաւ պ. կառնապետեանի և Թիւրքայ փոխոն վարչութեան մէջ: Այդ խնդիրը այժմ բաւական ծանր կերպարանք առած է: Վալի փաշան առած է պ. կառնապետեանին թէ ոչ միայն «Journal d'Orient», այլ և Մշակ և Մեղու լսպիրներն ալ արգելուած են մտնել Վան, թէև պ. կառնապետեանի անունով եկած լինեին: Վալի փաշան կառնապետեան բերի բողոքին վրայ հեռագրած է եղեր Բ. Դուռը և այսպիսի հրամանով է առացեր: Պ. կառնապետեան մի ազդու ծանուցագիր (Թակրիր) գրեց փաշային, յայտնելով թէ ոչ միայն իր յարաբերութիւնները Թիւրքաց փոսանին հետ կը զգրեցուցնէ այսն վրայ չէ կարելի բնաւ վստահութիւն ունենալ, այլ և մի այսպիսի փաշայի հետ որ միջազգային իրաւունքները ոտնատակ կանէ և խաբէութիւնը իր գլխաւոր դիտաղութիւն սրած է: Մինչդամայն գրեր է փաշային թէ այս դէպքը կ. Գոլիս ռուս դեսպանատան տեղեկագրած է և մինչև որ պատասխանն առնայ, չէ կարող իր յարաբերութիւնները շարունակել Թիւրք կառավարութեան հետ: Փաշան բաւական վրդովուած է այս ծանուցագրին վրայ և միջնորդներ ձգելով կուզէ հաշտուիլ:

Աբեղայի մի հայ կարիճ քահանայ, առաջնորդ մի խմբի հետ յարաբերութիւն ունենալու ամբաստանութեամբ, վան բերած բանտարկած էին: Այս մեր հիւանդութեան ամբողջութեան և ազգային իրաւանց հակառակ էր. որովհետև մինչև այժմ մեր քահանայ կամ ս և է հոգևորական յանցաւոր համարելէր, Թիւրքաց կառավարութիւնը առաջնորդարանի կամ պատրիարքարանի գործակցութեամբ կը պատժէր պոյն: 400 դարիներէ հետէ ամեն առաքինութիւններու առած փիլոնանութիւնն համեմատ, հայ հոգևորականները պատրիարքի և կամ առաջնորդներու իրաւասութեան և պատասխանատուութեան տակ կը գտնուին: Հայոց մեր վալին փաշան, երեմ կ. Գոլսէն առած հրամանագիրով քաջալերուած, մեր քաջ հայ սեբաէրը բանտարկեց իր առաջակ, առանց իսոյ տալու առաջնորդարանին: Թրիմեան հայրիկ ապրու կերպով բողոքեց փաշային. կառավարական բէկն ալ միջամտելով յայտնեց թէ պրպտութիւն է քահանային համար իսօսածնին. բայց Թիւրք ժողովականները ոչ միայն բանտէն չարձակեցին քահանային, այլ և փաշային հրամանագիր համեմատ վճիռ տալին թէ մինչև երեք տարի բանտը պիտի մնայ: Բայց այս օրեր կառավարական բէկի սիրտը չհանելու համար արձակեցին քահանայն:

Կառավարութիւնը տրգելած էր ազգային հանդիսներ կատարելը. բայց հակառակ այդ տրգելքին, վարդանանց տօնի հանդէսը այս տարի ալ չքեղութեամբ կատարուեցաւ, միայն թէ փոխանակ դպրոցի, Արտը Թաղի եկեղեցւոյն մէջ: Օրատան համեմատ տօնական առաւնութիւնները եղան: Ոգևորութիւնը չատ մեծ էր: Հայրիկը կրցաւ ներկայ գտնուիլ, այլ իր կողմէն Միհրան վարդապետ դրկած էր. որովհետև ինք նոյն օր վարդի վանքին մէջ կատարած էր վարդանանց հանդէսը և մի կ. Պոլսեցի երիտասարդ: Սահակ Ալմաստեան անուն, վարդապետ ձեռնադրուած: Հայրիկ նորա աշխարհականութեան անունը չը փոխեց. Թերևս միչեղնելու համար թէ վարդապետ գտնելէ յետոյ իր նախկին ակըռնքները պէտք չէ որ փոխէ: Շատ ազատամիտ երիտասարդներ կը ճանչենք որ վարդապետ գտնելէ յետոյ, իրենց աշխարհականութեան ժամանակ դատապարտած և քարոզած սկզբունքները մոռցած են: Ձեզ ասենք որ Ալմաստեան վարդապետը այդպէս չի լինիր: Սա հօրեղբօր որդին է պ. Մատթէոս Ալմաստեանի որ 7 տարիի չափ առաջ Արարատ շաբաթաթերթին կը հրատարակէր Կ. Պոլիս և Ցրտպիտնէն պրսած հարուստահարութեանց նամակ մը հրատարակելուն համար մեծ վէրքերին հրամանով սասիկ ծեծուելուց ասիկանութեան պաշտօնատար և հիւանդանալով մեռաւ: Թրիմեան հայրիկ եպիսկոպոս լինելէն մինչև այժմ ոչ մի վարդապետ ձեռնադրած չէ. Թէև աչակերտներ շատ ունեցած է իր բացած վարժարաններու մէջ, բայց նորա ուրիշներէ ձեռնադրուած են վարդապետ. Սահակ Ալմաստեան Թրիմեանի ձեռնադրած առաջին և միակ վարդապետն է:

Մի շաբաթի չափ յառաջ Բ. Դուռէն հրահանգներ եկան նահանգապետին որ բէֆօրմները սկսի գործադրել: Այդ ծրարի համեմատ ամեն մի քաղ մէուտիր պիտի հաստատուի որ պէտք է նոյն քաղի հարուստներէն մին լինի: Կառավարութիւնը այդ հարուստ անձի միջոցով պիտի ժողվէ նոյն քաղի մէջ բնակողներու տրքուներ տուրքերը և եթէ տուրքերը ժամանակին չը հաւաքուին, պիտի կրնայ մէուտիրը բանտարկել և ամբողջ տուրքերը պահանջել անկէ: Ձենք հասկնար թէ ինչ տեսակ բարեկարգութիւն է այդ, որով կառավարութեան տուրքերը միայն կապահովին. իսկ ժողովրդի ապահովութեան համար ոչինչ չը կայ:

Երեք օր յառաջ մի ռուսահայոյ հայ երիտասարդի ամուսնութիւնը կատարուեցաւ այստեղ մի վանահոս հետ: Թէ ինչու համար այդ ամուսնութիւնը կազմեմ հրատարակութեան տալ, պատճառը ինքներն կիմանաք, կարծեմ: Շատ ռուսահայոյ երիտասարդներ կան, որոնք Հայաստանին, Հայաստանն, կը կոչեն, բայց կը տարուին որ Հայաստան տպահովութիւն և նիհիլական և մատերիալական ամեն տեսակ զարգացում տանայ և այնուհետև իրենք գան հանգիստ վայելեն այստեղ, բայց պ. Փիլիպոսեանց այդպէս չարաբ. այդ ամենը երիտասարդը որ Ռուսահայոյ ուսում առած, բարեբարոյ և աշխատասէր մի անձ է, մի տարիէն աւելի է որ եկած է Վան և կաշխատի իր առած ուսումը վանցիներին ալ տալ: Այժմ կենսաբանական վարժարանին մէջ մաթեմատիկի և չափական և բնական գիտութիւններու ուսուցիչ եղած է: Սա վերջապէս որոշեց Վանի մէջ հաստատել իր բնակութիւն, որ տեսնէ հիմնական և տեսական վէրքերն իր աշխատութիւններ և այս մասի մէջ Ռուսահայոյ հայոց կողմէն առաջին քայլն առնուի ինք եղաւ: Խրիմեան հայրիկ և Արեմիա եպիսկոպոս անձամբ եկան օրհնել նորա պաշտօնի ի ներկայութեան կամնարան բէկին. որպսնութեամբ օրհնեցին մի կրծատած վանահոս աջակցութիւնը և պատակցութիւնը ռուսահայոյի ուսում մի երիտասարդի հետ: Գ. Փիլիպոսեանց իր ազգասիրութեան կապերով միութեան գիծ (trait d'union) կը լինի Ռուսահայոյ, Թիւրքահայոյ և կ. Պոլսոյ մէջ. և Թերևս այս դիտաւորութեամբ իր կնքահայր ընտրեց մի կ. պոլսեցի երիտասարդ, պ. Մ. Փորթուգալեան:

Հ ր ա տ ա ր ա կ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Հաւատի բնկերութիւնը» մարտի 9-ից Հռոմի հեռագրում են, որ իտալական հիւպատոսը Տունիսում, նոթերում Տունիսի և Կէրուանի մէջ եւրօպացիների սպանութիւնն պատճառով, հրաման տուցաւ մէկ խոտոր դրութիւն ներկայացնել բէյին, յայտնել նրան մեծ ցասակցութիւն այդպիսի դէպքերի առիթով և յիշեցնել, որ նա պատասխանատու է երկրի մէջ բնակվող կամ ճանապարհորդող իտալացիների սպահովութեան համար:

—Յունիսից լրագիրներին հաղորդում են, որ տեղական ազգաբնակութիւնը սաստիկ կատաղած է այնտեղ տարածված լուրերի պատճառով, որ իբր թէ աւտրիացիները ցանկանում են գնել կըբիմօշանների և այլ փոխադրականների հողերը Չերնօգօրիայի սահմաններում:

—Վեմանական լրագիրները հաղորդում են, որ լուրերը այն բանի մասին, թէ Հայդելդ կրկին գեսպան կը նշանակվի կ. Պօլսում, բոլորովին հիմը չունեն: Ընդհակառակը, կարելի է հաստատապէս ասել, որ նա առաջնորդուց յետոյ, վերջնականապէս կը հրաժարվի արտաքին գործերի մինիստրութիւնը կառավարելու, որպէս իշխան Բիսմարկի օգնական:

—«Temps» լրագիրը Թիֆլիսից հաղորդում է, որ Լոռը, որ իբր թէ անգլիական կառավարութիւնը դիտաւորութիւն ունի կօնցրէս առաջարկել Բօաղնայի և Հէրցէգովինայի գործերը քննելու համար, հիմը չունի բոլորովին:

—Պրուսական ամբողջական կրթութեան դատարձութիւնը մի չատ հետաքրքիր հաշիւ հրատարակեց, որից երևում է, թէ Պրուսիայում պատրաստվում են տասը ուսումնարաններ հիմնել սրանդիրների համար: Գիտնվում է, որ նրանցում հիմնված է բրօնդագործութեան ուսումնարանը և նմանապէս բամբակագործութեան ուսումնարանը: Պէրլինում բացական ընդարձակվելացան, չնորհիւ այդ ուսումնարաններին տրված սուբսիդիաներին: Մագդեբուրգում հիմնվելացաւ հրատարութեան սրճատան ստորերը ուսումնարան, իսկ Գրէյֆսվալդեում հիմնվելոյն կառագործութեան ուսումնարան: Գիտնվում է մի ուսումնարան կայ 150 աշակերտներով զամբիղներ հիւսելու համար: Այդպիսով Պրուսիայում կամաց կամաց բազմանում են տեխնիկական ուսումնարանները, և չատով բոլոր տեղաւորների համար էլ կը բացվին այդ տեսակ ուսումնարաններ:

—Կայիրէից «Բէյտերի» ընկերութիւնը հեռագրում են մարտի 12-ից հետևեալը: Ֆրանսիական ֆինանսական գլխաւոր վերահսկող պր-Բլինէօր երեկոյեան 6 ժամին հեռագիր տացաւ Ֆրէյսինէից, որ հաղորդում էր, թէ Ֆրանսիական կառավարութիւնը ընդունեց պր-Բլինէօրի խնդիրքը հրաժարականի մասին: Այդ խնդիրքը դեռ փետրվարի 6-ին տրվեցաւ Ֆրանսիական կառավարութեանը, բայց Ֆրէյսինէ սկզբից հրաժարվեցաւ նրան ընդունել և խնդրեց պր-Բլինէօրից Քեալ էր պաշտօնի մէջ: Որովհետև պր-Բլինէօր երկրորդ անգամ խնդիրք չը տուեց հրաժարականի մասին, ուստի արտաքին գործերի մինիստրի վերոյիշեալ հեռագիրը նրան պէտք է զարմացնէր: Այսուհետև դիպլօմատիական չրջանները այնպէս են բացատրում այդ կարգադրութիւնը, որ Ֆրանսիական կառավարութիւնը հրաժարվում է այն ևս անդրդուելի քաղաքականութիւնից, որին վերջին ժամանակներում հետևում էր պր-Բլինէօր: Մարտի 15-ին պր-Բլինէօր Ալէքսանդրիայից Ֆրանսիա կուղեորվի:

—Կայիրէից մարտի 13-ից հաղորդում են, որ Արաբի-բէյին և գինուորական կուսակցութեան նշանաւոր վեց անդամներին չնորհված է գիներալի աստիճան և փաշայի տիտղոս: Գինուորական կուսակցութեան 20 անդամներ գնդապետի աստիճան են ստացել:

—Բէլգրադից հեռագրում են, որ սերբական սկուպչինայի արտասական պատգամաւորները թուով 51 մարդ հրաժարվեցան պատգամաւոր լինելուց: Կառավարութիւնը նոր ընտրութիւններ նշանակեց: Սկուպչինայի նիստերը դադարեցրած են մինչև նրա անդամների թիւ լրացնելը:

—Յունիսից մարտի 12-ից հեռագրում են, որ ռուսինայի ապստամբների մի խումբ, թուով 1000 մարդ յարձակվեցան Ֆրանսիական հետախուզող զօրաբաժնի վրա: Ֆրանսիական գինուորները չեն մղելցին ապստամբներին, որոնք ռաս մարդ կորցրին: Ֆրանսիական չարժական զօրաբաժինները շրջում են երկրի մէջ:

—«Journal de Débats» լրագիրը հաղորդում է, որ Ֆրէյսինէի միներսութեան գոյութիւնը կապ ունի Լէօն Սէյի մշակած ֆինանսական նախագծի հետ: Եթէ պարլամենտական մանաժողովը կը մերժէ այդ նախագիծը, միներսութիւնը կը սպասէ, որ նա քննվի պատգամաւորների ժողովի մէջ: Այս դէպքում միայն կորոշվի միներսութեան դատիքիան:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Իկիյոկի նահանգը մարտի 10-ին յանձնված է չինացիներին: Բնակիչները Թոկլ է տուած Ռուսաստան գաղթել: Մի տարի ժամանակ միջոց է տուած: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ 1881 թուականին երկաթուղիները չը վճարելին պետական գանձարանին 22 միլիոն պարտքը, բայց այդ գանձարանը վճարից ազատվելու ընդունեցին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 մարտի: Գինեթոյ Ակօթօվի նախագահութեամբ մի մանաժողով է նշանակվելու Թուրքեստանի վարչական կազմակերպութեան հարցը քննելու համար: Կազանի գեմստվօն միջնորդում է Թոյլատրել ժողովրդական դատախօսութիւններ գիւղերի մէջ: Հարց է բարձրացված վանքերին տուած ռոճիկները դադարեցնելու մասին: Կառավարութիւնը համակրութեամբ է վերաբերվում արհեստների շարժական ուսուցութեանը գիւղերի մէջ: Մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ իր Ամուսնի հետ արտասահման ուղևորվեցաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մարտի: „Новости“ լրագիրը հաղորդում է. փոխանակ կատանինի մաքսային երկու շրջանների կազմակերպված է հիմնել չորս. Զիտնօմօրեան՝ Բուրգասից մինչև Լիման գիւղը, Թիւրքաց սահմանների մօտ՝ կարսկիից մինչև Ցանգուրան, Երևանեան՝ մինչև Ախալցա և Բագդի շրջանը: Ամերիկական բանասանդ Լօնգֆելլօ վախճանվեցաւ: „Правит. Вѣстн.“ լրագիրը հերքում է լուրերը պետական բանկի վերակազմութեան և կառավարութեան գիտաւորութեան մասին օժանդակութիւն տալ Ալէքսանդրեան լիցէի պատասխանական դասատուներին: Բ. Դուռը, հիմնվելով փարիզի գաշնագրի վրա, հրաժարվում է Нижній Новгородъ ռուսաց շրջանին թոյլ տալ անցնել գինուորական դրօշակի տակ Սախալին կղզին, ուր նա տանում է աքսորեալներին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 մարտի: Պետական բանկի 5% առմնակը առաջին չրջանի արժէ 96 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 12 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 25 կ., հինգերորդ 90 ր. 25 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմնակը արժէ 216 ր. 50½ կ., երկրորդ 211 ր. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան առմնակը արժէ 90 ր. 37 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր. 25 կ., ամէն 8 ր. 17 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,03 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 205 մարկ, փարիզի վրա 253 ֆրանկ 75 սանտիմ: Բօրսայի արտադրութիւնը հանգիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋՄԻՒՌՆԻԱՅԻ

„ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ“ ամսագրին բաժանորդագրվում են Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում։ Տարեկան գինը, 12 տետրակի 10 րուբլ է։ Հասցէն՝ Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова. 6—10

Ա. Ս. ԾՈՒՐԻՆՈՎԻ և ընկերութեան դեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. **ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ** („КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ“), որի կանոնադրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՒՆ հաստատուած է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին։ Ընկերութեան պահեստը գտնվում է Թիֆլիսում, Թանգարանի դէմ։ 3—7 (եր. և ուր.)

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ յաւ ԾԻԼԻՈՆԻ սիրողներ և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԻԼԻՈՆ ԵՒ ՊԱԳԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակներ Ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունտը 3 րուբլուց մինչև 10 րուբլ, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 րուբլուց, մինչև 3 րուբլ։

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալկերէում, Վլոցցովի փողոց, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ 6—25

ՎԻԵՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՐՈՒԲԼ

եփ. վաճառքանոցի զեղչում

4—20

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՁԱՒՏԻԿ գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բիջամներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., գրաստ, մահուդ, արխո, արբիչներ և ալբօմներ կէս գնով։ Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պերլօվայա կրուպա 9 կ., պանիր չեռաներ 70 կ., նշշատ կօլմանի 18 կ. ֆունտը, լուծողական ձևերի սիրուպներ 2 կ., լուացքի փոշի 5 կ։ **ՆՈՐՈՒԹԻՒՆ**։ Մեղրամոմ և արծաթեայ մոմեր 35 և 42 կ. ֆունտը։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, պատնէշ երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 րուբլուց։ **ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ**։ 32—36

ԱՆԱՆՈՎԻ և ԿԱՑԱԼՈՎԻ պապիրոսների թղթի գլբոյկների գործարանը ԲՈՍՏՈՂ (Դօնի վրա) քաղաքում հարկաւոր է համարում պ. պ. գործածողների և գնողների ուշադրութիւնը դարձնել ֆրանսիական Abadie թղթի վրա մեր առտրագրութեամբ, Abadie գլբոյկը, 300 թերթերով, արժէ 10 կ., իսկ 150 թերթերով արժէ 5 կօպէկ։ Գործածողները առանց որ և է դժուարութեան կը համոզվեն, որ սա հէնց այն թուղթն է, որը Кронъ-ի առտրագրութեամբ միշտ ծախվում էր և այժմ էս ծախվում է շատ թանգ, այն է 300 թերթանոց տետրակը ծախվում է 15 կօպ., իսկ 150 թերթանոցը—7 կօպէկով։ Բացի ուրիշ լաւ թղթերի մեր առտրագրութեամբ ունենք և ամենալաւ ՄԱԻՍ (240 թերթը—5 կօպ.), որը կարելի է առանձնապէս բոլոր ծխախոտավաճառների մագազիններում։ Մենք հակերով ենք ծախում (գոնէ ոչ պակաս հինգ կաթօրկաներից)։ 8—10

ԾԱԽՎՈՒՄ Է վերնէ-Մօսկովսկայա փողոցի վրա ԵՐԿՑԱՐԿԱՆԻ ՏՈՒՆ № 13, 22 և 24 **ՊՐԻԿԱԶԻ** 5,000 ր. պարտքով։ Տունը անկիւնի վրա է երկու փողոցների կողմը, յարմար է առևտրական հիմնարկութիւնների համար։ Գնի մասին կարելի է առնկանալ նոյն տեղը ՏԱՆ ՏԻՐՈՋԻՑ։ 2—4

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՄՐԱՆՈՑԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ
ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ
Աւրծրաւնու գալկերէում, № 144 տան Վլոցկովի, նախկին Լատիշևի մագազինում
Ծանեալ Փարրիկայի ամեն տեսակ մեծ և մանր ապրանքները։
ՀԱՑԱԼՔՆԵՐԸ և ՇՐՋԱՆԿՆԵՐԸ։
2—60

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Գօրովինսկի պրօսպեկտի վրա, տան Ճարտարապետ Բէյօր։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

Լոյս տեսաւ Գ. ՍՄԲԱՏԵԱՆԻ հրատարակութեամբ Հայերէն ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՑՐՈՒԲԵՆ-ԼՕՏՈՆ, վաճառվում „Կենտրօնական“ Գրավաճառանոցում։ Գինն է 1 ռ. 20 կ., Ճանապարհի ծախքով 1 ռ. 60 կ։ Օտարաքաղաքացիք թող բարեհաճեն գիմել ուղղակի հրատարակչին հետևեալ հասցէով. Въ Тифлисъ, Центральную Книжную Торговлю Гр. Сумбатову. 1—5.

„ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ“

Ա.յս ֆիրմայով բանալով երևանում գրավաճառանոց՝ կցելով նորա հետ ուսումնարանական, գիւանական, նկարչական և կապմարարական իրեղէնների խանութ, յանձնեմ առնում տալ միշտ յիշեալ ապրանքներից և նաև նորա շրջակայ քաղաքների և գիւղերի գիւանատներին և ուսումնարաններին շատ ձեռնտու գներով և պայմաններով։

Ընդունում եմ տպագրել տալու բլանկներ, ծանուցագրեր, յայտարարութիւններ, այցեառնելու, բրօշիւրներ, նաև գրքեր, ամենայն յանձնարարութիւններ յանձն վարձով։

Ինձ մօտ է գտնվում իմ հրատարակած „Ընտրեալ բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի պահեստը։

Իմ հասցէն. г. Эривань. П. Симеонянцу, магазинъ. „Другъ-Дѣтей“.



Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՕՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կօպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ։

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻԿԼ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. տանը և վրձին ղլխապարի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։ 92—100

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ԵՂԲԱՐՑ ԾՈՎԵԱՆԵԱՆՑԻ ԵԻ ԸՆԿ.

ՍԻՕՆԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԱՆԱՆՈՎԻ ՏԱՆԸ

Գնում և վաճառում է ամէն տեսակ **ՏՈԿՈՍԱԲԵՐ** թղթեր, ռակի և արծաթի դրամ։

Փոխ է տալիս դրամ, տոկոսաբեր թղթերի **ԳՐԱՒԱԿԱՆՆԵՐՈՎ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ** է անում Մօսկվա, Օդէսսա և Պետերբուրգում։

ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ է ներքին 5% փոխառութեան տոմսակներ 50 կոպէկով.

ԸՆԴՈՒՆՈՒՄ է դրամ ըստ պահանջման 5%
„ „ „ ընթացիկ հաշուով 5%
„ „ „ 6 ամիս ժամանակաւ 6%
„ „ „ 12 „ „ 7%

Օտար քաղաքացւոց յանձնարարութիւնները կատարում են անմիջապէս և ճշդութեամբ։ 8—10 (1)

Մի քաշ այս տողերս։ Միջի փողոց, կաթոլիկեական փողոցի անկիւն № 13.

Ամէն էժան, քան թէ ուրիշ տեղ ծախում են. վիէննայի մեբել, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրևատներ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուրդուկներ ճանապարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտը., կոլածների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտիվալնիկներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրայաններ երկու լուլաներ 6—32 ր., ռեվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէլոլվէրի, սիգար ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզէ պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԼԻ (չայ) ԵԿ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) գուլճուկ (пухъ), պաղնռաններ սամովարի և չայու, գանակ չանդալ գանագան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. գուժինը. գլչակոմներ 1 ր. 80 կ.—3—60 կ. գանակ ջիբի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատոր, կոլածների 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. մա կարելու մաշինայ. Անգլիական ութեններ, Բրիտանական չայնիկներ, կաֆէնիներ ամենայն տեսակ, Ջազացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամայ կաթօրկեն 18 կ., վաքս ֆրանսիայի յակոյ, թուղթ փշոտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գլչակոմ, քարեաախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանկի գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուռմիչկէք 45 կ.—5 ր., շամպանիներ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պոլսասպշկաններ վարշավու, ՈՒԵՉԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանոնց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսաիկներ, գոնաիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիլմայու ոսկով, գուսապկըշովի և փայտէ, շշտականներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարասի համար. չուլքի թէլ (бумага) մետաղի կօճի և շալէ (гарусъ) ֆէշաակէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գողանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտաւէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտաւէտ պատաշկներ կիվերի ԼԱՔՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և դիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտապէս գտնվում են ՄԻՔԱՑԵԼ ՏԻՐ ՆԻԿՈԳՈՍՅԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են գիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.
12—180

Միջի փողոց, կաթոլիկեական փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Марта 1882 года.
Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.

Fonds A.R.A.M

№ 46 Մարտի 17 (29) 1882 Մարտի 17 (29) № 46

ՏԱՄՆԱՄՅԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի կէս տարինը 6 րուբլի։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում պրկում են միմիայն խմբագրատան մէջ։

Յասցեագրագրիք պիտի ուղղել Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Բաժանորդագրութիւն ընդունվում է ամէն ժամանակ։

Յայտարարութիւնների համար վճարում են խմբագրութիւնից բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Մանկական գրքեր մեզանում։ Նկրքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիֆլիս։ Բօլգարիա։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Հայոց մանկական պարտէզ Թիֆլիսում։

ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔԵՐ ՄԵԶՆՈՒՄ

—

Որ ընթերցասիրութիւնը օրից օր աւելի ու աւելի տարածվում է հայերի, մանաւանդ մատաղ սերնդի՝ մանուկների մէջ, անհերքելի է. հէնց այդ պատճառով տարուց տարի աւելի և աւելի գրքեր են տպվում, մանաւանդ մանկական. բայի այդ համաչափ ամէն օր լրագիրներում հանդիպում ենք մանկական գրքերի նորանոր յայտարարութեանց։

Ա՛յս բոլորը ցոյց է տալիս թէ մեր հայերի մէջ, մանաւանդրաւական մանկական գրքերի պրքան կարօտութիւն է զգացվում։ Մի կողմ թողնելով թէ մեր մանուկ սերնդին պրքան բաւարարութիւն է տրվում, մենք աւելորդ չենք համարում խօսել մեր մինչև այժմ հրատարակված և հրատարակվելիք մանկական գրքերի ուղղութեան մասին։ Ցանկանք թէ որ տասնեան նրանք համապատասխանում են իրանց կոչման և ուղղութեան։ Եթէ քրքրելու լինենք մեր մանկական ամբողջ գրականութիւնը, բացի թարգմանական հատ ու կտոր վէպերից, պատմութիւններից, ոչինչ չենք գտնի (բացառութիւն կազմում են մի երկու գիրք), մի կողմ թողնելով նաև այդ գրքերի անճաշակ ընտրութիւնները նրբերի կողմից, որոնք շատ քիչ բացառութեամբ, ոչինչ չօշափելի օգուտ չեն կարող բերել մանուկներին, մի կողմ թողնելով այն ոյլանդակ լեզուն, որ երբէք հայերէն չէ կարող համարվել, այլ կատարեալ մի քաօս է լի օտար գարձվածներով, մի լրբութիւնա, որ սատուր, գողտուր լեզու սովորելու, աւելի էլ շփոթվում ու մոլորվում է, գառնանք բուն նրբերին։ Մանկական գրքերը թարգմանական լինելով, բնականաբար ներկայացնում են օտար, հայ մանկան բոլորովին անծանօթ, խորթ կեանք, որ ոչինչ աանմիջական կապ չունի մեր կեանքի հետ, բոլորովին հեռու է հայ մանկան սրտից և մտքից։ Հարցնում ենք. ի՞նչ օգուտ կարող են տալ Խրիատոփոր Շմիդտի գրուածները, որոնք շատ քիչ արժանաւորութիւններ ունեն մանաւանդ հայ մանկան համար։ Ա՛յս առելով մենք չենք ուզում ասել թէ թարգմանական գրքեր չը պէտք է լինեն մանկական գրականութեան մէջ, ա՛չ թող լինեն, բայց օրինաւոր, փոքր ի շատէ կապ ունեցող մեր կեանքի, նրանում կրկնվող երևոյթների հետ, որոնք յիրաւի կարողանան հասնել իրանց նպատակին, կրթին մանկան բարոյապէս, մտաւորապէս շօշափելով և այն հարցերը, որոնք մեզ հայերիս համար էլ ընդհանուր են, շօշափում են մեր կացութիւնը։

Բայց մանկական գրքերի մէջ, ինչպէս վերը յիշեցինք, չը կայ ոչ մի ինքնուրոյն գրուածք, որ մեր սեփական կեանքից առնված լինէր. թէ ռուսահայոց և թէ տաճկահայոց մէջ մինչև օրս չը գտա եկաւ մի հեղինակ, մի ինքնուրոյն մանկական վէպեր գրող, որ նրբի առնէր մեր ազգային ժողովրդական կեանքից, որ կարծածից աւելի նպատակայարմար լիներ մեր նրբի համար գրող գրիչներին։

Սակայն դժբաղդութիւնը այն է, որ ինքնուրոյն գրող չունենալուց զատ, մենք չունենք և մանկական գրականութեամբ պարապող մի այնպիսի թարգմանիչ, որ այդ օտար, խորթ մանկական գրուածները կարողանար փոփոխելով յարմարեցնել, մօտեցնել, կապել մեր կեանքի հետ։ Ա՛յդ երկուսից ոչ մէկն էլ չը կայ մեզանում, որովհետև մեզանում մանկական գրականութեամբ պարապող փորր ի շատէ կրթված մարդ չը կայ. մեր մանկական գրականութեամբ պարապողները նոյն իսկ մանուկները՝ աշակերտները են, որոնք ոչինչ հիմնաւոր տեղեկութիւններ չունեն անգամ հայոց լեզուի տարրական մասի վրա, այլ երևակայական գաղափարներից ու թեթևամտութիւնից զրկված, առանց ընտրութեան վերցնում են այս կամ այն գիրքը թարգմանում, միայն նրա համար, որ իրանց անունը պէտք է գրքի վրա տպված լինի....

Եւ այսպիսի գրքեր, որոնց նրբի անպատասխանութեան հետ միասում է լեզուի սյլանդակութիւնը, իսկապէս կազմում են մեր մանկական գրականութեան սուսուր մասը... Եւ որ գլխաւորն է, մանուկը՝ նոր սերունդը այդ սյլանդակութիւններից պէտք է իր մայրենի լեզուն սովորի, պէտք է կրթվի....

Մեր կարծիքով ժամանակ է հոգալ այս մասին. այսպէս շարունակվելով ո՛ւր կը հասնի.... Մանկական գրքի նրբը պէտք է լինի բուն ժողովրդական-ազգային կեանքից, որ մանուկը կարողանայ ծանօթանալ իր ազգային կեանքի, սովորութիւնների, իր ազգային սեփականութիւնների հետ։ Մանկական գրքերի նրբը պէտք է առնված լինի մանուանդ Հայաստանի կեանքից, որ մանաւանդ այժմ շատ ատատ նրբել ունի։ Մանկական գրքերի գլխաւոր նպատակը պէտք է լինի ծանօթացնել, ներկայացնել մանկան իր կեանքի, իր հայրենիքի ներկան և փառաւոր անցեալը, մեր մանկական գրքերը մանկան պէտք է սովորեցնեն Հայաստանի աշխարհագրութիւնը, պէտք է բնաեւլացնեն նրան Հայաստանի կեանքի, դիրքի, կլիմայի, արդիւնաբերութեան, ժողովրդի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Անա արդէն երկու տարի է Թիֆլիսում տիկին Բարայեանի աշակցութեամբ կազմվել է կանանց խումբը, որ կրում է «Ֆրէօբէլեան» անունը։

Այդ խմբի գլխաւոր նպատակը եղել է պատրաստել հմուտ վարժուհիներ և ուսուցչուհիներ մեր հայոց ուսումնարանների համար. մի գնդեղիկ և հանկարծ նպատակ։ Բայց թէ որքան է հասել այդ խումբը իր նպատակին, այդ ցոյց կը տայ ամենամօտիկ ապագան։ Ինչ կը վերաբերի տիկին Բարայեանին, նա արդէն փորձով ապացուցեց իր հմուտութիւնը մանկավարժութեան մէջ։ Թէև մենք մինչև այժմ տեսի չենք ունեցել մօտիկ ծանօթանալու նրա ուսուցման մանկական պարտէզի հետ, բայց ով գիտէ, մի անգամ ստիպվել է նրա այդ պարտէզը, էլ չէ խմանում, ինչպէս գոյն։ Այդ մանկական պարտէզում վարժվում էին և վարժվում են Ֆրէօբէլեան խմբի անդամները, որոնց մեծ մասը վճռել է իրան նուիրել մանկավարժական գործին, որովհետև այդ հիմնարկութիւնը կատարում է մի մեծ կանանց ուսուցչական ամենապիսի դերը։

Այդ Ֆրէօբէլեան խումբը, որի անդամների թիւը այժմ հինգն երեսունն է հասնում, իր նպատակ է դրել, ասում ենք, որքան կարելի է նպատակել մանկավարժական գործի զարգացման՝ մի կողմից, ինչպէս վերև յիշեցինք, հմուտ վարժուհիներ և ուսուցչուհիներ պատրաստելով, իսկ միւս կողմից հայոց մանկական պարտէզներ բանալով։

Անցեալ օրը, ապրիլ 14-ին, մենք ներկայ գտնվեցանք այդ խմբի առաջին մանկական պարտէզի բացման հանդիսին։ Սուրբ պատարագից յետոյ Ջրկիւնեանց եկեղեցու գաւիթում, այլ խօսքերով քաղաքի մի այդպիսի մասում, ուր հայութեան նշոյլ անգամ չէ երևում, բացի հայոց եկեղեցիներից և հայոց գերեզմանատունից, եկեղեցու գաւիթում, ասում ենք մենք, կատարած չնութեան մէջ, երկու փղերեկի, առողջապահական պայմաններին լիովին համապատասխանող, բոլորովին նորատած սենեակի մէջ հաւաքված էր բաւականին մեծ բազմութիւն, որի մէջ գլխաւոր տեղը բռնում էին այն երեսուն ծաղիկ-մանուկները, որոնք ուսումնարանի շատ հատարակ, բայց գրաւիչ ձեւով հագած, շարած կանգնած էին ամբիոնի ձախ կողմը։ Աջ փոքրիկ երևիսանների կողքին կանգնած էին Ֆրէօբէլեան խմբի բոլոր անդամները։

Ա՛յսպիսի ուրախ չեմ հանդիպում նկատել, որ պաշտօնապէս հանդիսաւոր բացվելուց մի շաբաթ առաջ է բացվել այդ պարտէզը և արդէն մի շաբաթ է, ինչ կանոնաւոր ուսում սկսվել է նրա մէջ։ Արդէն պատրաստ են երեխաների համար գեղեցիկ նստարանները, և պատերի վրա կախ տրած են մանուկների դրաղմունքների ու խաղալիքների համար պատկերը, այնպէս որ ամէն մի երեխայ, ինչպէս այդ ընդունված է ամէն մի բարեկարգված մանկական պարտիզի մէջ, ունի իր առանձին արկղը իր զանազան պարագաները պահելու. այդ արկղների վերևից դրաված էին երեխաների ձեռքով պատրաստած ախտռներ սխտից ու ծաղիկից։

Կրթական ծէսը կատարելուց և ուսումնարանը օրհնելուց յետո հայր Մամբրէ վարդապետը բարձրացաւ ամբիոնի վրա։ Գնդատարմա հայր սարբը, յայտնելով իր սրտի խորին ուրախութիւնը հայ կանանց գործունէութեան մասին, աշխատանց բացատրել մանուկների կրթութեան նշանակութիւնը իր ասելուստութեան հիմնական միտքը ընդունելով այն՝ մարդը կոչվում է իր մարդկային նշանակութիւնը, եթէ նա կրթված, դաստիարակված չէ։ Հայր սարբը յիշեց պատմական այն դէպքը թէ, երբ Ծեղից երեսի Ալէքսանդր Մակեդոնացին, նրա հայր Փիլիպոսը խնդրեն և եթ նամակ գրեց երեսի փիլիսոփայ Արիստոտէլին, հրաւիրելով նրան դաստիարակել իր որդուն։ Ա՛յս թէ ինչպէս էր նայում թագաւորը կրթութեան վրա։ Արիստոտէլին, բայց ես այնչափ ուրախ չեմ զաւակին, որքան նայում եմ, որ նա ունի հայր, որ նայում է նրա կրթութեան վրա։ Ես ինձ երջանիկ եմ համարում, որ ներկայ եղայ այդ հանդիսին, որ տեսայ այդ ուրախալի երևոյթը։

Իր խօսքը հայր վարդապետը վերջացրեց, հրաւիրելով հաստատութեանը հետևել յարգելի տիկիններին և օրիորդներին, որոնք չեն խնայել և չեն խնայում իրանց թէ բարոյական, թէ մատուր և թէ նիւթական այժմեան ազգային գործը—հայոց եկեղեցիների, փորձիկ, նրբեխաչէս բարոյապէս երեխաների դաստիարակութեան համար։

Հայր սարբից յետոյ խօսեց Թեմական վերատեսուչ պ. Գ. Բարխուդարեանը։ Նրա խօսքերը կարճ, պարզ և ազդու էին։ Նա յիշեց այն, որ մի ժամանակ, երբ հայերի կրօնին—քրիստոնէութեանը վտանգ էր սպառնում, հայը ոչինչ չը խնայեց իր այդ սրբութիւնը պաշտպանելու. նա իր արիւնով պաշտպանեց իր կրօնը, իր եկեղեցին։ Հայը աշխատեց ամէն տեղ հաստատ պահել իր կրօնը. նա այդ նպատակով սկսեց ամէն տեղ կառուցանել վանքեր, եկեղեցիներ. տպագրեց խօսքերքը, տեղ պատարագի առնելարանը, այն տեղերն են, որտեղով ծածկված է Հայաստանը։ Իսկ այժմ, չարունակեց նա, ժամանակները փոխվել են, փոխվել են նոյն իսկ պահանջները. այժմ յայտնվել է պահանջ մանկավարժութեան գործունեութեան մասին, այժմ մենք տեսնում ենք, որ ամէն տեղ բացվում են ուսումնարաններ, որ պէտք է դաստիարակվին հայ մանուկները։ Ա՛յս ձեր առաջ կանգնած են այդ փորձիկ երեխաները, այդ երեխաներին նանիկ են առել օտար լեզուով, դրկել, փայփայել են օտար լեզուով, այդ երեխաներից համարեա ոչ մինը չէ խնամում մի խօսք անգամ իր մայրենի լեզուով և դրանք այսուհետև, այս հիմնարկութեան մէջ, պէտք է ուսանան այն, ինչ չէ ուսել կամ չէ կարողացել ուսել ընտանիքը, դիրքատուները, այստեղ այդ մանուկները պէտք է դաստիարակվին, այստեղ պէտք է ստանան իրանց մայրենի լեզուն։

Պ. Թեմական վերատեսուչը իր խօսքը վերջացրեց նորէնէս դիմելով հաստատութեանը—նրբեխաչէս օժանդակել նորատուց ուսումնարանին, որը պէտք է հոգայ մանուկների ոչ միայն դասական պատրաստների համար, այլ և հագուստի ու նախաճաշիկի։

Դրա համար առաջարկվեց հաստատութեանը մի մատեան, որի մէջ գրվելու են թէ ուսումնարանի բարերարները, որոնք վճարելու են տարեկան 10 րուբլի և թէ միանուագ նուիրատուութիւնները։

Պ. Թեմական վերատեսչի առնելարանութենից յետոյ աշակերտները ու աշակերտուհիները բաժանվեցան յաջող երգերով. «Ով երկիրք և երկրի Արարիչ և այլն» երգը և դուրս եկան դահլիճից։

Աչքի տակ էր բոլորը այդ տեսարանից։ Հայ կինը ամենայն հանդիսաւորութեամբ է ամբիոնի վրա և խօսում է այնպիսի մի նրբի վրա, որպիսին մանուկների դաստիարակութիւնն է։ Մենք ակամայ յիշեցինք օր. Գէրբօվային, որ մի քանի տարի առաջ Կարժոկի դահլիճում հրապարակական դասախօսութիւններ կարդայ ուսանց լեզուի դասատուհիան նպատակի մասին։ Այն ժամանակ մենք ամենայն զարմանում էինք մի ա ս ս

Fonds A.R.A.M

հետ։ Հայ մանուկը այդ դրքերից պիտք է ճանաչէ վանեցուն, մշեցուն, Ծանօթանայ նրանց ցաւերի հետ դէռ մանկական տարիքում, այն ժամանակ հասատատ կարելի է ասել, որ մենք ապագայում կունենանք հայրենասէր մայրեր և հայրեր։

Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուս լրագիրները հաղորդում են որ Եւրևէի ռուս թատերապրող Օտարօվսկուն բարձրագոյն իշխանութիւները թոյլ է տուել կառուցանել Մօսկվայում մի ժողովրդական ռուսաց մանուսար թատրոն։

—

Այս օրերս վախճանվել է Մօսկվայի հանգանատանի բէյլոտար Բարշեվ։

—

«Մշակի» № 39 մէջ Դարաքլիսից հաղորդած լուրը, ինչպէս մեզ պատմ են, չափազանցրած է։ Նա վիրաւորից հատատակութիւնը։ «Այս բոզէն, պատմ է մեր մշտական թղթակիցը, ապացուցված է ատելութեան հետևանքով, որ յիշատակութեան մասին չափազանցրած է. դիւղիս 200 տուն բոլորովին ազատ են որ և է հիւանդութիւնից, իսկ նամակագիրը հաւատացնում էր թէ համարեա տուն չը կայ, ուր մի հիւանդ չը գտնվի։»

Լ.

Նոյն տեղից մեզ պատմ են։ «Այստեղ ցրտերը դեռ չարունակվում են։ Ձանքերը դեռ չեն սկսվել։ կենսական պիտոյքները էժանանում են. ալիւրի պուդը արժէ 85 կոպէկ, գարին 35 կոպէկ։ Բայց առուտուրը չատ ընկած է։»

—

«Моск. Телеграфъ» լրագրին հաղորդում են, որ Ս. Պետերբուրգ ապրող մահմետականները ներքին գործերի մինիստրութեանը դիմեցին մեկ խնդիրքով, որի մէջ խոստանում են հնդպատի իրանց հաւատակիցների մէջ ժողովարարութիւն անելու Ս. Պետերբուրգում մզկիթ կառուցանելու համար։

—

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՒՐՔԻԱ

—

„Times“ լրագրի կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է հետևեալը։ Ռուսաստանին հասանելի պատերազմական ծախսերի վճարման հարցը ապրէն վերջացած էր համարվում, երբ յանկարծ մի նոր և անսպասելի արգելք առաջացաւ։ Այդ հարցի մասին բանակցութիւնները, որոնք կատարվում էին առանց Բ. Դրան մասնակցութեան անմիջապէս սուլթանի քարտուղար Թահիր-բէյի և ռուսաց դեսպանի մէջ, համաձայնութեան հասցրին ամենադժուար կէտի վերաբերութեամբ պատերազմական ծախսերի հատուցման կանոնաւորութիւնը ապահովելու մասին։ Պատերազմական ծախսերը պէտք է ապահովվէին Թիւրքիայի մի քանի նկամունքներով, որոնց վրա առաջ կառավարութիւնը կամենում էր հսկողութիւն ունենալ։ Թահիր-բէյ և պ. Նօվիկով համաձայնեցին, որ Թիւրքաց բանկը առանց ռուսաց կառավարութեան հատատամատարի հսկողութեան կը հաւաքէ յիշեալ եկամուտները և նրանցից գոյացած դումարները կուղարկէ ռուսաց պետական բանկը։ Այդ համաձայնութեան նախագիծը ուղարկվեցաւ Բ. Դրան և ընդհանրապէս համարվում էր թէ առաջին միտիտրի և թէ նրա մի քանի ընկերների կողմից։ Այդ առիթով անհամաձայնութիւններ ծագեցան Բ. Դրան և սուլթանի պալատի մէջ, այսինքն Սայիտ-փաշայի և Թահիր-բէյի մէջ և զանազան ինտրիգներ առաջ բերին, որոնք քօղարկված են պատերազմական ծախսերի հատուցման հարցով, մինչդեռ բոլորովին այլ նպատակներ ունէին։ Այսպէս թէ այնպէս, հարցի վերջնական վճիռը սուլթանից է կախված, բայց յայտնի չէ, երբ սա կորոշէ։ Եթէ սուլթանը պաշտպանի առաջին միտիտրին, պէտք է նորից բանակցութիւններ սկսել ռուսաց դեսպանի հետ կայացրած համաձայնութեան մասին։

—

ԲՈԼԳԱՐԻԱ

—

Կ. Պօլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են մարտի 7-ից հետևեալը։ Նորին լուսն Թիւրքաց կառավարութեան մօտ Բոլգարիայի դիպլոմատիական գործակատար նշանակված Ցանօվ արդէն խօսակցութիւն ունեցաւ Ասխմ-փաշայի հետ, որին ճանաչում էր այն ժամանակից, երբ նա Բոլգարիայի գլխաւորնահանգապետ էր, իսկ Ցանօվ Թիւրքաց ծառայութեան մէջ էր Որմհետև Ցանօվ դեռ ևս իր կառավարութիւնից հրահանգներ չէր առացել այդ պատճառով Ասխմ-փաշա և նա թիւրքիայի ու Բոլգարիայի յարաբերութիւները քննութեան ենթարկեցին իրրև մասնաւոր մարդիկ։ Թիւրքաց կառավարութիւնը առաջարկեց բանակցութիւնների այն հիմունքները, որոնցով Բոլգարիան միջադիպին հարցերի վերաբերութեամբ պէտք է դիմէ բացատրութիւն արտաքին գործերի մինիստրութեանը, իսկ միւս գործերի վերաբերութեամբ դանազան մինիստրներին։ Պ. Ցանօվ, չը նայելով շատ քաղաքագէտների խորհուրդին, անկարելի համարեց ընդունել այդ հիմունքները։ Այդ քաղաքագէտները խորհուրդ էին տալիս Ցանօվին ընդունել Բ. Դրան առաջարկութիւնը և օրինակ էին բերում Եգիպտոսը, որ նոյնպիսի յարաբերութիւններ ունի Թիւրքաց կառավարութեան հետ։ Ցանօվի կարծիքով Բոլգարիայի քաղաքական դրութիւնը շատ է զանազանվում Եգիպտոսի դրութիւնից։ Բոլգարիայի իշխանը սուլթանի ֆիրմանով չէ նշանակվում, ուստի չի էլ կարող նրա հրամանով փոխվել ինչպէս այդ պատահից Եգիպտոսի խեդիվ Իսմայիլ-փաշայի հետ։ Սուլթանը կարող էր Եգիպտոսի գահաժառանգութեան կարգը փոփոխել մեծացնել առանձին հարկի քանակութիւներ, բացի այդ պատերազմի ժամանակ Եգիպտոսը պարտաւոր է սուլթանին գորքեր տալ և առհասարակ ենթարկված է Թիւրքաց օրէնքներին, մինչդեռ Բոլգարիան այդ բոլորից ազատ է և այդ պատճառով բոլգարական կառավարութիւնը իրաւունք չունի ընդունել առաջարկված միջոցը։ Այնու ամենայնիւ Ցանօվ կարծում է, որ Բոլգարիան այդ հարցի վերաբերութեամբ դիմումներ կանէր, եթէ Բ. Դուռը այդքան խստութեամբ չը յայտներ իր տեսակէտը։ Առհասարակ Թիւրքաց կառավարութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում Բոլգարիայի վրա, յուսալով կարողանալ այդ ազատ նահանգը նորից իր տիրապետութեան տակ բերել։ Ասխմ-փաշա ասում էր Ցանօվին, որ Թիւրքիան ամենից առաջ ուզում է ապահովել իր սահմանները, որոնց մէջ բոլորովին այլ ազգաբնակութիւն կայ։ Ասխմ-փաշա ասում էր, որ Թիւրքիան ուզում է ունենալ Բոլգարիայում այնպիսի կառավարութիւն, որ կարողանայ ամուր կապեր հաստատել Բոլգարիայի և Թիւրքիայի մահմետականների միջև։ Ասխմ-փաշա ասում էր, որ Թիւրքիան ուզում է ունենալ Բոլգարիայում այնպիսի կառավարութիւն, որ կարողանայ ամուր կապեր հաստատել Բոլգարիայի և Թիւրքիայի մահմետականների միջև։ Ասխմ-փաշա ասում էր, որ Թիւրքիան ուզում է ունենալ Բոլգարիայում այնպիսի կառավարութիւն, որ կարողանայ ամուր կապեր հաստատել Բոլգարիայի և Թիւրքիայի մահմետականների միջև։

—

«Голосъ» լրագրում կարդում ենք, որ ապրիլի 27-ին կը կատարվի պրոֆէսսոր Ս. Պ. Բօտկինի ուսուցչական գործունէութեան քսան և հինգամեայ յոբելեանը։ Ռուս հռչակաւոր բժշկի գիտական և հասարակական կեանքում ցոյց առած աշխատութիւնները սիրվի և ճանաչվին գրեթէ նրա անունը իրաքանչիւր ռուս բժշկին և հասարական այն ամեն գաղափարին, որոնք հետաքրքրում են գիտութեան առաջադիմութիւններով։ Բաւական է յիշել, թէ որքան բժիշկներ ուսում են առել Բօտկինի առաջնորդութեամբ, որ համոզվենք թէ ո՛նդ է պրոֆէսսոր Բօտկինի ուսուցչական գործունէութիւնը։ Զինւորական-բժշկական ակադէմիան պատրաստվում է փառաւոր կերպով տօնել այդ յոբելեանը։

—

«Моск. Телеграфъ» լրագրին հաղորդում են, որ իշխան Գօնդուկով-Կօրսակով համակրութեամբ վերաբերվելով Կովկասեան մահմետական բնակութեան յայտնութիւններին՝ այն է չուսով իրագործել կառավարութեան ենթադրութիւնը բացանելով Թիֆլիսում մահմետական օրիորդական ինստիտուտ։ Այդ ինստիտուտում պիտոր ուսուցիչների թիւը կը գար տասին մահմետական կրօնը և թիւրքաց լեզուն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱ

—

„Times“ լրագրի կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է հետևեալը։ Ռուսաստանին հասանելի պատերազմական ծախսերի վճարման հարցը արդէն վերջացած էր համարվում, երբ յանկարծ մի նոր և անսպասելի արգելք առաջացաւ։ Այդ հարցի մասին բանակցութիւնները, որոնք կատարվում էին առանց Բ. Դրան մասնակցութեան անմիջապէս սուլթանի քարտուղար Թահիր-բէյի և ռուսաց դեսպանի մէջ, համաձայնութեան հասցրին ամենադժուար կէտի վերաբերութեամբ պատերազմական ծախսերի հատուցման կանոնաւորութիւնը ապահովելու մասին։ Պատերազմական ծախսերը պէտք է ապահովվէին Թիւրքիայի մի քանի եկամուտներով, որոնց վրա առաջ կառավարութիւնը կամենում էր հսկողութիւն ունենալ։ Թահիր-բէյ և պ. Նօվիկով համաձայնեցին, որ Թիւրքաց բանկը առանց ռուսաց կառավարութեան հատատամատարի հսկողութեան կը հաւաքէ յիշեալ եկամուտները և նրանցից գոյացած դումարները կուղարկէ ռուսաց պետական բանկը։ Այդ համաձայնութեան նախագիծը ուղարկվեցաւ Բ. Դրան և ընդհանրապէս համարվում էր թէ առաջին միտիտրի և թէ նրա մի քանի ընկերների կողմից։ Այդ առիթով անհամաձայնութիւններ ծագեցան Բ. Դրան և սուլթանի պալատի մէջ, այսինքն Սայիտ-փաշայի և Թահիր-բէյի մէջ և զանազան ինտրիգներ առաջ բերին, որոնք քօղարկված են պատերազմական ծախսերի հատուցման հարցով, մինչդեռ բոլորովին այլ նպատակներ ունէին։ Այսպէս թէ այնպէս, հարցի վերջնական վճիռը սուլթանից է կախված, բայց յայտնի չէ, երբ սա կորոշէ։ Եթէ սուլթանը պաշտպանի առաջին միտիտրին, պէտք է նորից բանակցութիւններ սկսել ռուսաց դեսպանի հետ կայացրած համաձայնութեան մասին։

—

ԲՈԼԳԱՐԻԱ

—

Կ. Պօլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են մարտի 7-ից հետևեալը։ Նորին լուսն Թիւրքաց կառավարութեան մօտ Բոլգարիայի դիպլոմատիական գործակատար նշանակված Ցանօվ արդէն խօսակցութիւն ունեցաւ Ասխմ-փաշայի հետ, որին ճանաչում էր այն ժամանակից, երբ նա Բոլգարիայի գլխաւորնահանգապետ էր, իսկ Ցանօվ Թիւրքաց ծառայութեան մէջ էր Որմհետև Ցանօվ դեռ ևս իր կառավարութիւնից հրահանգներ չէր առացել այդ պատճառով Ասխմ-փաշա և նա թիւրքիայի ու Բոլգարիայի յարաբերութիւները քննութեան ենթարկեցին իրրև մասնաւոր մարդիկ։ Թիւրքաց կառավարութիւնը առաջարկեց բանակցութիւնների այն հիմունքները, որոնցով Բոլգարիան միջադիպին հարցերի վերաբերութեամբ պէտք է դիմէ բացատրութիւն արտաքին գործերի մինիստրութեանը, իսկ միւս գործերի վերաբերութեամբ դանազան մինիստրներին։ Պ. Ցանօվ, չը նայելով շատ քաղաքագէտների խորհուրդին, անկարելի համարեց ընդունել այդ հիմունքները։ Այդ քաղաքագէտները խորհուրդ էին տալիս Ցանօվին ընդունել Բ. Դրան առաջարկութիւնը և օրինակ էին բերում Եգիպտոսը, որ նոյնպիսի յարաբերութիւններ ունի Թիւրքաց կառավարութեան հետ։ Ցանօվի կարծիքով Բոլգարիայի քաղաքական դրութիւնը շատ է զանազանվում Եգիպտոսի դրութիւնից։ Բոլգարիայի իշխանը սուլթանի ֆիրմանով չէ նշանակվում, ուստի չի էլ կարող նրա հրամանով փոխվել ինչպէս այդ պատահից Եգիպտոսի խեդիվ Իսմայիլ-փաշայի հետ։ Սուլթանը կարող էր Եգիպտոսի գահաժառանգութեան կարգը փոփոխել մեծացնել առանձին հարկի քանակութիւներ, բացի այդ պատերազմի ժամանակ Եգիպտոսը պարտաւոր է սուլթանին գորքեր տալ և առհասարակ ենթարկված է Թիւրքաց օրէնքներին, մինչդեռ Բոլգարիան այդ բոլորից ազատ է և այդ պատճառով բոլգարական կառավարութիւնը իրաւունք չունի ընդունել առաջարկված միջոցը։ Այնու ամենայնիւ Ցանօվ կարծում է, որ Բոլգարիան այդ հարցի վերաբերութեամբ դիմումներ կանէր, եթէ Բ. Դուռը այդքան խստութեամբ չը յայտներ իր տեսակէտը։ Առհասարակ Թիւրքաց կառավարութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում Բոլգարիայի վրա, յուսալով կարողանալ այդ ազատ նահանգը նորից իր տիրապետութեան տակ բերել։ Ասխմ-փաշա ասում էր Ցանօվին, որ Թիւրքիան ամենից առաջ ուզում է ապահովել իր սահմանները, որոնց մէջ բոլորովին այլ ազգաբնակութիւն կայ։ Ասխմ-փաշա ասում էր, որ Թիւրքիան ուզում է ունենալ Բոլգարիայում այնպիսի կառավարութիւն, որ կարողանայ ամուր կապեր հաստատել Բոլգարիայի և Թիւրքիայի մահմետականների միջև։ Ասխմ-փաշա ասում էր, որ Թիւրքիան ուզում է ունենալ Բոլգարիայում այնպիսի կառավարութիւն, որ կարողանայ ամուր կապեր հաստատել Բոլգարիայի և Թիւրքիայի մահմետականների միջև։

—

օրիորդի վրա, յանիչտակված էինք նրա համարձակ և պարզ դատողութիւնով, իսկ այժմ մենք մի հայ կին ենք տեսնում նոյն իսկ դրութեան մէջ.... Հարկաւոր էր, այո, հարկաւոր էր ամեն մի հայից տեսնել թէ՛ գրչատի ոգևորված, գրչատի համակրելի կարող է լինել հայ կինը ամրիոնի վրա....

Այժմ մենք մի փոքր կը կանդնենք յարգելի տիկնոջ խօսքերի վրա։ Առնահասոր յիշելով կատանց խելամեայ պատասխանները, ասեց, որ այդ խումբը չէ խնայել իր նրբիկան միջոցները և այժմ մօտաւորապէս 800 րուբլի փող ունի մանկական պարտէզը սկզբում պահպանելու համար։

Խորհուրդը, առանձին ուշադրութիւն դարձրեց Թիֆլիսի մէջ գտնուող հայ ուսումնարանաց, ոգայ տանների և ուսուցչաց վիճակի վրայ, որ խորհրդին հասած տեղեկութիւնքը նայելով անհրաժեշտ էր։ Այս պատճառաւ նա դիմեց թեմական վիրատեսուչ մեծ. պ. Գ. Բարխուդարեանին և խնդրեց, որ սա մի քանի միջոց մասնաւոր նայողութիւն անէ այն ուսումնարանաց վրայ, որոնք կամ իրանք կամ նոցա տանները և ուսուցիչները կատարած են բարեգործական ընկերութեան ձեռնհասութեանը։ Մեծ. պ. Բարխուդարեանը սիրով ընդունելով խորհրդի առաջարկութիւնը և իր յայտարարութեան մէջ մանրամասնաբար նկարագրեց Թիֆլիսի թաղերի մի քանի ուսումնարանաց անհրաժեշտ վիճակը։ Դասատիպ գլխաւորապէս ուշադրութիւն էին հրաւիրում տուրք կարապետի գաբեթում հիմնած ուսումնարանը և Զորաբաշի եկեղեցու անուանի հաստատուած դպրոցը։ Բացի սրանից թեմական վերատեսուչը խնդրեց ուշադրութիւն դարձնել նաև Զուզուբէքի տուրք Աստուածածնայ եկեղեցու ուսումնարանի վրայ, որի մէջ նախկան պակասութեան պատճառաւ, սեպտեմբերից դադարած է ուսումն, այն ինչ այդ եկեղեցու դաշտում յարմար չէնք է կանգնած մի դպրոց ունենալու. նպատակաւ տեղական վիրահաս մանուկների համար։ Իսկ խորհուրդը իր կողմից նկատելով որ Թաղիսեան բազմանդամ թաղում բոլորովին չը կայ հայ դպրոց, սկսեց մտածել ընկերութեան միջոցներով այդտեղ մի հայ ծխական դպրոց ունենալ։ Գ. Բարխուդարեանցի վիրատեսչական յայտարարութիւնը իրան առաջնորդ ընտրելով խորհուրդը յանձնեց իր նախագահին, որ սա մի քանի անդամների հետ անձամբ տեղեկանայ տուրք Կարապետի դպրոցի դրութեան։ Խորհուրդը լսելով սուրբ դիկուցումը անհրաժեշտ համարեց օգնել այդ ուսումնարանին՝ տալով ուսուցչին, սկսած յունվարի մէկից ամսական 5 ր. մինչև սեպտեմբերի 1-ը։ Եւ միանուագ վառելափայտի համար 10 ր. և որոշեց այլի առաջ ունենալ մինչև սեպտեմբեր ամիսը ներսդել տալ ուսումնարանի շէնութիւնը և ապագայում ապահովել այդ ուսումնարանը, որքան ընկերութեան միջոցները կը ներեն։ Ուսումնարանի չէնութեան հարցի վերաբերութեամբ հրաւիրուեցան խորհրդի նիստին տուրք Կարապետի և Զորաբէքի տուրք Աստուածածնի եկեղեցեաց ծառան մի քանի պատուաւոր անձինք։ Գիշեալ անձինք մեծ համակրութեամբ ընդունեցին խորհրդի հրաւէրը և յունվարի 22-ին ի միասին գումարվելով խորհրդի բնակարանում, յայտնեցին իրանց պատրաստակամութիւնը բարերար եկեղեցեաց գաղթում կատարած դպրոցների վիճակը։ Սոյն նիստում ալ. Գ. Եղիազարեանը յայտնեց, որ սա իր հոր կտակաւանդի գումարից պատրաստ է տալ 1,000 ր. յօգուտ տուրք Կարապետի դպրոցի, այլ պէտք է լինի ազգի իրան հոգալու, իրան պատրաստակամութիւն գործ (նկատի ի տարեկ «ազգ» կոչվելու իրաւունքի վրա յաւակնութիւն ունենք ոչ մասնաւորութեան և ծիծաղելու համար միայն...)։ Այս ազգային անհրաժեշտ պարտքը տաճկա-հայոց խնդրի գրեթէ ամենաէականն և գլխաւոր մասն է, որովհետև առանց հայրենիքի մէջ նրանց ձեռքից սկսածը անելու և առանց պահպանութեան ու վաչխառուական հարստահարութեանց արմատը չորացնելու, առանց այսպիսով կենտրոնի մէջ ապրող հայ ժողովրդի առանձին կացութիւնը հաստատ հողի վրա դնելու, ոչ և նորան կը լինի երբէք մի խնդիր ճարտարապետ (որի ախտարնկերը Կ. Պօլսի մէջ որչափ հազար ուղէք, դիպուածքան կարող էք գտնել) ճիշտ իր իրանքի յանձնած տան շէնութիւնը ոչ հիմքից սկսել, այլ առնիքից։ Տաճկա-հայերի տան հիմքը, նրանց հայրենիքի սիրտը, նրանց, այսպէս ասած, ազգային ծառի բունը (ствол) խարխուլ է, երերված ու կիսակենդան. կիսակենդան է տարերդութեան, բնակութեան և մարդկանութեան առնելի առանձնաներից, առանձնաներից, որոնք արդէն մահառիթ գանգրէնայի են հասցրել կենտրոնի մէջ մնացած և նրանց ապագան կազմող հայ տարրը։ Անտարակոյս բնական է, որ եթէ գիտակցաբար գանց առնենք խնդրի այսչափ էական մասը և պարապվենք միայն նորա արտաքին և, ինչպէս Կ. Պօլսի խեղկատակները ասում են, «պաշտօնական» կէտերով, դա կը նշանակէ լինել ոչ աւելի, քան սուկ դատաձեռնեան, մօդայի և ֆանֆարօնութեան համար «ազգասէր»։ կարծեմ որ այսչափ դպրոցներից, գոնում գոչումներից յետ բանը հասցնել այստեղ, ոչ միայն չը տեսնված ազգի իրաւունքի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, 3 մարտի

Պ. Արաբեանի հանդուգնութեամբ— և բոլորովին իրաւացի—Հայաստանի խորհից եկած հայի թշշուառութեան մի իւզանելի կենդանի նկարը աւելի մեծ ցնցում կարող է գործել Եւրոպայի հասարակութեան սրտի և կարեւոր պաշտօնական անձինքների վրա, քան թէ տասնեակ լրագրական յօդուածներ, ամենատաղանդաւոր մարդու գրչից անգամ դուրս եկած. վասնորոյ նշանակելով ծերունուն օրական մօտ մի բուրլ ռոճիկ, տալու նորան իր մօտ նորա պատկերը իր մեծութեան նկարելու համար։ Այդ գործը աւարտվելուց յետոյ, կը նկարվի նա մի պանդուխտ հայ ծեր կնոջ պատկերը իրան հետ մատաղող փոքրիկ մերկանդամ թոռան հետ։ Ցետոյ, այդ երկուսն էլ կուղարկվի Եւրոպայի մայրաքաղաքներից մինը դեկորատիւոնացիոնի (академія художествъ) մէջ գետնելու, առաջուց յայտարարելով ի տարեկ Արեւելքից եկած մի անմանուն հայ նկարչի գործի մասին, հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար։ Այսպէս, առանց ո և է կանխակալ նախապաշարմունք տածելու դէպի հայկականն պրօպագանդա, աներդնելիա կամ չափազանցութիւն, ամէն մէկ եւրօպացի, ինչպէս արդ հասարակութեան պատկանող, այնպէս և պաշտօնական ակումբին, կը դայ և կենդանի նկարի վրա կը հանդիպի թէ ինչ ասել է հայի հաղորդամոյ վշտակրութիւն և հայի վիճակը քրտրերի ձեռքին (հայ վաչխառուների յանցանքն էլ ի տարիկ քիւրդերի վրա ձգվելով...)։ Բայց գլուխք, այդպիսի կենդանագիր, առանց մի բառ ասելու, ինչ տպաւորութիւն կարող է անել մարդասէր և գթասիրտ եւրոպացու երևակայութեան վրա. հետաքրքիր կը գնանք, տես պ. Տրօտտերի նման Հայաստանում հազարաւոր կենդանի հայի տիպեր տեսած մի գիւղատիպ մարդ. հէնց միայն երէկ բնակարանս հանդիպելիս, տարայ Նորան Արաբեանի աշխատութեան կարիքները, որ կից է իմ կենդանի տեղին. ամբողջ քառորդ ժամ սեանելով աչքերը սրտաուչ նկարի վրա, որի կէսը արդէն վերջացած է, Տրօտտերը նկատեց. «այս պատկերի պատկառելիքը նորա մէջ է, որ մարդ չի ուզի երկրորդ անգամ իրան տոխպել նորան տեսնելու, թէպէտ և չէ կարող նորան բնաւ մոռանալ»։ Ահա ձեզ ամեն ինչ երկու խօսքով ասված. էլ երևակայեցէք թէ ինչպէս կարող է ազդել այդ կենդանագիրը մայրաքաղաքի մէջ ապրող ո և է մէկի վրա, որը թէպէտ չատ բաներ է կարդում լրագիրներում հայի քաշած տառապանքների վրա, բայց միշտ հեգնօրէն էլ ժպտում է, տեսնելով եւրոպական քաղաքներում չը ջրող հաստատուր հայ կրեատուրներին։

Իմ մասնաւոր յորդորանքին պիղծանելով, պ. Արաբեանը որոշեց առ այժմ այդ այդ երկու պատկերները ուղարկել Ս. Պետերբուրգ, ուր կը գտնվին ի տարիկ գործին աջակցող ուսանողներ և ուրիշ հայեր, որոնք իրանց կամքի համեմատ կարող են դնել ուր միայն աւելի յարմար գտանեն, կամ ընծայեն նորան որին որ արժան և արժանաւոր գտնեն։ Այդ պատճառով պատկերների գինը նշանակված կը լինի արտաքոյ կարգի թեթեն և դիւրամատչելի. գլխաւոր հոդը միայն նորա մէջ է այժմ, որ մինչը հասնի Ս. Պետերբուրգի ազգայիններից յանձնառու լինել յշխալ երկու մեծագին նկարները առանալ և նոցա ներկայացնող լինել հայ հասարակութեան առաջ, նորա կամքի և խորհրդի համեմատ տնօրինելու համար։ Գործը չուշացնելու համար, լաւ կը լինէր ի տարիկ, որ մի ամենիւ մարդ չատապէր հեռագրով յայտնել իր յօժարամտութիւնը կամ Մշակի միջոցով, կամ թէ ուղղակի իրան պատասխան նկարչի սեփական հասցէով։ *) Երբ Ս. Պետերբուրգի համար նշանակված կենդանագիրները կը վերջանան, կը ձեռնարկվի անմիջապէս ուրիշ գործերին վիճնա, Փարիզ և Լօնդոն ուղարկվելու համար։ Այսպիսով պ. Արաբեանը բացի մի մեծ ազգային ծառայութիւն մատուցանելուց, իր ձիրքը կը միացնէ պ. Յով. Քիւրքճեանի կատարած գործի հետ Իվան Այվազովսկիի նման «հայանուն» օտարներին մարդութեան և արուեստիս մի օրինաւոր դաս տալու համար, չը նայելով որ նկարիչ Իվան Այվազովսկին ամենից աւելի ջիրմ կրպագուներ ունէ իր խեղճ ոչխարանման հայ ազգի մէջ....

Մեր յարգելի ազգային նկարիչ պ. Արաբեանի ձեռնարկութիւնը ունենալով իր չատ մեծ նշանակութիւնը, չէ վերաբերվում սակայն հայ պատդամիների տաժան ներկային և ապագային, որի հոգայոգութեան խնդիրը չը պիտի կազմէ ոչ Անգլիայի, և ոչ մի այլ իխտամատուտ-

*) Pera-Pangualti, rue Bouyouk-Dérè № 26.—

Fonds A.R.A.M

բաղնտի զարդոցի և պատրաստ է ներկայացնել այդ գումարը: Զորաքաշի տուրք Վէսրգ եկեղեցու ուսումնարանի ուսուցիչ պ. Մատինեանցին խորհուրդը վճռեց ասել՝ սկսած յունվարի 1-ն մինչև սեպտեմբերի 1-ն ամսական 10 ր. և նոյն ուսումնարանին ի նպաստ միանուագ 40 ր.: Խորհուրդը առաջաւ «Մշակի» լրագրի միջնորդութեամբ 35 ր. որ հասցուած էր Մուշեղ քահանայ Տէր-Ղևոնդեանի առաջարկութեամբ պ. Գ. Զարիբեանի անունը: Թիֆլիսի արհեստաւորաց ժողովարանը տուած էր յայտնա ընկերութեան գիմակահանդէս, որից գոյացած 432 ր. 28 կ. գուա արդիւնքը յանձնուեցաւ խորհրդին: Խորհուրդը առաջաւ պ. Մ. Խալաբեանցից մի հատ արեւելեան փոխարինութեան տոմսակ 100 ր. արժողութեան № 475,783 ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Նունէ Խալաբեանի, այն պայմանով, որ տոմսակը մնայ ընկերութեան սեպհականութիւն, իսկ տարեկան տոկոս հանարվի հանգուցելոյ տարեկան գործադիր անդամակցութեան վճարը: Խորհուրդը անձնանուիրի գումարով գնեց Անդրիոմկիան պրիկազի 2 տոմսակ իւրաքանչիւրը 5,000 ր. $7\frac{1}{2}$ տոկոս, որոց համարներն են 701 և 702, 28 նոյեմբերի 1874 թ. այս երկու տոմսակների համար խորհուրդը վճարից 10,407 ր. 60 կ. և յանձնեց ի պահուստ արքունական բանկի Թիֆլիսի բաժանմունք:

Խորհուրդը ձեռնամուխ եղաւ իր միջոցներով հիմնելու Թիֆլիսի մէջ ազատասիրաբան հայ որբ և չքաւոր աշակերտների համար. որոց համար մշակից առանձին նախագիծ:

Որովհետև խորհրդի համար ծանր էր սկզբում, միջոցների պակասութեան պատճառով անել մի քանի անհրաժեշտ գիւանական ծախսեր, ուստի խորհրդի անդամ մեծ. պ. Մանթաշեանը յանձնառու եղաւ իր սեպհականութիւնից վճարելու այդ ծախսերը, որ ընդամենը եղաւ մօտ 300 ր. որոց համար նա ստացաւ խորհրդի կողմից առանձին շնորհակալութիւն:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳԻՒՆ

Բաղու. 17 մարտի

«Մշակ»-ի № 39-ում տպագրված լուրի առիթով ստիպուած եմ ինձ համար պատասխան տալ երկուսիս ձեր պատուական լրագրի էջերից մի անկիւնում տեղի չնորհելու:

Հիմնվելով քաղաքում տարածված և բաւական մի նշանաւոր ծանօթ վաճառականների խօսքերից, յանդգնութիւն ունեցայ պ. Ձիւնաւորեանցի մանկութեան լուրը հրապարակ հանել. ոչ մի քրիստոնական առիթ ինձ չէր տրամադրում այդ գրելու, եթէ ոչ մի արհամարհանք զգալի մեր հայ վաճառականների գործունէութիւնը. տակաւին նամակս տպուած գրելուց երկու օր յետոյ ես անձամբ տեսայ որ պարոնը բացարձակ կամ նօտարիուսով իրեն մնանկ չէ յայտնած. ուստի չը նայելով խմբագրութեան ուղարկած մի երկրորդ նամակիս, գժբաղդաբար ես այդ նամակը լոյս տեսած գտայ «Մշակի» № 3 համարում, որի առաջարկին իր ժամանակին հերքմունք: Պ. Ձիւնաւորեանց այդ առթիւ գանգատ տալու է ինձ դէմ թէ ՀՀ, այդ ինձ գնա յայտնի չէ. միայն այսքանս կայ, որ գնա ես նա ինձանից այդ մասին գանգատ չտեսած, և սխալ էր այն լուրը, թէ նրա գործը ամսիս 24-ին քննվում էր և նրա համար ինձ կայանատորեցին. ինչ վերաբերում է քննիչի մօտ այն օրը իմ լինելուն, այդ բոլորովին ուրիշ գործի համար էր, որի մասին ես արդէն երաշխաւոր ներկայացնելով ազատ եմ, մինչև գործի գատապարտում քննվելը. ուստի թող ներվի ինձ ձեր պատուական լրագրի միջոցաւ խնդրել այն անձինքներին, որոնք կասկածի ամենաթեթև նշոյլ անգամ ունեն դէպի ինձ տալաս ընծայելով մի քանի պարոնների ինձ դէմ ազատ քանի մի նշանաւոր չբջանականում, նոգոյալի գրպարտանքներին ազատել մինչև ինձ գործի քննութիւնը. որից յետոյ ես բաւական մանրամասն պարագաներ ունեմ հաղորդելու պատուելի ընթերցողաց կամ լրագրի միջոցաւ և կամ առանձին բլօշիւրայով. տա այժմ բաւականանում ենք տալու, որ կատարեալ իրաւացի էր «Մշակի» չը գիտեմ որ ժամանակ արած նկատողութիւնը «տալիսակ նեղութեան» անուանելով հայ գործակատարներին:

Աբել Ապրեանանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի, մարտի 21-ին, առաւօտեան ժամը 9-ին ԹԻՖԼԻՍԻ ամբողջ մասերի, այսինքն առան և երկու պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչները, պատիւ ունենալու ներկայանալ կովկասի Գլխաւոր հսկավարիչ իշխան Գաղուվովին Կօրտսովին:

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԳԱՐԻՑ ստացանք 80 րուբլ բաժանորդագին «Ժուրնալ գ'Օրիանի» համար հետևեալ անձինքներից: Քահանայ Սերովբէ Լազարեանց 8 րուբլ, Օգոնես Պախչաթարեանց 4 ր., Մանուկ Սերոպեանց 4 ր., Միհրան Շուշանեան 8 ր., Յովհաննէս Թամամեան 4 ր., Պետրոս Քասապոլով 8 ր., կարապետ Քիչեճիով 3 ր., Մկրտիչ Խաչատուրիով 8 ր., կարապետ Օրթիլով 4 ր., կարապետ Թամամեան 4 ր., Մարգար Շապոշնիկով 4 ր., Սահակ Խաչկուզեանց 4 ր., Սարգիս Խաչիկովեցեանց 4 ր., Դևորգ Մինասով 4 ր., Մանուկ Փիլիպոսեան 4 ր., Պետրոս Հայրապետեան 5 ր.: Անցեալ փոստի հետ կանխի 100 րուբլ:

—

Մեզ գրում են ՂԶԼԱՐԻՑ: «Նորերումս պ. Զուբաբեան նուիրեց մեր երկրամաս ուսումնարաններին 100 րուբլ աղքատ երեխաների համար չորեր գրելու նպատակով: Քանկալի է որ և մեր մի քանի ազգայնք հետևէին պարոնի բարի օրինակին:»

—

Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի մի աշակերտ սկսել է արդէն թարգմանել ուսերէնից հայերէն Պիկեցի «Сборникъ разсказовъ изъ путешествія и быта народовъ» անուանված գիրքը և խնդրում է ուրիշներին ի զուր չաշխատանն այդ գիրքը թարգմանելու:

—

«Մշակի» ներկայ համարում տպում ենք Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան խորհրդի արձանագրութիւնների քաղուածները: Կաշխատենք միւս անգամ խօսել ընկերութեան գործունէութեան մասին:

—

Լսում ենք որ բժշկապետ Շահպարոնեանց գիմել է մի քանի երիտասարդներին, խնդրելով նրանց որ Զատկի տօներից յետոյ կազմեն հայկէն գասախոսութիւնների մի շարք յօգուտ լինելու հայոց ընդհանուր ուսուցչական ժողովի: Լսում ենք որ գասախոսութիւնները լինելու են Արծրունու թատրոնում:

—

Լսում ենք որ ձեռնածու պ. Լինց ամբողջ Զատկի շաբաթվայ ընթացքում կրկնելու է իր ներկայացումները Արծրունու թատրոնում:

—

Հաւատարիմ ազբիւրից տեղեկանում ենք, որ կողք գիւղի գործակալի Թիֆլիսի վիճակային կոնսիստորիային ուղարկած 300 րուբլուց աւելի վիճակային արդիւնքը չէ հասած գանձարանը, այլ մի անծանօթ կեզծարար անձ է տասկել այդ գումարը նոյն կոնսիստորիայի անդամի և քարտուղարի ստորագրութեամբ և կնիքով վաւերացած յայտարուով (повѣстка): Հայր Մամբրէն այդ մասին քննութիւն է սկսած: Անա ինչպիսի բաներ կարող են պատահել արհեստ աւագութեան պակասութեան պատճառով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանական կայսրի ծննդեան օրը պահպանականների կենտրոնական մամուժողովը մի ուղերձ ներկայացրեց Վիլհելմ կայսրին: Մամուժողովի պատգամաւորներին, որոնք յանձնեցին կայսրին ուղերձը, նա ասեց մօտաւորապէս հետևեալը: «Իմ կեանքի իւրաքանչիւր վերջացած շրջանը յիշեցնում է ինձ, որ Ամենագօրը, յայտնի ժամանակ ներում իր գործիքները ընտրելով, ինձ էլ ընտրեց մի քանի գործեր կատարելու համար: Ես միշտ գտել եմ ինձ հարկաւոր եղած մարդկերանց թէ քաղաքական և թէ պատերազմական մասերի համար: Ժամանակները այժմ շատ ծանր են. եթէ անցեալ տարի մի ինքնակալ թագաւոր և ժողովրդի կամքով ընտրված պետութեան գլուխ աւերուղ կուսակցութեան գոհ գարձաւ, ուրեմն ով կարող է հաւատս ընծայել ապագային: Ես ուրախութեամբ տեղեկացայ, որ իմ շրջաբերականը գերմանական պարլամենտի բացման ժամանակ և իմ հրովարտակը երկրի ազգարնակութեան միաձանութեանը բաւականութիւն պատճառեց: Ես հարկաւոր համարեցի նորից յիշեցնել, թէ ինչ բան է պահը Պրուսիայի մէջ:»

«Köln. Zeit.» լրագիրը մարտի 20-ից հաղորդում է հետևեալը: Կոմս Վօլկենշտէյն, որ աւստրիական դեսպան է նշանակված Ս. Պետերբուրգի մէջ, այսօր փարիզ ուղեորվեցաւ: Ամեն տեղից հաւաստացնում են, որ կոմս Վօլկենշտէյն բացի Պուէնտի հարցից, այլ քաղաքական յանձնարարութիւն չունի և որ այս անգամ նա չի տեսնվիլ իշխան Բիսմարկի հետ: Լրագիրներից շատերը հաւաստացնում են որ իշխան Բիսմարկ ասատիկ գրազված է արտաքին քաղաքականութեամբ: Շատերը մինչև անգամ ենթադրում են, որ պարլամենտն էլ ստիպված կը լինի զբաղվել արտաքին գործերով: Խնդրէս երկիւղ չը կայ պատերազմի սկսվելու համար, մինչդեռ թէ գերմանական և թէ ուրիշ պետութիւնների մէջ ժողովուրդը հաւատացած է, որ շուտով պատերազմ է սկսվելու: Աւստրօ-Ունգարիան անպատճառ կամենում է պատգամաւորների ժողովից գրամ պահանջել Բոսնիան և Հերցեգովինան ապահովելու համար: Դրանից կամենան եզրակացնել, որ Աւստրիան կամենում է այդ նահանգները իր հետ միացնել: Վիէննայից վճռորոշական հեղբում են աւստրիական կառավարութեան այդպիսի պետութիւնը: Բացի այդ դժուար է իրագործել այդ պետութիւնը: Սուլթանը այնքան մեծ նշանակութիւն է տալիս իր բարձր իրաւունքներին այդ նահանգների վրա, որ երբէք չենք կարող ենթադրել, թէ նա կը համաձայնի Աւստրիային տալ գրամ պահանջելու իրաւունք:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑ

Ըստ ամենայնի Ռուսիան ուզում է Ասիայում ունենալ իր ազդեցութիւնը, որ ինչպէս գիտենք, ամենևին չի համապատասխանում Անգլիայի շահերին:

բէք նրանցից չի հրաժարվի և, եթէ այդ հարցի մասին եւրոպական կոնֆերենցիա կազմվի, Աւստրիայի մեծապրուեիան հաւասարակ կը լինեն Անգլիա, Գուսսաստան և Թուրքիա:

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից „Polit Corresp.“ լրագրին գրում են հետեւեալը մարտի 20-ից: Մարտի 19-ին առաջադէմների կուսակցութեան ժողովրդի ներկայացուցիչները, որոնք եկել էին Թագաւոր Միլանին շնորհաւորելու համար: Դրանք թէեւ այնքան շատ էին, որ լցրել էին ամբողջ կուրը: Նկրճին գործերի մինիստր Գարաշանինն դիմեց պատգամաւորներին մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեան ճառով: „Եղբայրներ, տեսէք, թէ ինչ բանի կամենում են մեզ հասցնել արտաքինները. նրանք ցանկանում են, որ մենք պատերազմ սկսենք մի հզօր դրացու հետ: Մեր վերջերից դեռ ևս արիւն է հոսում: Մենք դեռ չենք վճարել մեր հին պարտքերը, մեր սահմանների վրա թափված են գիւղերի և քաղաքների աւերակներ, որոնք վերականգնման կարօտ են: Դեռ ևս հառաչում են այն անձինք, որ վերջին պատերազմի չնորհիւ թիւրքերի հետ որբ և այրի մնացին և որոնց պետութիւնը և հասարակութիւնը դեռ չէ կարողացել օգնել, իսկ արտաքինները կամենում են հայրենիքը աւելի մեծ թշուառութեան մէջ գցել: Բայց դուք կարող էք հաւատ ընծայել ձեր Թագաւորի խոստումներին:“ Այդ խօսքերը արտասանելու ժամանակ ներկայ եղողները սկսեցին աստիճ ծափահարել: „Մեր խոստումն Թագաւորի խորհուրդը կազմելով, շարունակից նկրճին գործերի մինիստրը, մենք մեզանից կախված բոլոր միջոցները գործ կը դնենք մեր Թանգագին հայրենիքը դժբաղդութիւններից ազատելու համար և ամեն կերպ կաշխատենք մեր դրացիների հետ խաղաղ ապրելու համար:“ Դրանից յետոյ ներկայ եղողները սկսեցին կեցցէներ կանչել ի պատիւ Թագաւորի, Թագուհու և Թագաժառանգի: Նրանք միմեանց խօսք տուին աշխատել, որ „երկրի և ժողովրդի շինարիները, որոնք պատերազմ են կամենում“ այլ ևս սկսպէնդայի անդամ չընտրվին:

Պէտք է կարծել, նկատում է „Голосъ“ լրագիրը, որ Թագաւոր Միլան շատ գոհ չէ այն պայմաններով, որոնցով շրջապատված նա անց է կացնում իր Թագաւորութեան առաջին ամիսը: Թագաւորութիւն գահընկէց լինոյ Սերբիան առաջվայ պէս մի երկիր է ներկայացնում, որտեղ մնքառում են երկու հակառակ կուսակցութիւններ, աշխատելով իշխանութիւնը իրանց ձեռքը գցել, իսկ սերբիական մինիստրութիւնը ընդդիմադրութեան է հանդիպում քաղաքական այն բոլոր գործիչների կողմից, որոնք չեն համակրում Սերբիայի և Աւստրօ-Ունգարիայի սերտ բարեկամութեանը: Սերբիան Թագաւորութիւն յայտնելու պատճառով կայացրած հաշտութիւնը խանգարվեցաւ այդ գործի կատարվելու միւս օրը: Սկուպչինայի մէջ ընդդիմադրական կուսակցութիւնը անյապաղ սկսեց յարձակվել մինիստրութեան վրա և գործը այն դրութեան հասցրեց, որ սկուպչինան ստիպված էր դադարեցնել իր պարապմունքները, որովհետև սկուպչինայի արտաքին կուսակցութեան հրաժարականից յետոյ նրա անդամների թիւը բաւական չէր օրէնսդրական վճիռներ կայացնելու համար: Ապագայ ընտրութիւնները չեն բարւոքի կատարվելու, եթէ ընտրողները հրաժարված պատգամաւորներին կրկնակի կերպով չընտրեն: Մի և նոյն ժամանակ պատգամաւորներից յայտնութիւններ են ստացվում, որոնք ապացուցանում են սերբիական նոր Թագաւորին, թէ որքան անկի է նրա հզօր պատակներին այժմեան միջնադարութեան աւազակութիւնը: Ընդդիմադրական մամուլը անդադար յիշեցնում է Թագաւորին, թէ Սերբիայի արժանաւորութեանը պատիւ չէ բերում նրա միջնադարեան խոստովանութիւնը: Սկզբ հոգեւորականութիւնն էլ իր կողմից անդադար յիշեցնում է կառավարութեանը այն աններելի սխալը, որ նա գործեց, հրաժարելով սերբիական միտրօպոլիա Միխայիլից:

Մօսկվայի մէջ ապրող սերբերը, շնորհաւորելով Թագաւոր Միլանի նոր տիտղոսը, յանկութիւն յայտնեցին, որ Միլան Թագաւոր դրկի Միխայիլ Միտրօպոլիտից Դուշան Թագաւորի Թագը: Այդ հեռագիրը առանց պատասխանի մնաց, որովհետև առաջինը շատ հաճելի չէր նոր Թագաւորին և կրկրող պատճառում էր երկու միմեանց հակասող ցանկութիւններ:

Ամենքին յայտնի է, որ Դուշան Թագաւորի Թագը վաղուց Աւստրիայի մէջն է և պահվում է աւստրիական կայսերական Թանգարաններից մէկի մէջ: Թագաւոր Միլան միայն երկու միջոցներով կարող է ձեռք բերել այդ Թագը, կամ ուժով խլել և կամ իրեն ողորմութիւն խնդրել Ֆրանց-Յովսէփ կայսրից: Առաջին միջոցի մասին աւելորդ է մինչև անգամ խօսել, իսկ եթէ աւստրիական կայսրը կը բարեհաճի Դուշանի Թագը Սերբիային վերադարձնել, այդ ողորմութիւնը երկրին էժան չի նստի:

Թէպէտ Մօսկվայի սերբերը անաչառ ցոյց տրին, այնու ամենայնիւ այդ անաչառութիւնը չէ փոքրացնում նրա քաղաքական նշանակութիւնը: Թագաւոր Միլան նկատում է մի նշանաւոր ընդդիմադրութիւն իր միութեանը, որ ձգտում է Սերբիան Աւստրօ-Ունգարիայի գաղնակից դարձնել և նպաստել երկրորդի նախագիծներին բալկանեան Թերակղզու վերաբերութեամբ: Այդ ընդդիմադրութիւնը յենվում է հասարակական կարծիքի վրա, որ երբէք չէ համակրել Աւստրօ-Ունգարիային: Շատ երիտասարդ և վաճառաւոր է երկար ժամանակ հակառակել սերբերի միաժամանակութեան այդպիսի արտայայտութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«National» լրագիրը հաղորդում է. «Կիրակի երեկոյեան, Վիկտօր-Հիւգոն մեծ հացկերոյթ տուեր: Ձայն ժամանակ մեր ազգային բանաստեղծին հաղորդեցին, որ Կայսր Ալէքսանդր III-ը նորից մահուան պատասխանված հինգ անձանց, որոնց համար «Ձեչատնեների» հեղինակը միջնորդել էր Թագաւորի առաջ մէկ նամակով, որ հրատարակված է լրագիրներում: Այն ժամանակ Վիկտօր-Հիւգոն վերկացաւ և խոսքը զգացված, աչքերը ոգեորութեան արտասուքներով լի, բարձրաձայն առաջարկեց հետեւեալ կենացը, որին միացան ճարչին բոլոր ներկայ եղողները:—Խնամում եմ այն Թագաւորի կենացը, որը նորել է մահուան դատապարտված հինգ անձանց, և որը նրանց բոլորին կը նորի:»

—Գերմանիայում, մարտի 22-ին, միշտամ էր Գէօտէի մահուան յիսնամեակը: Բերլինում բանաստեղծի արձանը զարդարեցին կանաչով և ծաղիկներով: Վէյմարում, բանաստեղծի գերեզմանի վրա հոդեհանդիստ կատարվեցաւ, և գերեզմանի վրա դրեցին Գերմանիայի զանազան ծայրերից ուղարկված դամբանագ պսակներ:

—Մի և նոյն օրը, մարտի 22-ին, Վիլհելմ կայսրը ոտնկոչ գորքի մէջ իր ծառայութեան 75 ամեակը:

—«Temps» լրագրին Վիէննայից հեռագրում են, մարտի 21-ից, որ ուղղական պաշտօնական լրագիրները հերքում են լուրերը այն բանի մասին, որ իբր թէ ներկայումս պետութիւնների մէջ բանակցութիւններ են լինում եւրոպական կոնգրէս հրաւիրելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամենապզեցիկ կինը աշխարհիս վրա: Ներկուսան Հին և Նոր աշխարհի չատ լրագրերում տպվեցան հետեւեալ բարեւների կազմից յայտարարութիւններ, որոնց մէջ նա խոստանում է 20,000 դոլար պրէմիա տալ ամենազիպզեցիկ կնոջը աշխարհիս երեսին, իսկ 10,000 դոլար ամենագեղեցիկ աղամարդին: Ինչն խոսան հասկանալի է, որ պրէմիա ստացող դեղեցկուհին պարտաւոր է մի որոշեալ ժամանակի իսան ցոյց տալ «պատուելի» հասարակութեանը յոգնած բարեւում: Միացեալ-Նահանգների ամեն ծայրերից այդ ճարտիկ անտարբերներն արդէն բազմաթիւ նամակներ է ստացել, որոնց հեղինակները և հեղինակուհիները նկարագրում են իրանց ֆիզիկական յատկութիւնները ամենագրաւիչ գոյներով: Նրանցից մէկը պնդում է, որ ինքն ամենադեղեցիկ աչքեր և ձեռքեր ունի, մէկ ուրիշը գոհում է իր հրաշալի, կենտանական հոսի մի աչքերը, երրորդը իր հրաշալի մազերը, և այլն: Մէկ դեղեցիկ այրի կին հետեւեալ նամակն ուղարկեց Բարեւումին: «Ես այժմ միայն 25 տարեկան եմ, և երեք տարի է, որ ես այրիացել եմ: Միամուսնութիւնը անտանելի է ինձ համար: Սկանչի փոփոխութիւնը և դէպի տատր երկիրները ճանապարհորդութեան յուզմունքները ինձ հաճելի կը լինեն: Ես ամուսնացած եմ միամտանակ դաշնամուրի վրա մէկ ձեռքով «Yankee doodle», իսկ միւս ձեռքով «Fishe's hornpipe» և մի և նոյն ժամանակ դեղեցիկ ձայնով երգում եմ: Ես այդ բոլորը միևնոյն անգամ աչքերը փակած էլ կը կատարեմ: Ձեզ լաւ յայտնի է, թէ որքան դժուար է հասարակական պիկ ունենալ, մանաւանդ միայնակ կնոջ համար:» Նամակի հետ ուղարկած ֆոտոգրաֆիական պատկերը ցոյց է տալիս խնդալուն մի սիրուն հագնված դեղեցիկ կին:

* * *

Կնոջ անապատութիւն: Տրիէստում, այս օրերս, մի երիտասարդ կին, որը անբժշկելի հիւանդութիւն ունէր, մերամաղձութեան պղպեղութեան տակ, իրան պզեց չորս յարկանի տան կատարից: Նրան տապան միջնակարգ հիւանդացաւը: Վնասք բարեկամները կանգնելով նրա մահուան անկողնի չորջը, տրամաբանեցին. «Թէ չատաւ, այնպէս ջանդ է, նա միայն 28 տարեկան է:» Հիւանդը բացեց աչքերը: «Չէ—նորին ձայնով արտասանեց նա. 25 տարեկանից աւ աւելի» և վախճանվեցաւ:

* * *

Հէյդէ Ֆրանտիացի: Ֆրանսիացի մի ինժիներ, որը Աէտա-Լոյիէնի շրջականերում պատահական հետազոտութիւններով էր պարապում, 500 մետրանոց խորութեամբ հորը ծակելով, գտաւ տաք ջրի մի աղբիւր, որից ջուրը երկրի մակերեսոյթից 26 մետրանոց բարձրութեամբ էր խփում: Ջրի սիւնը, հետեւապէս, նոյն բարձրութիւնն ունէր, ինչպէս և հէյդէրում, որը յայտնի է «Straske» անունով (Բալանդիայում). Ջուրը նոյնպիսի բարեխառնութիւն ունի և սառուկ չատ ածխաթթու: Ֆրանսիական գիտութիւնների ակադեմիան մտադիր է այդ «ջրային հրաբուխը» աւելի ճիշդ հետազոտութեանը ենթարկել:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. դատապարտված տերրօրիստներից բողոքից պետաչնիկօվ: Նրա խնդիրքը քննելուց յետոյ առանց հետեւանքի է թողված: Խնդիրքներ ներկայացրին նաեւման մասին մասամբ դատապարտվածները, գլխաւորապէս նրանց ազգականները: Արդարութեան մինիստրի զեկուցմանից յետոյ Թագաւոր կայսրը բարեհաճեց թեթեւացնել Ֆրիդենսօնի և Լիւստիգի պատիժը. առաջինին 10 տարի տաժանակիր աշխատանքների, երկրորդին չորս տարի: Իսկ մահուան պատժի դատապարտվածների պատիժը փոխարինել անժամանակ տաժանակիր աշխատանքներով բացի Սուխանովից, որին կախելու տեղ հրացանով սպանել:

ՕՐԼՈՒՍԱ, 19 մարտի: Պրիմօրակայա բուլվարի վրա բևեռվերով ապահոված է Պեժվի գինուորական դատարանի պրօկուրօր Սարելնիկով, որ հսկում էր քաղաքական գործերի քննութեան վրա: Ցանցատունների երկուսը կալանաւորված են: Կալանաւորութեան ժամանակ երեք մարդ վիրաւորվեցան: Երկուսն էլ հրաժարվում են յայտնել իրանց ազգանունը, երկուսն էլ 20 կամ 25 տարեկան երիտասարդներ են:

ՕՐԼՈՒՍԱ, 20 մարտի: Ցանցատունը Սարելնիկովի սպանելուց յետոյ, վազեց Պրիմօրակայա փողոցը, որտեղ կանգնած էր կառապանը՝ նրա համաձայնը: Մարտի 19-ին կատարվեցաւ Սարելնիկովի առաջին հոգեհանդիսաը: Ներկայ էին գլխաւոր նահանգապետ Դուբիչ, քաղաքապետը, գեներալներ, քաղաքացիները և զանազան բաժինների ներկայացուցիչները: Խուզարկութեան ժամանակ ցանցատունների մօտ գանվեցան. երեք բեմվոլվեր, երեք դաշոյն, մի քանի անցագրեր և նոյն: Նրանցից մէկը բնակվում էր սրճի հիւրանոցում, պահդ իջեւանել էր Սարելնիկովի: Ձեն ցանցատներից երկու օր առաջ էր գնված: Զարապործներին բռնում էին քաղաքային պահեստի բանուորները, որոնցից վիրաւորված են պաշտոնով մէկը ոտքում, իսկ միւսը ձեռքում, վիրաւորված է նոյնպէս մարտական առաքինանուերը: Երկրի վերջերն էլ վտանգաւոր չեն: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. կայսերական Մարիայի բաժնի կառավարութիւնը ժամանակաւորապէս յանձնված է Պետական խորհրդի անդամ Տիռովին: Սուխանովի մահուան պատիժը կատարված է մարտի 19-ին կրօնշտատի մէջ: Սօխանովի մահնաժողովի պատրաստութեանների նախագիծը հաստատված է ներքին գործերի մինիստրից: Այդ նախագծի համեմատ պարապմունքները կը սկսվեն անյապաղ Զատկից յետոյ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի: Ազատտնտեսական (Вольно-Экономическое) ընկերութեան նախագահ ընտրված է նախկին փոխեսար Արապա: Նա ստացաւ 63 ձայն 14-ի դէմ: Գրէչկին ստացրին: Նկարների նետաքրը պատկանութեան մասին վերջացան:

ՕՒԼՍՍԱ, 21 մարտի. Մարտի 20-ին Սարելնիկովի սպանողներին յանձնեցին մեզդրական սկսը, երեկոյեան 9 ժամին պինուորական դատարանը սկսեց քննութիւնը: Կէս գիշերին յայտնեց դատավճիռը: Մարտի 21-ին կայացաւ Սարելնիկովի թաղումը առանձին հանդիսով, ներկայութեամբ իշխանութեան ներկայացուցիչների, զօրքերի և բազմաթիւ ամբոխի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի: Պետական բանկի 5% առմանակր առաջին շրջանի արժէ 95 ր. 50½ կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 90 ր. 50½ կ., չորրորդ 90 ր. 87½ կ., հինգերորդ 90 ր. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան առմանակր արժէ 216 ր. 75 կ., երկրորդ 211 ր. 5 կ., արեւելեան առաջին փոխառութեան առմանակր արժէ 90 ր. 37 կ., երկրորդ 90 ր. 5 կ., երրորդ 90 ր. 5 կ., ոսկի 8 ր. 13 կ.: Ռուսաց 1 րուբլի նշոգների վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 37 պֆ., Փարիզի վրա 255 ֆրանկ: Բօրսայի արտադրութիւնը ամբ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Fonds A.R.A.M

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՆՍԻՍՏՈՐԻԱՑՆ

Հայոց վրաստանի և Իմերէթի Ծառուցանէ, թէ նրա ատենում նշանակած է ամէն րդ 5-ին ապրիլի ներկայ տարվայ և կրկնաձուրդ 6-ին նոյն ամսի, կապալաւ տալու եկեղեցական դիւզերը, որոնք գտնվում են Ախալքալաքի գաւառում թիֆլիսի նահանգի։ Պայմանները յանկացողք կարող են տեսնել կոնսիստորիայի դիւանատունը ամէն օր, բացի տօներից, առաւօտեան 9-ից մինչև 2 ժամին։

ՔԻՄԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Ամենաանվնաս, բոլոր դոյների հետ գործածութեան եղանակը։ Գրօվանեան Ջ է Թ Ֆունար 60 կ., և տուալէտի նոր պատկառելիքներ։ Գրիվնակ, Լօնդօն հիւրանոցի տակ։

1—5

ԲԱՑՕՐՈՇ

Ազնուրովի բամբակի գործարանից վաճառվում է ամէն տեսակ բամբակեղէն ապրանքներ, որոնք ստացվել են վերջին ցանկութեամբ ձեռք բերած մեքենաներով։ Ցանկացողները կարող են դիմել գործարանի կանոնաւոր վաճառատունը Թիֆլիսում, Գրիբոյեդովի փողոցում, № 4։

2—3

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՋԱՏԻԿ

գլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 կ., բրիւկներ 4 ր., բիջակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., դրապ, մահուդ, արխալո, պրիչներ և ալբօմներ կէս գնով։ Հնդկական բրինձ 6 կ., սագօ և պերլօվայա կրուպա 9 կ., պաներ հնսաներ 70 կ., նշշտայ կօլմանե 18 կ. ֆունար, լուծողական ձեթի պիլիւլներ 2 կ., լուացքի փոշի 5 կ. ՆՈՐՈՒԹԻՒՆ։ Մեդրամամ և արծաթէ մետալներ 35 և 42 կ. ֆունար։ Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսպէս երեխաների համար 4 ր., մեծերի համար 12 րուբլուց։ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ։

36—36

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ԾԱԽՈՑԻ սիրողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԱԽՈՑ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Սա երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենաընտիր ճաշակին։ Ծխախոտի գինը, ֆունար 3 րուբլուց մինչև 10 րուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 րուբլուց, մինչև 3 րուբլի։

Գործարանս գտնվում է 3-րդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալկերեում, Վլօրցօվի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արտիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

10—25

Ա. Ս. ՅՈՒՐԻՆՕՎի և ընկերութեան գեղական պահեստը պատիւ ունի յայտնել, որ այսուհետև առևտուրը կը կատարվի հետևեալ ֆիրմայով. ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ («КАВКАЗСКОЕ ТОВАРИЩЕСТВО ТОРГОВЛИ АПТЕКАРСКИМИ ТОВАРАМИ»), *որի կանոնադրութիւնը ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ հաստատված է ներկայ 1882 թ. յունվարի 29-ին։ Ընկերութեան պահեստը գտնվում է թիֆլիսի տանը, թանդարանի դէմ։*

4—7 (եր. և ուր.)

КЁЛЕРСКАЯ
ДУШИСТАЯ ВОДА.

1—50


ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՄՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇԱՓՈՒՆԵՐ (նոր ոճով) ժամացոյցի համար 50 կ., կրաւնեը 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարանները 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ր., շչհօսկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և ազամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալէ առարկաներ և այլն ԿԻՍԱԴՆՈՎ, մամբ, մոմբասա և այլն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԿԵՐԵԱ։

2—50

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.



ԶՄԻՒՌՆԻԱՑԻ

„ԱՐԵՒԵԼՅԱՆ ՄԱՄՈՒԼ“ ամսագրին բաժանորդագրվում են Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան գրասենեակում։ Տարեկան գինը, 12 տետրակի 10 րուբլ կ։ Հասցէն՝ Тифлисъ, Газетное Агентство В. Шавердова.

10—10

Լոյս տեսաւ Գ. ՍՄԲԱՏԵԱՆի հրատարակութեամբ Հայերէն ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՑՐՈՒԹԻՒՆ-ԼՕՏՈՆ վաճառվում „կենսօնաննական“ գրավաճառանոցում։ Գինն է 1 ռ. 20 կ., ճանապարհի ծախքով 1 ռ. 60 կ։ Օտարաքաղաքացիք Թող բարեհաճեն դիմել ուղղակի հրատարակիչին հետևեալ հասցէով. Въ Тифлисъ, Центральную Книжную Торговлю Гр. Сумбатову.

5—5.

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՒՏԻ

ԱՊԱԿԻՆԵՐԻ *գործարանս բացված է և պատրաստում է ՇԻՇԵՐ, ԲԱՆԿԱՆՆԵՐ, ԲԻՇԿԱԿԱՆ ՇԻՇԵՐ, ԹԼՑԻ ԱՄԱՆՆԵՐ, ամէն տեսակ առարկաներ ԼԱՄՊԱՆԵՐԻ համար։*

Նոյնպէս ընդունում է պատուէրներ առանձին ձևերի։

Գործարանիս արտիւնքները ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ծախվում են **ՍԻՄԻԷՆՍԻ և ԳԱԼԿԷԻ** *կանաւօթայում թիֆլիսի երկրորդ Դիմնազիային կից։*

ԲԱՐՕՆ **ՖՕՆ-ԿՈՒԶԵՆԲԱԽ**

3—5



վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող գինը 2 ր. չուշը,* **ՓՈՍՏՈՅՈՎ** *ուղարկված 2 ր. 49 կօպ.* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ*

մի և նոյն տեղը **ԽԻՆԱՑԻ ԻԼՂ**, *մազերը ամրացնելու համար, 1 ր. տանը և վրձին գլխացաւի գէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն*

96—100

Մրջի փողոց, կաթոլիկեական փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻՆՆԱՑԻ ՄԵՐՁԵԼ *ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ* ԿՐԱՎԱՔՆԵՐ 8—30 ր., *չամագաններ 250—25 ր., սակիջաճներ 1. 30—12 ր., սաճենդուկներ ճանապարհի 6—35 ր., մարտաններ (погребцы) 6—25 ր., սամօվարներ 60 կ.—1.25 ֆունտ., կուխոնների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուրմի վալներ մրամօրներ 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլաներ 6—32 ր., ակվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) բէլոլվերի, սիգար Ռինգարդի ֆարթրիջից. պատրոս և թամբաքու կուշնարօվի գնդի պատրօզի. 5,000 ՖՈՒՏՆ ԹԻՑ (չայ) ԵԳ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էվենէմի. կօֆէ էվենէմի և Միխէլսօնի. պեսերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօբկայ դինէվտաճառների, հանքային և դարնջրի (для зельтерскихъ водъ и пива) գուլճուկ (шухъ), պատճեններ սամովարի և չայու, գանակ հանգոյ դանագան ֆարթրիկանների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. դրչակոմներ 1 ր. 80 կ.—5—60 կ. գանակ ջրի 1—60 կ.—12 ր., գանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրիւրօր. մես կարելու մաշինայ. Անգլիական ուէմներ, բրիտանական չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջազոցներ կաֆէի համար, ֆիլտեր—չուր մաքրելու, կրահմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոց, թուղմ փոշուի, կանվերտաներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, դրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիներ, գազմներ սեղանի և չայու ֆրատէ, վարշավի և բրիտանական գուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուխիկէք 45 կ.—5 ր., շամպանիներ ամէն տեսակ 25 կ.—12 ր. ջուխա, պլաստիկաններ վարշավու, ԹՆՋԻՆ ԿԱԼՕՇՆԵՐ, ամէն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխա, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. անդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոկի, պոլի և կարտի համար. չուգքի թիկ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆեչաակէք մարդկերանց և կանանց, պորտմանեներ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գրամատերկինի ապրանքներ, սապոն ամէն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻՎԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։*

վաճառականներին առանձին պայմաններով և գինջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԽԱՑԼ. ՏԷՐ ՆԻԿՈԼՕՍԵԱՆՑԻ *պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

16—180

Մրջի փողոց, կաթոլիկեական փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Марта 1882 года.

Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.

Fonds A.R.A.M

+№ 51 Մարտի 25 (Ապրիլի 6) 1882 Մարտի 25 (Ապրիլի 6) № 51

ՏԱՍՆԱՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեմանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում պրկում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաճախադրութիւնը դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնն ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են հերթականի բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Առաքելանից։ Նամակ խմբագրից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Իտալիա։ Գերմանիա։ Բաւարիա։ Ազգային լուրեր։—ԽԱՒԻՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Արդեօք կօգնի մեզ գիւղատնտեսական ընկերութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

—

Մարտի 12-ին

Ինչպէս յայտնի է, համաձայն եկեղեցական կանոնադրութեան 1031 յոդ. ամէն երեցփոխան պարին լրանալուց յետոյ, պիտի ներկայացնի ընդհանուր ծխական ժողովին, մանրամասնութեամբ իր հաշիւները, ինչպէս վերաբերեալ եկեղեցական գործերին, նոյնպէս էլ եկեղեցական գումարին։

Բայց սրտմտելու կանոնադրութեան մէջ, պարզաբանած չէ թէ ինչ ձեով պիտի հրաւիրի ժողովը և ինչքան մարդով կարող է կայանալ, այս պատճառով վիճաբանութիւնը կանոնաւոր ձև տալու համար այս ժողովներին, կարդադրութիւն է արել ներկայիս եկեղեցական հոգաբարձութիւն 10 յոդուածից, որոնց առաջ է, որ ժողովը լինում է ծանուցմամբ եկեղեցիներում երեք տաճկական օրն օրերին և ժողովը կարող է կայանալ անդամների մի տասներորդականով, կամ 35 մարդով, որովհետև թիւը, կարծեմ, այժմ հասնում է մինչև 350։

Ի հարկէ մինչև այժմ հաճախ այս կանոնին, երեցփոխանները ժողով էին անում, բայց նորերում, չը գիտեմ ինչ հիման վրա, Աստուածամօր և Քարոլիճեն եկեղեցիների երեցփոխանները փոխանակ վերոյիշեալ ձևին հետևելու, տուել են տալիս, մասամբ առաւելչէն, իսկ մասամբ հայհոյելէն հրաւիրագիրներ, թէ՝ մինչև 300 հատ, ինչպէս ասից երեցփոխանը Աստուածամօր եկեղեցու, և տալիս են ժամկոչներին առանց ցուցակի բաժանել։ Ժամկոչները, ինչպէս անկիրթ մարդիկ, բաժանում են անորոշապար ով որ առաջ է գալիս և որոնք ցուցակում չեն և չառելէն չեն տալիս։

Այսպէս կամ այնպէս, նշանակուած օրը ծխականները ժողովում են, գալիս են նոյնպէս ոչ հրաւիրեալները և յայտնում են երեցփոխին իրանց անթաւականութիւնը, որը իրան արդարացնում է, թէ ժամկոչները մեղաւոր են եղել, այս պատճառով սխալ է պատահել։ Պարոնը նոյնպէս մտացել է տալ հրաւիրագիրում, որ իր ծառայութեան ժամանակը լրացել է և թէ պիտի ընտրուի մի նոր երեցփոխան։ Ժողովականները միաձայն վճռեցին, անկանոն հրաւիրման պատճառով փակել ժողովը և նշանակել մեա անգամեան։

Զարմանալին այն է, որ երեցփոխանը զարդացած անձն լինելով, ժամանակը որ երկար ժամանակ կատարել է այլ և այլ պաշտօններ,—ինչպէս նա պիտի անծանօթ լինի այս ձևերի հետ....

Մարտի 4-ին կրկին ժողով եղաւ երեցփոխանների և հաշիւների համար։ Հաշիւները ներկայացնելուց յետոյ, ընտրեցին տրիշ երեցփոխ Աստուածամօր եկեղեցու համար, իսկ Քարոլիճեն եկեղեցու երեցփոխանին յայտնեցին խորին չնորհակալութիւն իր աշխատասիրութեան համար։ Շուտով ծխական ուսումնարանների հոգաբարձութիւնը պիտի ներկայացնի հաստատութիւնաը իր հաշիւները և ծանօթացնի հաստատութիւնը ուսումնարանի ներկայ դրութեան հետ։

Ա.

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳԻՒՆ

—

Թիֆլիս, 23 մարտի

Լոյս տեսաւ «Պաւլիթ բէկի» III-րդ գիրքը։ Ըր կանոնաւոր կրկին ձանձրացնել այն պատուելի պարոնները, որոնք նպատակներին այդ վէպի ստորագրութիւնը, նրա I և II գրքերը ամենայն ուշադրութեամբ ուսումնասիրել պատճառով,—այս անգամ ևս «Պաւլիթ բէկի» III գրքի մէնաձաղուքիւն յանձնելի բացատրութիւն Թիֆլիսի «կենտրոնական պրաւաճառանոցին»։

Ուսուի ինդրում եմ այն պարոններին, որոնք գնել են «Պաւլիթ բէկի» I և II գրքերը, նիթէ կը ցանկային III գիրքը ևս ունենալ, կարող են դիմել յիշեալ պատճառանոցը, որի հասցէն յայտնի է իմ առանձին յայտարարութեամբ։

Բաֆֆի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Շնորհակալութեամբ առացանք գոկտոր Անդրէաս Պրժեսնու մի նոր պիտանի հետազոտութիւն պետրագրաֆիայից «Untersuchung der Vulcanischen Gesteine aus der Gegend von Abu-Zabel» վերնագրով։

—

Բաֆֆիի «Պաւլիթ-բէկ» վէպի երրորդ գիրքը այս օրերս լոյս տեսաւ։ Շնորհակալութեամբ առացանք խմբագրութեան մէջ հեղինակից մի օրինակ իր գրքից։

—

Այս օրերս լոյս տեսաւ Վարդանեանցի տպարանից պ. Թ. Աստվածատրեանցի թարգմանութեամբ Քրիստափոր Շմիդտի «Երեք գրոյց» գրքոյկը։ Այդ գրքի մի օրինակը շնորհակալութեամբ ստացանք թարգմանչից։

—

ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա) քաղաքից ստացանք 46 րուբլ, որ իրանց մէջ հաւաքեցին հետևեալ անձինք։ Գասիկ Մարտիրեան, Պետրոս Զարայեանց և եղբայրք Մարտիրեանց, իւրաքանչիւրը 5 րուբլ, Գալուստ Անդէլոքեանց, Առաքել Ոսկանեանց, Սահակ Աւետեանց, Թէոս Եաղուբեանց, Ղուկաս Ղուկասեանց, Ստեփան Զարեհեանց, Յարութիւն Թիւնեանց, Սահակ Առաքելեանց, իւրաքանչիւր 3 րուբլ, Մարտիր Լալազարեանց, Խալաթ Աւետածատրեանց, Աւագ Աւետեանց, Գասպար Գալաբեանց, Սարգիս Տէր-Յարութիւնեանց, Յօհաննէս Կարապետեանց, Լազար Շիմաւոն տասը, իւրաքանչիւրը 1 րուբլ։ Փոսոի Ծախսը տուեց Արշակ Եաղուբեանց։ Այդ փոխից նախրատու անձինք իմացրած են մեզ 10 րուբլ յատկացնել կ. Պօլսի Գալֆայեան որբանոցին, 10 րուբլ մի օրինակ «Մշակի» ուղարկել ում կամենանք, իսկ 26 րուբլ յանձնում են մեր կարդադրութեանը գործ ածելու ինչ տգետ նպատակի որ մենք կը կամենանք։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են։ «Պ. Ա. Արիևանց խոստանել է ձեր լրագրում այստեղի հայ-աւետարանականների ընթերցարանի մասին։ Հարցը պարզելու համար կասեմ որ իսկապէս հայ-աւետարանականները դեռ մի կազմակերպուած դպրատուն կամ ընթերցարան չունեն, այլ այդ դպրատան կոչուածը մի պահարան է իր միջի 200 հատ հայերէն գրքերով։ Այս գրքերը մասամբ գնուած են, մասամբ ընծայուած։ Դա իսկապէս մի անալքեն դպրատուն է, բաց մեծ մասին մանկական գրքերից բաղկացած։ Գրքեր վերցնողների մէջ կան և հասակաւորներ, որոնք կարողանում են այդտեղ գտնել հայերէն ընթերցանելի գրքեր։ Ամբողջ դպրատունում, որ, ինչպէս ասեցի, բաղկացած է 200 գրքերից, ընդամենը կը գտնվի 30 հատ հոգեւոր բովանդակութեան գրքեր։ Այդ դպրատանից օգտվում են բոլոր կարդուքիւն չունեցողները և դա է դպրատանի արժանաւորութիւնը։ Իսկ ինչ որ վերաբերվում է այդ ընթերցարանի հայ-լուսաւորչականների դպրատանի հետ միացնելուն, դա ի հարկէ, շատ ցանկալի և լաւ միտք է, բայց մեր կարծիքով, դեռ շատ տարաժամ միտք է, քանի որ մեր, հայ-աւետարանականների այդ դպրատունը մի բոլորովին մանուածոյ և դեռ նոր փոքրիկ պահարան է միայն։»

—

Ջեռնաժու պ. Լէնց խնդրում է մեզ յայտնել, որ Զատկի ամբողջ շաբաթը նա ամեն օր ներկա գտնուելու, հայ ուսեալ դասը։» Այդ կէտից պարոն Դ. Քալանթարեանցի առաջարկութիւնը մեծ արժանաւորութիւն ունի, գոնէ էլ։ Բայց բարի ցանկութիւն ունենալը դեռ քիչ է. խօսքը և գործը շատ հեռու են առհասարակ միմեանցից։ Բաւական չէ—մտածողը անել այս ինչ գործի անհրաժեշտութեան վրա, հարկաւոր է նոյնպէս միացնել միջոց գործը առաջ տանելու համար։ Սկզբունքի հետ—այսինքն օգնել դիւղացուն, աշխատել թեթևացնել նորա ծանր ապրուստը—իւրաքանչիւր մտածող անձն կը համաձայնվի։ Ուրիշ բան է, ինչպէս դյուխ բերել մեր ցանկութիւնը. այստեղ կարող են անհամաձայնութիւններ լինել։ Պ. Քալանթարեանցը մասամբ վճռում է երկրորդ կէտը, առաջարկելով մեզ ընկերութեան կանոնադրութեան հետևեալ ծրագիրը։ Թէ որքան բաւականացուցիչ է ծրագիրը, թէ որ աստիճան հետևում է նա իր նպատակին—այդ կը լինի յետագայ առարկում։

Պարզ է թէ ինչ նպատակի պիտի ծառայէ գիւղատնտեսական ընկերութիւնը։ Դրա նպատակը կարելի է բացատրել երեք բառով բարձրացնել գիւղացու կեանքը։ Բայց տեսնենք թէ ինչ է առում հեղինակը։ Նայ անենք կանոնադրութեան առաջի երեսը և կարդանք։

«§ 1. Հայոց գիւղատնտեսական ընկերութեան նպատակն է—նախ՝ հայթհայթել նրան կազմող անդամների համար անհրաժեշտ նիւթական չափ և երկրորդ՝ բուս ձեռնհասութեան մատակարարել հայ գիւղացուն նիւթական և մտաւորական հնարաւոր միջոցներ նրա գիւղատնտեսական արդիւնքը աւելի արդիւնաւոր կացուցանելու համար։» Ուրեմն, ընթերցող, ես պարտական եմ ներողութիւն խնդրել քեզնից, որովհետև կամենում էի մոլորեցնել քեզ. բայց յանցանքը մեծ չէ, ես ներողութեան արժանի եմ, պատճառ ինքս ակամայ սխալվեցայ։ Ինչ չէր իմ գործածը, երբ

Fonds A.R.A.M

յայտնեցին պիտի տայ Արծրունու թատրոնում բոլորովին նոր պրոգրամայով և նոր ստացած ապրանքներով։

—

Լրագրիները հաղորդում են որ երկրորդ փոխառութեան տիրաժի ժամանակ 75,000 գումարը տարաւ յայտնի ռուս գերասան պ. Նէլսկի։

—

Որքան երևելի բժիշկներ ունենք Թիֆլիսում, ապացոյց կարող է լինել հետևեալ իրողութիւնը։ Մի տիկին Կ. ամիսներով հիւանդ է լինում, նրան բժշկում են Թիֆլիսի ամենայայտնի բժիշկները պ. պ. Գ., Կր., և Մ., տալիս են զանազան դեղեր, ամենատաճանելի և վտանգաւոր օպէրացիաներ են անում, իսկ երբ տիկինը ձանձրանալով այդ բժիշկներից և դրեթէ մահվանը հասցրած, կանչում է Կ.—նանց բժշկին, յայտնվում է որ նա վեց ամիս է արդէն որ յղի էր և Թիֆլիսի երևելի բժիշկները իրանց բժշկութեամբ սպանել են երեխային, չը կասկածելով անգամ որ տիկինը յղի էր։ Բաղդատարար հիւանդը այս օրերս վիժեց մեռած երեխային, որ նա մեռած դրութեան մէջ ամիսներով մեն էր ածում։ Այդ տապաստիլի իրողութեան ճշդութեան համար, որ ցոյց է տալիս դեպքօմատոր և գերմանական յայտնի տպագրատներ կրոզ երևելի բժիշկների կատարեալ տգիտութիւնը, մենք պատասխանատու ենք։ Պ. պ. Գ. և Կր. ամենաընդունված և մոդային բժիշկներ են Թիֆլիսում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

—

Իտալական պատգամաւորների ժողովի մէջ մարտի 20-ին պատգամաւոր Մասարի հարցս առաջարկեց արտաքին գործերի մինիստրին իտալական և ֆրանսիական բանակութիւնների կապի մասին Սալենդրայի մէջ։ Մասարի մեկնութիւններ պահանջից ինչպէս սկսած կապի հանգամանքների, նոյնպէս և այն միջոցների վերաբերութեամբ, որոնց գործադրում է արտաքին գործերի մինիստրը արտաքին գործերի միջև ապրող իտալացիներին պաշտպանելու համար։ Արտաքին գործերի մինիստր Մանչինի, պատասխանելով այդ հարցին, յայտնեց, որ Սալենդրայի մէջ Ֆրանսիացի բանակութիւնները յարձակվեցին իտալացի բանակութիւնների վրա, որովհետև վերջինները հրաժարվեցան մանակցել նրանց կազմած գործադարձարմանը։ Կաւի ժամանակ վիրաւորվեցան մի քանի իտալացիներ, որոնցից մեկը վերջը վախճանվեցաւ Մարսելի հիւանդանոցում։ Սալենդրայի մէջ պատահած անկարգութիւնների պատճառով Մանչինի դիմել է Ֆրանսիական կառավարութեանը, որ անյապաղ հրամայել է գաւառականի և վարչական քննութիւն անել մեղաւորներին գտնելու համար։ Քննութեան հետևանքները դեռ ևս հաղորդված չեն իտալական մինիստրութեանը։ Ֆրանսիական առաջին մինիստրը հաղորդել է, որ եռանդուն միջոցներ են գործադրված ապագայում այդպիսի անկարգութիւնների առաջն առնելու և իտալական բանակութիւնները ապահովելու համար։ Նոյն բանը յայտնում է և Ֆրանսիական դեսպանը Հռոմում։ Ինչ կը վերաբերի ցունիսի մէջ ապրող իտալացիների շահերի պաշտպանութեանը, որ նոյնպես յիշված էր հարցի մէջ, այժմեան պայմանները ի նկատի ունենալով, միայն իտալացիների շահերը չեն ճեռավում։ Ամենը բանակութեան են սպասում և այդ բանակութիւնը անկասկած կը տրվի։ Պատգամաւորների ժողովը կարող է հաւանացած լինել, որ մինիստրը կարելութեան չափ աշխատում է ապահովել և պաշտպանել արտասահմանում ապրող իտալացիներին։ Հարկաւոր եղած դէպքում իտալական կառավարութիւնը բանականութիւն կը պահանջէ և այդ պահանջի կատարման համար այնպիսի միջոցներ կը գործադրէ, որոնք չեն հակասում միջազգային սովորութիւններին և քաղաքական կանոններին։ Պ. Մասարի ընդհակալութիւն յայտնեց արտաքին գործերի մինիստրին այդ բացատրութիւնների համար։

—

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Օրերում իշխան Բիսմարկ բանական նըշանաւոր և անապատելի անաջողութեան հանդիպեցաւ, գրում է „Голосъ“ լրագիրը։ Իր անտեսական և ֆինանսական վերանորոգութիւններին գիտական նշանակութիւն տալու համար Բիսմարկի ստեղծած անտեսական խորհուրդը 33 ձայների մեծամասնութեամբ 31-ի դէմ մերժեց նրա օրինագիծը ծխախոտի մենաւաճառութեան մասին։ Այդ գործը ամենքի համար անապատելի էր։ Ամենքը հաւատացած էին, որ օրինագիծը կընդունվի անտեսական խորհրդից և հասատատ ազբիւրներից հաղորդում էին, որ նրա հակառակորդների թիւը միայն 25-ի է հասնում։ Լրագիրները չէին կարող հասկանալ, թէ ինչ էր պատճառը, որ մեծամասնութիւնը միացաւ ընդդիմադրականների հետ։

Այդ անդքը աւելի մեծ տպաւորութիւն գործեց այն պատճառով, որ իշխան Բիսմարկ յոյս ունէր, թէ անտեսական խորհուրդը նրան ձեռնտու միջոց կը կայացնէ և այդ միջոցի օգնութեամբ նա կարող էր ազդել պարլամենտի վրա, որ պէտք է գումարվի մայիսին։ Ըստ պէտք է մոռանալ, որ գերմանական անտեսական խորհուրդը ընտրողական հիմնարկութիւն չէ, այլ նրա անդամների մեծամասնութիւնը կառավարութենից է նշանակվում։ Այս պայմանները աչքի առաջ ունենալով, անտեսական խորհրդի հաւանութիւնը իշխան Բիսմարկի նախագիծներին չէ կարող մեծ նշանակութիւն ունենալ հասարակութեան համար, մինչդեռ նրա ընդդիմադրութիւնը չափազանց մեծ նշանակութիւն է ստանում, ապացուցանելով, որ մինչև անգամ կառավարչական տեսակէտից կատարելապէս „բարեմիտ“ մարդիկ չեն համաձայնվում օգնել պետական կանոնների անտեսական դիտաւորութիւններին։ Ծխախոտի մենաւաճառութեան օրինագիծը այսուհետև ոչնչացրած կարելի է համարել և նրան չի ազատի անտեսական խորհրդի մինչև անդամ երկրորդ քուէարկութիւնը, որ բիսմարկ աշխատում է կայացնել, յուսալով, թէ առաջին քուէարկութեան ժամանակ բացակայ եղած խորհրդի 9 անդամները երկրորդ քուէարկութեան ժամանակ ձայն կը տան յօդուտ օրինագծի։

Իշխան Բիսմարկի մտադրված ծխախոտի մենաւաճառութիւնը զզուանք է յարուցանում ամբողջ Գերմանիայի մէջ, ապացուցանելով ընկրկի արտիւնաբերութեան ամենամագնական ձիւղերից մեկը։ Այդ զզուանքը ապացուցանելու համար կարելի է առաջ բերել այն փաստը, որ նոյն օրը, երբ անտեսական խորհուրդը քուէարկում էր ծխախոտի օրինագիծը, Խոզենի պատգամաւորների ժողովը Ֆինանսների մինիստրի ճառից յետոյ միաձայն վճիռ կայացրեց ծխախոտի մենաւաճառութեան դէմ։ Դա երրորդ վճիռն է, որ կայացնում են գերմանական երկրորդական պետութիւնների պատգամաւորների ժողովները։ Բացի Խոզենի պատգամաւորների ժողովից առաջ ծխախոտի մենաւաճառութեան դէմ յայտնվեցան Բաւարիայի և Սախսոնիայի պատգամաւորները։ Գերմանական այժմեան պարլամենտը անկասկած չի բողոքի այդ վճիռների դէմ և իշխան Բիսմարկ երևի անկարող կը լինի իրագործել մտադրած փերանորոգութիւնը։ Ասում են, որ նա յոյս ունի գաթնել իր նպատակին հասնել աստիճ բարձրացնելով ծխախոտի հարկը, որի համար անտեսական խորհուրդը համաձայնութիւն տուեց 18 ձայների մեծամասնութեամբ 14-ի դէմ։ Բայց հարկ թէ այդ գործն էլ աջողվի, որովհետև ծխախոտի հարկի բարձրացնելը երևի նոյնպէս կը մերժվի գերմանական պարլամենտից, որովհետև նա միաձայն է ծխախոտի արտիւնաբերութեան համար։

Այդպիսով պարզվում է, որ իշխան Բիսմարկ հարկ թէ կարողանայ իրագործել իր անտեսական դիտաւորութիւնները, մինչև որ քաղաքական անտեսութեան հետ աչքի յարաբերութիւն չունեցող մի որ և է անցք չը վերացնէ նրան դիկտատորական այն

